ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 Թ. ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

Ականատես
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Երևան 2021

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թ. հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց

Սույն զեկույցը ներկայացնում է 2021 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած ԱԺ արտահերթ ընտրություններին «Ականատես» դիտորդական նախաձեռնության իրականացրած երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության արդյունքները:

2021 թ.-ի հունիսի 20-ի ԱԺ արտահերթ ընտրությունների դիտորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի, Մարշալի գերմանական ֆոնդի սևծովյան համագործակցության հիմնադրամի, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության և Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ: Ձայների զուգահեռ հաշվարկն իրականացվել է Ազգային ժողովրդավարական ինստիտուտի տեխնիկական աջակցությամբ:

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու են «Ականատես» դիտորդական առաքելության անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուների տեսակետները:

Դիտորդական առաքելությունն իր երախտագիտությունն է արտահայտում ընտրությունների դիտարկման գործընթացում ներգրավված դիտորդներին, համակարգողներին, իրավաբաններին և այլ անձանց, որոնց ակտիվ և նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել արդյունավետ և որակյալ դիտորդական առաքելություն:

ԵՐԵՎԱՆ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 5

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 16

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 19

Երկարաժամկետ դիտորդություն 19

Կարճաժամկետ դիտորդություն 20

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 21

Ընտրական հանձնաժողովների աշխատանք 21

Կենտրոնական ընտրական հանձնաժողով 21

Նիստերի դիտարկում 22

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցում 24

Դիտորդական առաքելությունների գրանցում 25

Տարածքային ընտրական հանձնաժողովներ 26

Հանձնաժողովների կազմ 28

Անկախության սկզբունքի պահպանում 29

Դիմում-բողոքների քննություն 30

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ 31

Վերապատրաստման դասընթացներ 32

Նախընտրական քարոզարշավ 32

Քարոզչության ժամանակահատված 32

Ընտրական շտաբներ 33

Քարոզչանյութեր 34

Միջոցառումներ 38

Վարչական ռեսուրս 38

Կաշառք և «բարեգործություն» 42

Ատելության խոսույթ 44

Դիտորդի իրավունքների խոչընդոտում 47

Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորում 47
Կուսակցությունների գույքի և եկամուտների մասին հայտարարագրեր 48
Նախընտրական հիմնադրամի ձևավորում 50
Նախընտրական հիմնադրամից ծախսեր 51
Չհայտարարագրվող ծախսեր 54
Պետական վերահսկողություն 56
Քվեարկության օր 57
Նախապատրաստում 58
Քվեարկություն 58
Արդյունքների ամփոփում 59
Ընտրական փաստաթղթերի ու պարագաների պարկի ընդունում, քվեարկության արդյունքների ամփոփում 60
Ընտրողների կողմից ստորագրված ցուցակների սկանավորում 61
Արդյունքների կանխատեսումը և մասնակցության ցուցանիշներն ըստ ՀՀՀ-ի 62
Հետընտրական գործընթացներ 64
Վերահաշվարկ 64
Բողոքարկում 64
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 65
ՀԱՎԵԼՎԱԾ. Քվեարկության օրը արձանագրված էական խախտումների նկարագրությունը 73

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԺԱԱ	Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
ԻԶՊՀ	Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՁՁՀ	Ձայների զուգահեռ հաշվարկ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՁՕԸ	Ձրօգտագործողների ընկերություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎՎԾ	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
ՏԸՀ	Տարածքային ընտրական հանձնաժողով
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՔՊԿ	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնադրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) ՀԿ-ների, «Ռեստարտ» երիտասարդական նախաձեռնության (ներկայում՝ գիտակրթական հիմնադրամ) և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի կողմից 2018 թ.-ի օգոստոսին:

Առաքելության նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը՝ ՀՀ օրենսդրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան, ընտրական գործընթացների օրինավորությանը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողությանը:

«Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնք կարող են մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ:

Առաքելության անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջազգային դիտորդական առաքելությունների Վրաստանում, Շվեդիայում, Չեխիայում, Ուկրաինայում, Մոլդովայում և այլ երկրներում:

https://www.facebook.com/akanatesditord

հեռ.՝ + 374 096 965007

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) հիմնադրվել է 2000 թ.-ին Երևանում: ԹԻՀԿ առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու և ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում: Կազմակերպությունը միջազգային դիտորդական ցանցերի, մասնավորապես «Ընտրությունները դիտարկող կազմակերպությունների եվրոպական ցանցի» (ENEMO), «Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի» (EPDE), «Տեղական դիտորդների համաշխարհային ցանցի» (GNDEM) անդամ է:

www.transparency.am
ք. Երևան, Սարյան 12
+374 10569589

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ) հիմնադրվել է 1999 թ.-ին Գյումրիում: ԺԱԱ առաքելությունն է արտահայտման, մամուլի և տեղեկատվության ազատության պաշտպանությունը: Կազմակերպությունը դիտորդություն իրականացնում է 2009 թ.-ից:

www.asparez.am
ք. Գյումրի, Պուշկինի 96
+374 31250622

«Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամը ստեղծվել է 2019 թ.-ին Երևանում: Նախաձեռնությունը ստեղծվել է մի խումբ ուսանողների կողմից՝ բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով՝ ապահովելու առավել հարմարավետ, կրթական առումով ավելի առաջադեմ բուհեր:

https://www.facebook.com/restartfoundation
ք. Երևան, Բայրոնի 8
+374 077230395

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը (ԻԶՊՀ) հիմնադրվել է 2018 թ.-ին Երևանում: Հիմնադրամի գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանությանը և իրավական դաշտի բարեփոխումներին:

https://www.facebook.com/LDPFoundation/
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
+ 374 99515600

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2021 թ.-ի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Ազգային ժողովի (ԱԺ) արտահերթ ընտրություններին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն՝ ընտրությունների որակի վերաբերյալ համապարփակ և համակարգված տեղեկություններ հավաքելու նպատակով:

Առաքելությունը գնահատել է օրենքով սահմանված նախընտրական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածի, նախընտրական քարոզարշավի, դրա ֆինանսավորման, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների համապատասխանությունը ՀՀ ընտրական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, ինչպես նաև գործընթացների հնարավոր ռիսկերը ազատ, թափանցիկ և մրցակցային ընտրություններ անցկացնելու տեսանկյունից:

Մեթոդաբանություն

«Ականատես» դիտորդական առաքելության 60 երկարաժամկետ դիտորդ 2021 թ.-ի մայիսի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում դիտարկել է նախընտրական գործընթացները հանրապետության բոլոր՝ 38 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում: Տվյալները հավաքվել են գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, պաշտոնական հարցումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Ոչ պաշտոնական տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով ստացված տվյալները դիտորդների կողմից ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Դիտորդները կատարել են 180-ից ավել այցելություն տարածքային ընտրական հանձնաժողովներ և դիտարկել դրանց 41 նիստ: Եղել է ավելի քան 380 այցելություն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրասենյակներ և նախընտրական շտաբներ, 50-ից ավել հանդիպում լրագրողների հետ, շուրջ 75 հանդիպում հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ նաև ՀԿ) ներկայացուցիչների հետ: Դիտորդները հանդիպել են քաղաքացիների հետ 528 համայնքում և մասնակցել ավելի քան 250 նախընտրական միջոցառումների/հանդիպումների:

2021 թ.-ի հունիսի 20-ին «Ականատես» առաքելությունը ներգրավել է 580 կարճաժամկետ դիտորդների, որոնք դիտարկել են քվեարկությանն առնչվող գործընթացները Հայաստանի ողջ տարածքում վիճակագրորեն ներկայացուցչական ընտրանքով առանձնացված 300 ընտրատեղամասում: Դիտարկումը ներառել է ձայների զուգահեռ հաշվարկ (ՁՁՀ), որը, հիմնված լինելով պատահական ներկայացուցչական ընտրանքի վրա, հնարավորություն է տալիս վիճակագրական եղանակով չափելու քվեարկության օրվա գործընթացների որակը, ներառյալ ինչպես տեղամասերի բացումը, քվեարկությունը, փակումը և արդյունքների ամփոփումը, այնպես էլ քվեների բաշխումը: Եվ թեև դիտորդական առաքելությունը չի ծածկում երկրի բոլոր

ընտրական տեղամասերը, ՁՁՀ մեթոդի կիրառումը թույլ է տալիս խոսել ընտրական գործընթացի և ստացված արդյունքների մասին համապետական մակարդակով:

Ի լրումն տեղամասերում դիտորդների տեղակայման՝ «Ականատես»-ը ներգրավել է շրջիկ դիտորդներից բաղկացած 22 խմբերի, որոնք այցելել են ընտրանքից դուրս գտնվող ավելի քան 150 ընտրատեղամաս՝ հսկելով իրավիճակը դրանց ներսում և հարակից տարածքներում, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական շտաբների մոտակայքում:

Ընտրատեղամասերում քվեարկության ամփոփման նիստին զուգահեռ՝ ժամը 20:00-ից սկսած, դիտորդները հսկել են թվով 33 տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը՝ հետևելով տեղամասերից ընտրական փաստաթղթերի ու պարագաների պարկերի ընդունման, ընտրատեղամասերում ամփոփված քվեարկության արդյունքների աղյուսակավորման, ընտրողների ցուցակների սկանավորման գործընթացին: Հետընտրական ժամանակահատվածում դիտորդներն ուսումնասիրել են տարածքային ընտրական հանձնաժողովներում արդյունքների վերահաշվարկի և ընտրական բողոքների քննության ընթացքը:

Ընտրական գործընթացներում արձանագրված էական խախտումների հիման վրա կազմվել և ներկայացվել են բողոքներ ընտրական, դատական և իրավապահ մարմիններին:

Դիտարկման արդյունքներ

2021 թ.-ի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններն ընթացել են աննախադեպ մրցակցային պայմաններում և նույնպիսի լարվածության մթնոլորտում: Ընտրական վարչարարությունը և գործընթացները հիմնականում համապատասխանել են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ընթացակարգերին և ապահովել են քաղաքացիների ազատ կամարտահայտումը: Այդուհանդերձ, արձանագրվել են մի շարք խնդիրներ և ռիսկային գործոններ՝ երբեմն պայմանավորված ընտրական օրենսդրության բացերով:

Նախընտրական փուլ

2021 թ.-ի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական փուլն ընդհանուր առմամբ ընթացել է մրցակցային պայմաններում, սակայն այս ընտրությունն աչքի է ընկել ատելության խոսքի ծայրահեղ դրսևորումներով:

Ընտրական հանձնաժողովներ

Ընտրական հանձնաժողովների աշխատանքները հիմնականում ընթացել են սահուն, առանց խնդիրների:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն (ԿԸՀ) ընդհանուր առմամբ արդյունավետ է գործել՝ պատշաճ իրականացնելով օրենսդրությամբ սահմանված պարտականությունները: ԿԸՀ նոր

կայքը նախկինի համեմատ առավել հաջող է ապահովել ընտրական գործընթացների թափանցիկությունը: Դեռևս խնդիր է կայքում առկա տվյալների որոշ մասի ներկայացումը ոչ *բաց տվյալների* (open data) ձևաչափով, ինչը դժվարացնում է դրանց ստացումը, մշակումն ու վերլուծությունը: Որոշ թերացումներ են նկատվել նիստերի հեռարձակման և դրանց տեսագրությունները կայքում տեղադրելու առումով:

Հանձնաժողովի նիստերը շարունակում են ընթանալ առանց բովանդակային քննարկումների և միաձայն քվեարկության պայմաններում՝ աննշան բացառություններով: Հանձնաժողովի մի շարք որոշումներ բավարար վերլուծված և պատճառաբանված չեն եղել, ինչի հետևանքով որոշ քաղաքական ուժերի կողմից վիճարկվել են դատարանում: Շարունակում են խնդրահարույց լինել դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացվող դիմում-բողոքների ընդունումը և քննությունը:

Արտահերթ խորհրդարանական ընտրություններին գրանցված քաղաքական ուժերի թիվն աննախադեպ մեծ էր և որոշ չափով ուռճացված: Ընտրություններին մասնակցող 25 կուսակցություններից միայն 4-ի նախընտրական ծրագրերն են հրապարակվել ԿԸՀ կայքում, 12-ը չունեն սեփական կայքեր, և նրանց գաղափարախոսությունն ու ծրագրերը պատշաճ կերպով հասանելի չէին ընտրողների համար:

Դիտորդական կազմակերպությունների հավատարմագրման ընթացակարգերում նկատելի են մի շարք խնդիրներ, որոնք գործնականում չեն երաշխավորում ընտրական գործընթացների հանրային վերահսկողության անկողմնակալությունը, ուստի և կարող են կասկածի տակ դնել դրանց գնահատականների արժանահավատությունը:

Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքներն ընթացել են բնականոն հունով՝ առանց միջադեպերի և խախտումների: ԿԸՀ նոր կայքում հատուկ բաժին է նախատեսվել տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեությունը ներկայացնելու համար, սակայն այն դեռևս չի պարունակում անհրաժեշտ տեղեկությունները: Շարունակում է մտահոգիչ մնալ որոշ տարածքային ընտրական հանձնաժողովների շենքային, տեխնիկական, հաղորդակցության և արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ այլ պայմանների բացակայությունը:

Նկատվել է, որ մի շարք հանձնաժողովի անդամներ զուգահեռաբար զբաղեցնում են պետական կառավարման ոլորտի այլ պաշտոններ, ինչը պարունակում է վարչական ռեսուրսի չարաշահման ռիսկեր: Խնդրահարույց է տարածքային ընտրական հանձնաժողովներում համակարգիչ մուտքագրելու պարտականություն ունեցող ԿԸՀ աշխատակիցների ներգրավումը, ինչի հետևանքով փաստացի աղճատվում է այս հանձնաժողովների անկախության սկզբունքի իրացումը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստման դասընթացների որակն ընդհանուր առմամբ դրական է գնահատվել դիտորդների կողմից: Այդուհանդերձ, տեղամասային ընտրական հանձնաժողովների կարողությունների և

հմտությունների բացերը, որոնք դրսևորվեցին քվեարկության ընթացքում, հիմք են տալիս ենթադրելու, որ հանձնաժողովների անդամներն ունեն լրացուցիչ վերապատրաստման կարիք:

Նախընտրական քարոզարշավ

Նախընտրական քարոզչությունը փաստացի սկսվել է պաշտոնական մեկնարկից՝ 2021 թ.-ի հունիսի 7-ից մոտ 2.5 ամիս առաջ: Տվյալ ժամանակահատվածում հավասար մրցակցության կանոնակարգումների բացակայության պատճառով այն եղել է բավականին հախուռն և ի սկզբանե ուղեկցվել վարչական ռեսուրսի չարաշահման երևույթներով:

Նախընտրական ժամանակահատվածում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր չսահմանված վայրերում քարոզչական նյութերի տեղադրման հետ կապված՝ հաճախ ստեղծելով խտրական պայմաններ և փաստացի աշխատելով որոշ քաղաքական ուժերի օգտին:

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում դիտարկվել են վարչական ռեսուրսի չարաշահման, հավաքներին ու միջոցառումներին մասնակցելուն կամ մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու, վարչական լծակների միջոցով ընտրողի ազատ կամքի իրականացումը խոչընդոտելու բազմաթիվ դրսևորումներ, ընդ որում՝ տարբեր քաղաքական ուժերի կողմից: Նախընտրական միջոցառումների ընթացքում բազմիցս նկատվել է պաշտոնատար անձանց, դպրոցների, մշակույթի կենտրոնների ներկայացուցիչների ոչ իրավաչափ մասնակցություն:

Նախընտրական ժամանակահատվածում դիտարկվել է բարեգործական գործունեության ակտիվացում՝ ակնհայտորեն միտված ընտրողների որոշման վրա ներգործելուն:

Քարոզարշավի ընթացքում ատելության բառապաշարը հասել է ծայրահեղ վտանգավոր ծավալների, ընդ որում՝ այն լրացուցիչ սնուցվել է քաղաքական ուժերի դեմ երրորդ անձանց կողմից իրականացվող հակաքարոզչությամբ: Թշնամանքի և ատելության տարածման համատեքստում սովորականից ավելի հաճախակի են եղել մրցակիցների քարոզչանյութերի կամ գույքի դիտավորյալ վնասման դեպքերը:

Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորում

Նախընտրական քարոզչության ֆինանսավորմանն առնչվող կարգավորումներն ու պրակտիկան պատշաճ չեն ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ֆինանսների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և արդարացի մրցապայքարը: Ֆինանսական հաշվետվություններում չեն արտացոլվել այնպիսի խոշոր ծախսեր, ինչպիսիք են ընտրական շտաբների գրասենյակային ծախսերը, քարոզարշավում տարբեր գործառույթներով ներգրավված անձանց վարձատրությունը, տրանսպորտային, միջոցառումների կազմակերպման և մի շարք այլ ծախսեր: Բացի դրանից՝ կանոնակարգված չէ երրորդ անձանց ֆինանսական աջակցությունը, ինչը թույլ է տալիս քարոզարշավի ֆինանսավորման իրական պատկերի աղավաղում:

Ընտրություններին մասնակցող տարբեր քաղաքական ուժերի նախընտրական ծախսերի վերլուծությունը բացահայտում է դրանց միջև առկա հսկայական տարբերությունները: Ի լրումն դրա՝ նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածից դուրս վարչական ռեսուրսի կիրառումը և երրորդ անձանց կողմից իրականացվող՝ սահմանափակումների ու հաշվետվողականության չենթարկվող քարոզչության հնարավորությունը ի չիք են դարձնում նախընտրական քարոզչության համար օրենքով սահմանված՝ հավասար մրցակցության ապահովման երաշխիքները:

Պետական վերահսկողություն իրականացնող մարմնի գործիքակազմը և պրակտիկան բավարար չեն՝ ապահովելու պատշաճ պետական վերահսկողություն նախընտրական քարոզարշավի, ինչպես նաև կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ:

Քվեարկության օր

«Ականատես»-ի դիտարկման համաձայն՝ քվեարկության օրն ընդհանուր առմամբ անցել է քաղաքացիների շահագրգիռ և ակտիվ մասնակցության պայմաններում:

Քվեարկության նախապատրաստման և տեղամասերի բացման գործընթացը հիմնականում կազմակերպվել է սահմանված ընթացակարգերին համապատասխան, առանց լուրջ խախտումների:

Քվեարկությունը հիմնականում ընթացել է խաղաղ, ընտրող քաղաքացիների լայն ու շահագրգիռ մասնակցությամբ: Գործընթացները մեծամասամբ եղել են կազմակերպված և օրենքին համահունչ: Որոշ տեղամասերում նկատվել է լարվածություն՝ հիմնականում կողմնակի անձանց ներկայության, տեղամասերում առանձին կուսակցությունների վստահված անձանց թույլատրելի քանակի գերազանցման, ուղղորդումների և քվեարկության վերահսկողության դեպքերի հետ կապված:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքն ընդհանուր առմամբ համապատասխանել է օրենքով սահմանված գործընթացներին: Տարածքային ընտրական հանձնաժողովներում էական խնդիրներ չեն արձանագրվել, և հետընտրական գործընթացների կազմակերպումը հիմնականում դրական է գնահատվել դիտորդների կողմից:

Ընտրատեղամասերից ընտրական փաստաթղթերի ու պարագաների պարկերի՝ տարածքային ընտրական հանձնաժողովներ հանձնման գործընթացը մեծամասամբ եղել է սահուն, սակայն մի քանի հանձնաժողովներում արձանագրվել են խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերել են ընտրական փաստաթղթերի պարկի վրա ստորագրությունների բացակայությանը և պատշաճ փակված չլինելուն:

Քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների սկանավորման գործընթացի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Դիտորդների աշխատանքի խոչընդոտման, բռնության, ճնշման կամ սպառնալիքի դեպքեր հիմնականում չեն արձանագրվել՝ բացառությամբ մեկ տարածքային ընտրական հանձնաժողովի:

Ձայների զուգահեռ հաշվարկի համաձայն՝ դիտորդներից ստացած տվյալների վիճակագրական վերլուծությամբ հիմնականում հաստատվել են ԿԸՀ-ի հրապարակած արդյունքները և այդպիսով՝ նաև դրանց արժանահավատությունը:

Հետընտրական գործընթացներ

Դիտարկված 5 տարածքային ընտրական հանձնաժողովներում արդյունքների վերահաշվարկի գործընթացներում խախտումներ չեն արձանագրվել:

«Ականատես»-ի կողմից հետընտրական ժամանակահատվածում ներկայացվել է.

- 20 դիմում թվով 20 տարածքային ընտրական հանձնաժողովներ՝ ընդհանուր 56 ընտրախախտումների վերաբերյալ,
- 5 բողոք ԿԸՀ՝ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների վերաբերյալ, և առանձին մեկ դիմում՝ տեղամասային հանձնաժողովների անդամների՝ ընթացակարգերից անտեղյակությամբ պայմանավորված խախտումների վերաբերյալ,
- 1 հայցադիմում ՀՀ վարչական դատարան՝ դիտորդի գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում չարձանագրելու հիմքով հանձնաժողովի քարտուղարին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով,
- 1 դիմում ՀՀ գլխավոր դատախազություն՝ թվով 21 միջադեպերի վերաբերյալ, որոնք պարունակել են ենթադրյալ հանցագործության հատկանիշներ:

Ինչպես տարածքային ընտրական հանձնաժողովների, այնպես էլ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հերթական անգամ դիտորդական կազմակերպությունները չեն ճանաչվել որպես դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, և ներկայացված առանձին խախտումների առնչությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել:

Վարչական դատարան և իրավապահ մարմիններ ներկայացված դիմում-բողոքների մի մասի քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Առաջարկություններ[1]

2021 թ.-ի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտարկման շնորհիվ բացահայտված խնդիրների վերլուծության արդյունքում «Ականատես» դիտորդական

[1] Սույն զեկույցում բերված առաջարկությունները չեն ներառում 2021 թվականի մայիսի 7-ին ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները:

առաքելությունն առաջարկում է վերանայել ընտրական օրենսդրությունը, ինչպես նաև ընտրությունների կազմակերպման և անցկացման պրակտիկան ու մոտեցումները: Մասնավորապես հարկավոր է.

Ընտրական հանձնաժողովներ

- վերանայել տարածքային հանձնաժողովների ձևավորման կարգը, հատկացվող ռեսուրսները՝ ծանրաբեռնվածության նվազման հանգամանքը հաշվի առնելով, ինչպես նաև աշխատանքային պայմանները՝ ապահովելու վերջիններիս անկախությունը և պրոֆեսիոնալիզմը.
- վերանայել տեղամասային հանձնաժողովների ձևավորման կարգը՝ ապահովելու որակյալ, անկողմնակալ և պատասխանատու աշխատանք.

Կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ)

- ձևակերպել պահանջներ՝ ապահովելու կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կայացման նախադրյալները, գաղափարական զարգացման հենքը, թափանցիկ և հաշվետու գործունեությունը.
- նպաստել ձևավորվող խորհրդարանի առավելագույն ներկայացուցչականությանը.

Ընտրողների ցուցակներ

- վերջնականապես ճշգրտել ու հստակեցնել ընտրողների հասցեները, ապահովել բոլոր տեղամասերում ընտրողների տվյալների համադրումը՝ բազմակի քվեարկությունը ՀՀ ողջ տարածքում բացառելու նպատակով.

Դիտորդների և ՁԼՄ-ների հավատարմագրում

- խստացնել դիտորդական կազմակերպությունների հավատարմագրման պահանջների նկատմամբ վերահսկողությունը՝ ապահովելու հանրային վերահսկողության քաղաքական անկողմնակալությունը.

Նախընտրական քարոզարշավ

- սահմանել «նախընտրական քարոզարշավ» եզրույթը՝ ներառելով քաղաքական ուժերի կողմից իրականացվող միջոցառումների ողջ համալիրը.
- խստացնել քարոզչական նյութեր տարածելու կանոնակարգումները, ամրապնդել հավասար մրցակցության ապահովման երաշխիքները և ընդլայնել ծախսերի թափանցիկության նկատմամբ հսկողության հնարավորությունը.

Վարչական ռեսուրս

- խստացնել նախընտրական քարոզչության իրականացմանն առնչվող սահմանափակումները պաշտոնատար անձանց համար.

Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորում

- վերանայել կուսակցությունների հաշվետվողականության բովանդակային պահանջները, պարբերականությունը և ձևաչափը.

Երրորդ անձանց ներգրավման կարգավորում

- նախատեսել նախընտրական քարոզարշավում ներգրավվող երրորդ անձանց կողմից իրականացվող ծախսերի սահմանափակումներ և հաշվետվողականություն.

Վերահսկիչ-վերստուգիչ գործառույթ

- պետության վերահսկիչ-վերստուգիչ գործառույթն ընդլայնել և հստակեցնել համապատասխան եզրակացությունների նկատմամբ բովանդակային պահանջները.

Քվեարկության օրվա գործընթացներ

- ձեռնարկել գործուն քայլեր՝ երաշխավորելու բոլոր տեղամասերի մատչելիությունը տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար.
- վերանայել դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքները սահմանափակող կարգավորումները.

Քվեարկության արդյունքների ամփոփում

- նախատեսել մեխանիզմ, որով ընտրական հանձնաժողովները իրավապահ մարմիններից կստանան անհրաժեշտ տեղեկատվություն քրեական վարույթների նյութերից.

Բողոքարկում

- ճանաչել դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների և ընտրական գործընթացներում օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ վարույթներով.
- դիտորդների, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և քաղաքացիների համար սահմանել համապատասխան տեղամասերում քվեարկության արդյունքները վիճարկելու իրավունք.
- խթանել բողոքարկմանն առնչվող վարչարարությունը՝ ամրագրելով էլեկտրոնային ստորագրությամբ դիմում-բողոքներ ընդունելու հնարավորությունը, վերացնելով ընտրական բոլոր գործընթացներին առնչվող հայցերով պետական տուրքի վճարման

պահանջը.

- վերանայել բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին և ընթացակարգին վերաբերող իրավակարգավորումները՝ ապահովելու դրանց նպատակին ծառայելու հիմքերը.

Ընտրական գործընթացների թափանցիկություն

- կատարելագործել ԿԸՀ կայքը՝ առավել թափանցիկ դարձնելով տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը և հնարավորինս *բաց տվյալների* ձևաչափով հրապարակելով վերաբերելի տեղեկատվությունը.
- առավել արդյունավետ դարձնել քվեարկության գործընթացի տեսանկարահանման, հեռաձակման և տեսանյութերի հասանելիությանն առնչվող պայմանները և հնարավորությունները.

Իրավապահ մարմիններ

- ապահովել, որ իրավապահ մարմինները հնարավորինս սեղմ ժամկետներում պարզեն ընտրական հանցագործությունների կատարման փաստը, ծավալները և դրանց առնչվող նյութերը փոխանցեն իրավասու մարմիններին՝ ընտրական խախտումների քննության համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թ.-ի հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ նաև ՀՀ) տեղի ունեցան Ազգային ժողովի (այսուհետ՝ նաև ԱԺ) արտահերթ ընտրություններ: Ընտրություններն անցկացվեցին 2020 թ.-ի Արցախյան պատերազմի հետևանքով ձևավորված քաղաքական ճգնաժամի, տնտեսական և սոցիալական բարդ պայմաններում:

Ընտրությունների նշանակման օրվանից ոչ շատ վաղ՝ 2021 թ.-ի ապրիլի 1-ին, խորհրդարանը 82 կողմ ձայնով փոփոխություն կատարեց ՀՀ ընտրական օրենսգրքում, որով անցում կատարվեց ամբողջական համամասնական ընտրակարգի: Այն նախատեսվում էր իրականացնել կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ներկայացվող ցուցակների հիման վրա: Հարկ է նշել, որ փոփոխությունների նախագիծը հիմնականում արժանացել էր Վենետիկի հանձնաժողովի հավանությանը[2]:

2021 թ.-ի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու հայտ էին ներկայացրել 22 կուսակցություն և 4 կուսակցությունների դաշինք՝

1. «Արդար Հայաստան» կուսակցություն,
2. «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն,
3. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (այսուհետ՝ նաև ՔՊԿ) ,
4. «Ձարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն,
5. «Ազատություն» կուսակցություն,
6. «Պատիվ ունեմ» դաշինք,
7. «Միասնական հայրենիք» կուսակցություն,
8. «Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն,
9. «Լուսավոր Հայաստան» կուսակցություն,
10. «Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն,
11. «Հանրապետություն» կուսակցություն,
12. «Հայոց հայրենիք» կուսակցություն,
13. «Ազատ հայրենիք» դաշինք,
14. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (այսուհետ՝ նաև ԲՀԿ) ,
15. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն,
16. «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն,
17. «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն,
18. «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք»,
19. «Ազգային օրակարգ» կուսակցություն,
20. «Վերելք» կուսակցություն,
21. Ազատական կուսակցություն,
22. «Հայոց արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցություն,
23. Հայաստանի Եվրոպական կուսակցություն,

[2] https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2021)006-e

24. «Հայաստան» դաշինք,
25. «Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն,
26. «Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում (այսուհետ՝ նաև ԿԸՀ) գրանցումից մի քանի օր անց «Հայոց արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցությունը դուրս է եկել ընտրարշավից, և արդյունքում մրցակցությունը եղել է 25 կուսակցությունների և դաշինքների միջև:

Ընտրությունների ընթացքին հետևելու նպատակով ԿԸՀ-ում հավատարմագրվել է 8 միջազգային և 19 տեղական դիտորդական առաքելություն: Տեղական դիտորդական առաքելություններում հավատարմագրվել է 8,749 դիտորդ: Ընտրությունների լուսաբանման նպատակով ԿԸՀ-ում հավատարմագրվել է 49 օտարերկրյա և 68 տեղական զանգվածային լրատվության միջոց (այսուհետ՝ նաև ԶԼՄ):

Հանրապետության տարածքում ձևավորվել է 2,008 ընտրական տեղամաս, որոնցից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում: Տեղամասային կենտրոններից 1,520-ում (ընդհանուրի 75%-ը) տեղադրվել են տեսախցիկներ՝ քվեարկության օրվա գործընթացների առցանց վերահսկողությունն ապահովելու նպատակով: Տեսախցիկները տեղադրվել են առավել մեծ քանակով ընտրողներ սպասարկող տեղամասերում՝ ծածկելով 2,591,316 գրանցված ընտրողներից 2,420,660 (93%) ընտրողներ ունեցող տարածքը: Այն ընտրատեղամասերը, որոնք տեսախցիկ չեն ունեցել, հիմնականում գտնվել են Երևանից դուրս: Երևանում տեսախցիկ չի ունեցել 479 ընտրատեղամասերից միայն 4-ը (0.8%), իսկ Երևանից դուրս՝ 1,529 ընտրատեղամասերից 484-ը (31.7%):

ԱԺ արտահերթ ընտրություններին ընտրելու իրավունք ունեցող 2,595,512 քաղաքացիներից քվեարկությանը մասնակցել է 1,281,997-ը կամ ընտրողների 49%-ը[3]:

2021 թ.-ի հունիսի 20-ին կայացած քվեարկության արդյունքում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված անցողիկ շեմը (կուսակցությունների դեպքում՝ 5%, և կուսակցությունների դաշինքների դեպքում՝ 7%) հաղթահարել է երկու կուսակցություն՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը՝ ձայների 53.91%-ով, և «Հայաստան» դաշինքը՝ 21.09%-ով: Հաշվի առնելով ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջը, որի համաձայն՝ խորհրդարանում պետք է ներկայացված լինի առնվազն 3 քաղաքական ուժ, Հայաստանի Հանրապետության 8-րդ գումարման Ազգային ժողովում մանդատներ է ստացել նաև 5.22% ձայն հավաքած և պահանջվող շեմը չհաղթահարած «Պատիվ ունեմ» դաշինքը:

[3] https://res.elections.am/images/Decisions/27.06.21/21.183_A.pdf

Պատկեր 1. ՀՀ Ազգային ժողով անցած քաղաքական ուժերը

Քաղաքական ուժ	Ձայների քանակ	Տոկոս	Մանդատների քանակ
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	688 761	53.91%	71
«Հայաստան» դաշինք	269 481	21.09%	29
«Պատիվ ունեմ» դաշինք	66 650	5.22%	7

Քվեարկությանը մասնակցած և իրենց քվեն 22 մյուս քաղաքական ուժերին տված մոտ 19.78% (մեկ հինգերորդը կազմող) ընտրողների ձայները փոշիացել են, քանի որ նրանց կողմից ընտրված կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) չեն անցել ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված համապատասխան շեմը:

ԱԺ արտահերթ ընտրությունների մասնակիցներից 4-ը («Հայաստան» դաշինք, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն, «Հայոց հայրենիք» կուսակցություն և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինք) քվեարկության օրվանից հետո դիմում են ներկայացրել ԿԸՀ՝ պահանջելով անվավեր ճանաչել արտահերթ ընտրությունների արդյունքները և նշանակել վերաքվեարկություն: Նշվածներից «Հայոց հայրենիք» կուսակցության դիմումը ներկայացվել է ժամկետի խախտմամբ և չի քննարկվել: Մյուս դիմումների քննարկման արդյունքներով՝ ԿԸՀ-ն 2021 թ.-ի հունիսի 27-ին իր թիվ 183-Ա որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ ԱԺ 2021 թ.-ի հունիսի 20-ին կայացած արտահերթ ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա[4]:

Նույն օրը ԿԸՀ-ն ընդունել է արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին թիվ 184-Ա որոշումը[5], որը «Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի կողմից վիճարկվել է ՀՀ Սահմանադրական դատարանում: Վերջինս իր հերթին ուժի մեջ է թողել ԿԸՀ որոշումը[6]:

2021 թ.-ի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Ազգային ժողովի (ԱԺ) արտահերթ ընտրություններին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն՝ ընտրությունների որակի վերաբերյալ համապարփակ և համակարգված տեղեկություններ հավաքելու նպատակով:

[4] https://res.elections.am/images/Decisions/27.06.21/21.183_A.pdf
[5] https://res.elections.am/images/Decisions/27.06.21/21.184_A.pdf
[6] https://www.concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1606.pdf

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ականատես» դիտորդական առաքելությունը գնահատել է օրենքով սահմանված նախընտրական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածի, նախընտրական քարոզարշավի, դրա ֆինանսավորման, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների համապատասխանությունը ՀՀ ընտրական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, ինչպես նաև գործընթացների հնարավոր ռիսկերը ազատ, թափանցիկ և մրցակցային ընտրություններ անցկացնելու տեսանկյունից:

Երկարաժամկետ դիտորդություն

Երկարաժամկետ դիտորդությունն առանցքային դեր ունի ընտրական գործընթացների վերահսկողության գործում՝ հաշվի առնելով այն, որ ընտրողների կարծիքների ձևավորումը փաստացի տեղի է ունենում ոչ այնքան բուն քվեարկության օրը՝ ընտրատեղամասերում, որքան նախընտրական ժամանակահատվածում, և ենթակա է տարբեր ֆորմալ (նախընտրական քարոզարշավի կարգավորումներից բխող) և ոչ ֆորմալ (քողարկված, հաճախ նաև ապօրինի) ներգործությունների:

Երկարաժամկետ դիտորդական առաքելության շրջանակում «Ականատես»-ը ներգրավել է 60 դիտորդների, որոնք 2021 թ.-ի մայիսի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում դիտարկել են նախընտրական և հետընտրական գործընթացները հանրապետության բոլոր՝ 38 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում: Նախընտրական ժամանակահատվածում դիտորդներն ուսումնասիրել են ընտրությունների վարչարարությունը, ընտրական հանձնաժողովների գործողությունների համապատասխանությունը ԿԸՀ-ի կողմից սահմանված ժամանակացույցին, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, նախընտրական քարոզչության ֆինանսավորումը, վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերը, նախընտրական միջոցառումները, ընդհանուր մթնոլորտը, ատելության խոսույթը: Հետընտրական գործընթացներում ուսումնասիրության առարկա են եղել ընտրողների ստորագրած ցուցակների սկանավորումը, արդյունքների վերահաշվարկը և բողոքների քննությունը թվով 33 տարածքային ընտրական հանձնաժողովներում, ԿԸՀ-ում, ընտրական դիմում-բողոքների քննությունը դատարանների և իրավապահ մարմինների կողմից:

Դիտորդները տեղերում աշխատել են ընտրական հանձնաժողովների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական շտաբների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների, ԶԼՄ-ների, ինչպես նաև միջազգային դիտորդների հետ: Նրանք կատարել են ավելի քան 180 այցելություն տարածքային ընտրական հանձնաժողովներ և դիտարկել դրանց 41 նիստ: Եղել է ավելի քան 380 այցելություն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրասենյակներ և նախընտրական շտաբներ, ավելի քան 50 հանդիպում լրագրողների հետ, շուրջ 75 հանդիպում հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ նաև ՀԿ) ներկայացուցիչների հետ: Դիտորդներն այցելել են 528 համայնք և մասնակցել ավելի քան 250 նախընտրական միջոցառումների/հանդիպումների:

Նշվածից բացի՝ եղել են հանդիպումներ քաղաքացիների հետ՝ գնահատելու ընդհանուր իրավիճակը և ստանալու տեղեկություններ նախընտրական գործընթացների վերաբերյալ:

Տվյալները հավաքվել են գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, պաշտոնական հարցումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Ոչ պաշտոնական տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով ստացված տվյալները դիտորդների կողմից ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Կարճաժամկետ դիտորդություն

«Ականատես» առաքելության շրջանակներում ներգրավվել են 580 կարճաժամկետ դիտորդներ, որոնք դիտարկել են քվեարկությանն առնչվող գործընթացները Հայաստանի ողջ տարածքում վիճակագրորեն ներկայացուցչական ընտրանքով առանձնացված 300 ընտրատեղամասում:

Քվեարկության օրվա դիտարկումը ներառել է ձայների զուգահեռ հաշվարկ (ՁՁՀ): Տվյալ մեթոդը, հիմնված լինելով պատահական ներկայացուցչական ընտրանքի վրա, հնարավորություն է տալիս վիճակագրական եղանակով չափելու ինչպես քվեարկության օրվա գործընթացների որակը, այդ թվում՝ տեղամասերի բացումը, քվեարկությունը, փակումը և արդյունքների ամփոփումը, այնպես էլ քվեների բաշխումը: Եվ թեև դիտորդական առաքելությունը չի ծածկում երկրի բոլոր ընտրական տեղամասերը, ՁՁՀ մեթոդի կիրառումը թույլ է տալիս խոսել ընտրական գործընթացի և ստացված արդյունքների մասին համապետական մակարդակով: Այս առումով այն կարող է վերահաստատել կամ հարցականի տակ դնել քվեարկության արդյունքները՝ նպաստելով ընտրությունների հրապարակված արդյունքների նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը կամ, ընդհակառակը, վեր հանելով հնարավոր խնդիրները[7]:

Ի լրումն դիտորդների՝ տեղամասերում տեղակայման՝ «Ականատես»-ը ներգրավել է նաև շրջիկ դիտորդներից բաղկացած 22 խմբերի, որոնք այցելել են ընտրանքից դուրս գտնվող ավելի քան 150 ընտրատեղամաս՝ հսկելով իրավիճակը դրանց ներսում և հարակից տարածքներում, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական շտաբների մոտակայքում: Կարճատև այցելությունների միջոցով դիտարկվել են ՁՁՀ մեթոդաբանությամբ սահմանված ընտրանքում չներառված և պատահականության սկզբունքով ընտրված տեղամասերը, ինչպես նաև ընտրանքում ներառված տեղամասերը՝ դրանցում լարված իրավիճակների կամ այլ խնդիրների առկայության դեպքում:

Ընտրատեղամասերում քվեարկության ամփոփման նիստին զուգահեռ՝ ժամը 20:00-ից սկսած, «Ականատես»-ի դիտորդները հսկել են թվով 33 տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը՝ հետևելով տեղամասերից ընտրական փաստաթղթերի ու պարագաների պարկերի ընդունման, ընտրատեղամասերում ամփոփված քվեարկության արդյունքների

[7] ՁՁՀ մեթոդը հաջողությամբ կիրառվել է ավելի քան 50 երկրում, այդ թվում՝ մեր տարածաշրջանում՝ Ուկրաինայում, Վրաստանում, Սերբիայում, Կոսովոյում:

աղյուսակավորման, ընտրողների ցուցակների սկանավորման գործընթացներին: Հետընտրական ժամանակահատվածում դիտորդներն ուսումնասիրել են տարածքային ընտրական հանձնաժողովներում արդյունքների վերահաշվարկի և ընտրական բողոքների քննության ընթացքը:

Ընտրական գործընթացում վեր հանված էական խախտումների հիման վրա կազմվել և ներկայացվել են դիմում-բողոքներ Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովներին, հաղորդումներ՝ իրավապահ մարմիններին, և դիմում-բողոքներ՝ դատարաններ, որոնց մի մասի քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության ընթացքում դիտորդների կողմից հավաքված քանակական և որակական տվյալները վերլուծվել են և ամփոփվել «Ականատես» դիտորդական առաքելության զեկույցներում[8], հայտարարություններում[9], մամուլի ասուլիսներում[10], հրապարակվել «Ականատես»-ի ֆեյսբուքյան էջում[11], նախաձեռնության անդամ կազմակերպությունների համացանցային կայքերում և/կամ ֆեյսբուքյան էջերում:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ընտրական հանձնաժողովների աշխատանք

Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ԱԺ արտահերթ ընտրությունների նշանակման պահից՝ 2021 թ.-ի մայիսի 10-ից մինչև հունիսի 27-ը, ԿԸՀ-ն հրավիրել է 21 նիստ, որոնցից 8-ում հիմնականում քննարկվել են արտահերթ ընտրությունների կազմակերպմանն առնչվող հարցեր, իսկ 13-ը վերաբերել է ընտրությունների կազմակերպման շրջանում առանձին անհատների և կուսակցությունների դիմումների ու Դատախազության միջնորդությունների քննարկմանը: Խորհրդարանական ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո՝ մինչև 2021 թ.-ի հուլիսի 26-ը ներառյալ, ԿԸՀ-ն անց է կացրել ևս 6 նիստ:

Սկզբնական փուլում ԿԸՀ նիստերի տեսագրություններին առցանց հետևելու հնարավորություն չի եղել՝ պայմանավորված ԿԸՀ կայքի ծրագրային-տեխնիկական ապահովման խնդիրներով, ինչը որոշ ժամանակ անց շտկվել է: 2021 թ.-ի մայիսի 24-ի դրությամբ կայքն ամբողջությամբ նորացված էր, և նիստերի տեսագրությունների դիտարկման հնարավորությունն՝ ապահովված:

---

[8] https://transparency.am/hy/publications/view/381 , https://transparency.am/hy/news/view/3287
[9] https://transparency.am/hy/news/view/3304
[10] https://www.youtube.com/watch?v=SYFJgCcc5cs&ab_channel=MCArmenia
https://www.youtube.com/watch?v=Y15ppldxWhw&ab_channel=a1plu
https://www.youtube.com/watch?v=shjR6UFOdKU&ab_channel=MCArmenia
[11] https://www.facebook.com/akanatesditord/

ԿԸՀ նոր կայքը նախկինի համեմատ առավել հաջող է ապահովել ընտրական գործընթացների թափանցիկությունը: Այն օգտագործման համար ավելի հարմար է և արդյունավետ: Այդուհանդերձ, կայքում առկա տվյալների զգալի մասը շարունակում է ներկայացվել ոչ թե *բաց տվյալների* (open data), այլ PDF ձևաչափով, ինչը դժվարացնում է տվյալների ստացումը, մշակումն ու վերլուծությունը:

Նիստերի դիտարկում

Նիստերի առցանց դիտարկումների համաձայն՝ արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- 2021 թ.-ի հունիսի 11-ի, 12-ի, 22-ի, ինչպես նաև հուլիսի 10-ի, 15-ի և 20-ի նիստերը չեն հեռարձակվել, և դրանց տեսագրությունները չեն տեղադրվել ԿԸՀ կայքում, ըստ երևույթին, նախաքննական գաղտնիքը պահպանելու նպատակով, քանի որ նշված նիստերով քննարկվել են Դատախազության միջնորդությունները:
- Դատախազության միջնորդությունների քննարկման արդյունքում կայացված որոշ որոշումները թվագրված են 2021 թ.-ի հունիսի 21-ով, մինչդեռ այդ միջնորդությունների քննարկումը, ըստ հրապարակված նիստի օրակարգի, կայացել է հունիսի 22-ին:
- Հունիսի 19-ին կայացած երկու նիստերից մեկի տեսագրությունը ևս առկա չէ (օրակարգում ընդգրկված էին մի շարք կուսակցությունների և պատգամավորի թեկնածու Տիգրան Արզաքանցյանի դիմումի քննարկման հարցերը), իսկ մյուս նիստի տեսագրությունը դիտել հնարավոր չէ:
- Չի հեռարձակվել 2021 թ.-ի հունիսի 26-ի (օրակարգում՝ ՔՊԿ, «Ականատես» դիտորդական առաքելության անդամներ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ-ների դիմումների քննարկումը) նիստը:
- Հունիսի 26-ի նիստի տեսագրությունն ընդհատումներով է և թերի: Մասնավորապես ձայնի խափանման և տեսագրության զգալի հատվածի ընդհատված լինելու հետևանքով հնարավոր չի եղել դիտարկել օրակարգում ընդգրկված հարցերից «Ականատես»-ի անդամների ներկայացրած դիմում-բողոքների, ինչպես նաև մյուս հարցերի քննության ընթացքը:

ԿԸՀ նիստերի դիտարկման ընթացքում չի նկատվել դեպք, որի ժամանակ հանձնաժողովի անդամները որևէ հարց քննարկեին, կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը դեմ քվեարկեր առաջարկվող որոշման նախագծին: Չեն արձանագրվել նաև որոշումների նախագծերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների՝ տարբերվող առաջարկություններ ներկայացնելու դեպքեր: ԿԸՀ նիստերում հանձնաժողովի անդամները մշտապես քվեարկել են միաձայն՝ *կողմ* կամ *դեմ*:

Բացառություն է 2021 թ.-ի հունիսի 18-ի նիստի ընթացքում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 95-րդ հոդվածի 4-րդ մասի պաշտոնական պարզաբանմանը վերաբերող քննարկումը, որի ընթացքում հանձնաժողովի անդամն առաջարկել է, որ ԿԸՀ-ն պարզաբանի քվեաթերթիկների տրամադրման կարգն այնպես, որ

քվեաթերթիկների հերթականությամբ տրամադրում համարվի ինչպես քվեաթերթիկների՝ ըստ հերթական համարների աճման կարգով, այնպես էլ նվազման կարգով տրամադրումը:

Հատկանշական են ԿԸՀ ընդունած մի քանի որոշումներ, որոնք պատշաճ պատճառաբանված չլինելու հետևանքով անվավեր են ճանաչվել ՀՀ վարչական դատարանի կողմից: Ընդ որում, հետագայում նման գործելակերպը կրկնվել է դատարանի արդեն իսկ կայացրած վճռից հետո: Այսպես, 2021 թ.-ի մայիսի 31-ի թիվ 108-Ա որոշման բողոքարկման արդյունքում Վարչական դատարանի՝ որոշման հիմնավորվածության և պատճառաբանվածության որակների բացակայության վերաբերյալ արդեն իսկ արտահայտած դիրքորոշման պայմաններում[12] ԿԸՀ-ն դարձյալ կայացրել է որոշում, որը չի բավարարել այդ պահանջը (օրինակ՝ 2021 թ.-ի հունիսի 19-ի թիվ 160-Ա որոշումը Նիկոլ Փաշինյանի նկատմամբ նախազգուշացում կիրառելու մասին, որն անվավեր է ճանաչվել, քանի որ որոշման պատճառաբանական մասը որևէ վերլուծություն չի բովանդակել առ այն, թե ինչն է, ըստ ԿԸՀ-ի, համարվում քարոզչություն):

Առկա վճռի պայմաններում ԿԸՀ-ի դրսևորած գործելաոճի համատեքստում առանձնանում է «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության դիմումի հիման վրա կայացված 2021 թ.-ի հունիսի 19-ի թիվ 156-Ա որոշումը[13]: Մասնավորապես տվյալ կուսակցությունը ԿԸՀ-ին պահանջ է ներկայացրել Ն. Փաշինյանի կողմից ատելության և բռնության սպառնալիքի կոչեր հնչեցնելու կապակցությամբ դիմել դատարան՝ ՔՊԿ ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: ԿԸՀ 2021 թ.-ի հունիսի 13-ի թիվ 149-Ա որոշմամբ[14]՝ տվյալ դիմումը մերժվել է դիմումում վկայակոչված արտահայտությունները որպես նախընտրական քարոզչության կարգի խախտում չգնահատելու հիմքով, ինչը «Զարթոնք» կուսակցության կողմից բողոքարկվել է ՀՀ վարչական դատարան: Թիվ ՎԴ/6861/05/21 գործով[15] դատարանը մերժել է ներկայացված հայցը՝ միաժամանակ արձանագրելով, որ համապատասխան արտահայտությունները օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող են ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիք:

Թիվ ՎԴ/6861/05/21 գործով կայացված դատական ակտից հետո «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցությունը կրկին դիմել է ԿԸՀ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված գործիքակազմը կիրառելու պահանջով: ԿԸՀ-ն դարձյալ մերժել է դիմումը՝ 2021 թ.-ի հունիսի 19-ի թիվ 156-Ա որոշմամբ, որը կուսակցությունը կրկին բողոքարկել է Վարչական դատարան: ՎԴ/6997/05/21 վարչական գործով 2021 թ.-ի հունիսի 25-ին կայացված վճռով ներկայացված հայցը բավարարվել է, և ոչ իրավաչափ է ճանաչվել ԿԸՀ-ի կողմից ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/6861/05/21 գործով 2021 թ.-ի հունիսի 17-ին կայացված վճռով հաստատված՝ ՔՊԿ պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի

[12] Թիվ ՎԴ/6068/05/21 վարչական գործով կայացված վճիռը:
[13] https://res.elections.am/images/Decisions/19.06.21/21.156_A.pdf
[14] https://res.elections.am/images/Decisions/13.06.21/21.149_A.pdf
[15] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809961622

խախտումների առնչությամբ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված գործիքակազմը չկիրառելը (անգործությունը)[16]:

Ուշագրավ է ԿԸՀ-ի դրսևորած վարքագիծը «Ականատես» դիտորդական առաքելության կազմակերպությունների կողմից էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացված բողոքների նկատմամբ: Չնայած որ դիմում-բողոքները էլեկտրոնային ստորագրությամբ պաշտոնական էլեկտրոնային փոստով ուղարկելը նախապես համաձայնեցվել է և նախապատվելի է համարվել ԿԸՀ աշխատակազմի կողմից (պայմանավորված հունիսի 25-ին e-request.am կայքի հետ կապված տեխնիկական խնդիրների առաջացման հանգամանքով), դրանք ուղարկելու հաջորդ օրը ԿԸՀ-ն էլեկտրոնային փոստով ուղարկել է գրություն՝ առաջարկելով բողոքները ներկայացնել առձեռն կամ e-request.am կայքի միջոցով՝ ներկայացված դիմումներում առկա էլեկտրոնային ստորագրության իսկությունը ստուգելու հնարավորության բացակայության պատճառաբանությամբ: Այդպիսով, դիմումատուները փաստացի զրկվել են օրենքով սահմանված ժամկետում ներկայացված բողոքները մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը քննության առարկա դարձնելու հնարավորությունից:

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցում

Արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի թիվն աննախադեպ մեծ էր և, թերևս, ուռճացված, որը կարելի է բացատրել ինչպես մրցակցային ընտրությունների ակնկալիքով, այնպես էլ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում 2020 թ.-ի դեկտեմբերի 29-ին կատարված և կուսացությունների ձևավորման համար նպաստավոր պայմաններ սահմանող փոփոխություններով, սրանց հետ մեկտեղ՝ պատշաճ զարգացած կուսակցական համակարգի բացակայությամբ: Հարկ է նկատել, որ 36 կուսակցություններից (որոնց մի մասը ներգրավվել էր կուսակցությունների դաշինքներում) 10 գրանցվել էր 2021 թ.-ին՝ ընտրություններից անմիջապես առաջ և, ըստ այդմ, չէր ունեցել նախորդող ծախսեր:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կարող են ներկայացնել իրենց նախընտրական ծրագրերը ԿԸՀ սահմանած էլեկտրոնային ձևով ԿԸՀ կայքում տեղադրելու համար[17]: Կայքում հրապարակվել են ԱԺ ընտրություններին մասնակցող 25 կուսակցություններից միայն 4-ի («Հանրապետություն», «Հայոց հայրենիք», «Վերելք» և «Ազգային-ժողովրդավարական բևեռ» կուսակցություններ) նախընտրական ծրագրերը: Հաշվի առնելով այն, որ կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից) 12-ը չունեն պաշտոնական կայքէջ, կարելի է ասել, որ ընտրողի համար պատշաճ կերպով հասանելի չէին նրանց գաղափարախոսությունն ու ծրագրերը:

[16] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative
[17] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 8, մաս 4:

Դիտորդական առաքելությունների գրանցում

Դիտորդական կազմակերպությունների գրանցման գործընթացում նկատվել են մի շարք խնդիրներ, որոնք չեն երաշխավորում ընտրական գործընթացների հանրային վերահսկողության անկողմնակալությունը և կարող են կասկածի տակ դնել վերջիններիս դիտարկումների և զեկույցների արժանահավատությունը:

- ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեն հայաստանյան այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

  ԿԸՀ-ն գրանցելիս ստուգում է կազմակերպությունների կանոնադրական նպատակները, սակայն փաստացի չի ստուգում կուսակցություններին ու թեկնածուներին աջակցելու հանգամանքը, ուստի և կարող է չբացահայտել քաղաքական թեկնածուների ու դիտորդների ցանկերի համընկնման, ինչպես նաև կազմակերպության կողմից կուսակցությունների կամ թեկնածուների օգտին քարոզչություն իրականացնելու կամ այլ կերպ վերջիններիս աջակցելու փաստերը: Այսինքն՝ քաղաքական ուժերին չաջակցելու օրենսդրական սահմանափակումը ապահովված չէ արդյունավետ իրավակիրառ մեխանիզմներով:

- ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ԿԸՀ-ն մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե հասարակական կազմակերպության կանոնադրական նպատակները չեն բավարարում օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ վերը նկարագրված պահանջները: Այսինքն՝ դիտորդական կազմակերպության կողմից թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին չաջակցելու հանգամանքը նախատեսված է որպես հավատարմագրման նախապայման, սակայն սահմանված չէ կազմակերպության դիմումը մերժելու օրենսդրական հիմքերի սպառիչ ցանկում: Փաստորեն ԿԸՀ-ն կարող է իրավասու չլինել մերժելու կազմակերպության դիմումը, նույնիսկ եթե այն իրականացնում է ակտիվ նախընտրական քարոզչություն:

  Այս հարցը մասնակիորեն կարգավորվել է 2022 թ.-ին ուժի մեջ մտնելիք օրենսդրական փոփոխություններով, որոնցով կազմակերպության կառավարման մարմնի կազմի (բացառությամբ ժողովի) որևէ ներկայացուցչի կողմից տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով մասնակցելը սահմանվում է որպես դիմումի մերժման հիմք: Այնուամենայնիվ, խնդիրն արդիական է, այդ թվում՝ կազմակերպության կողմից քաղաքական ուժին կամ թեկնածուին աջակցելու հանգամանքը պարզելուն ուղղված ստուգումն իրականացնելու լրացուցիչ գործիքների և լիազորությունների անհրաժեշտության տեսանկյունից:

- ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված չեն դիտորդական կազմակերպության՝ իր դիտորդներին հավատարմագրելուց հետո հնարավոր քարոզչության կամ ընտրություններին մասնակցող որևէ քաղաքական ուժի աջակցելու դեպքում կազմակերպությանը դիտորդական առաքելության իրավունքից զրկելու ընթացակարգ և հիմքեր:

Այսպիսի իրավական բացերը հնարավորություն են ստեղծում նման իրողությունների համար. «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական ՀԿ ղեկավարը ներառված է եղել «Լուսավոր Հայաստան» կուսակցության թեկնածուների ցանկում, և միաժամանակ կազմակերպությունը անխոչընդոտ գրանցվել է ԿԸՀ-ում՝ իրականացնելու դիտորդական առաքելություն[18]:

Մյուս կողմից ՀՀ ընտրական օրենսգրքով առկա են սահմանափակումներ որոշ ոչ առևտրային կազմակերպությունների՝ ընտրությունների դիտորդություն իրականացնելու համար: Այսպես, օրենսգրքով դիտորդական կազմակերպությունների շրջանակում ընդգրկված են միայն հասարակական կազմակերպությունները, սակայն ոչ հիմնադրամները: Մինչդեռ Հայաստանում «հիմնադրամ» կազմակերպաիրավական կարգավիճակով պետական գրանցում ունեն բազմաթիվ իրավապաշտպան և ժողովրդավարության հարցերով զբաղվող ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց համար փաստորեն անհնարին է ընտրությունների վերահսկողությունը դիտորդ կազմակերպության դերում:

Ի լրումն տեղական դիտորդությանն առնչվող կարգավորումների բացերի՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված չէ նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների՝ (հրավերի բացակայության պարագայում) դիտորդական առաքելություն իրականացնելու հայտ ներկայացնելու դեպքում այն ԿԸՀ-ի կողմից քննարկելու և որոշում կայացնելու ընթացակարգն ու հիմքերը: Եվ չնայած 2021 թվականի հունիսի 20-ի ԱԺ արտահերթ ընտրությունների ժամանակ (ի տարբերություն 2017 թվականի[19]) չեն եղել դեպքեր, երբ անհիմն կերպով մերժվեր միջազգային կամ օտարերկրյա կազմակերպության հայտը կամ դրան ընթացք չտրվեր, տվյալ ռիսկը առկա է և պետք է վերացվի:

Տարածքային ընտրական հանձնաժողովներ

Տարածքային ընտրական հանձնաժողովների (10՝ Երևանում, 28-ը՝ մարզերում) աշխատանքներն ընթացել են բնականոն հունով՝ առանց միջադեպերի և խախտումների: Տարածքային ընտրական հանձնաժողովներն իրենց աշխատանքում հավատարիմ են եղել քաղաքական չեզոքության սկզբունքին:

[18] https://www.elections.am/Elections/Parliamentary
[19] Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թ. ապրիլի 2-ի ընտրությունների դիտորդության զեկույց, Երևան, 2017, https://transparency.am/files/publications/1511343844-0-379811.pdf?v=4, էջ 22:

Առաքելության ողջ ընթացքում դիտորդների կողմից իրականացվել է ավելի քան 180 այց տարածքային ընտրական հանձնաժողովներ, և ընդհանուր առմամբ դիտարկվել է 41 նիստ: Հանձնաժողովների համագործակցությունը դիտորդների հետ մեծ մասամբ գնահատվել է բաց և կառուցողական, առանց խոչընդոտների:

Խնդրահարույց է այն, որ տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի մասին տեղեկություն ստանալու կամ նիստերի արձանագրությունները ձեռք բերելու նպատակով դիտորդները հաճախ ստիպված են եղել այցելել համապատասխան գրասենյակներ, քանի որ հանձնաժողովները չունեն պաշտոնական էլեկտրոնային հաղորդակցության միջոցներ, և նիստերի որոշումների մեծ մասը որևէ տեղ չի հրապարակվում: ԿԸՀ նոր կայքում հատուկ բաժին է նախատեսվել տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեությունը ներկայացնելու համար, սակայն այն դեռևս չի պարունակում անհրաժեշտ տեղեկություններ:

Դիտարկումների համաձայն՝ շարունակում է մտահոգիչ մնալ որոշ տարածքային ընտրական հանձնաժողովների շենքային, տեխնիկական, հաղորդակցության և արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ այլ պայմանների բացակայությունը: Մասնավորապես արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- թիվ 1, թիվ 17 տարածքային ընտրական հանձնաժողովները ունեն ոչ բարվոք շենքային պայմաններ.
- թիվ 6 տարածքային ընտրական հանձնաժողովը չունի բնականոն աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ գույքային պայմաններ.
- թիվ 21 տարածքային ընտրական հանձնաժողովը բավարար տարածք չունենալու պատճառով ստիպված է եղել քվեաթերթիկները պահեստավորել մեկ այլ շենքի՝ դպրոցի դահլիճում, որտեղից էլ տեղի է ունեցել քվեաթերթիկների բաշխումը 57 տեղամասային ընտրական հանձնաժողովների միջև[20].
- թիվ 32 հանձնաժողովը գտնվել է մանկապարտեզի շենքում, ստիպված է եղել աշխատել աղմուկի պայմաններում.
- թիվ 24 հանձնաժողովի պայմաններն անբավարար են եղել, այն գտնվել է Լոռու մարզպետարանի շենքում.
- թիվ 34 հանձնաժողովում չի եղել սանհանգույց, հանձաժողովի անդամներն աշխատել են խոնավ և քանդված հատակով աշխատասրահում:
- Այլ դեպքերում հանձնաժողովների աշխատասրահները երկար ժամանակ չեն վերանորոգվել, առկա են եղել սանհանգույցին, կահույքին, հեռախոսակապին և այլ անհրաժեշտ պայմաններին առնչվող խնդիրներ:

Արժանապատիվ աշխատանքի համար բավարար պայմանների բացակայությունը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում հանձնաժողովի անդամների մոտիվացիայի և աշխատանքի որակի վրա:

[20] Ըստ տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի՝ այս լուծումը ԿԸՀ-ի հետ համաձայնեցված է, և ոստիկանությունը ծառայություն է իրականացնում՝ ապահովելու քվեաթերթիկների անվտանգությունը:

Նախընտրական ժամանակահատվածում Արմավիրի թիվ 15 տարածքային ընտրական հանձնաժողովում երկու անգամ արձանագրվել է ընտրական փաստաթղթի՝ մասնավորապես գրանցամատյանի՝ հանձնաժողովի նստավայրից դուրս տանելու փաստ:

Հանձնաժողովների կազմ

Տարածքային ընտրական հանձնաժողովների կազմը հիմնականում մնացել է նույնը:

Ուշագրավ է, որ մի շարք հանձնաժողովի անդամներ զուգահեռաբար զբաղեցնում են պետական կառավարման ոլորտի այլ պաշտոններ: Այսպես.

- Վրեժ Նոդարի Գալոյան՝ Կոտայքի թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ,
- Հովհաննես Դանիելի Ասատրյան՝ Արագածոտնի թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ-Արագածոտնի մարզպետարանի տեղական ինքնակառավարման հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,
- Վազգեն Շիրակի Հայրապետյան՝ Արագածոտնի թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ–ՀՀ զբաղվածության պետական գործակալության Թալինի տարածքային կենտրոնի տնօրեն,
- Վահագն Վոլոդյայի Առաքելյան՝ Տավուշի թիվ 38 տարածքային ընտրական հանձնաժողովի տեղակալ–Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի Տավուշի տարածքային բաժնի պետ,
- Սոնյա Վոլոդյայի Մեհրաբյան՝ Տավուշի թիվ 38 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ –Սոցիալական ապահովության ծառայության Իջևանի տարածքային բաժնի պետ,
- Արմիկ Սերյոժայի Ազատյան՝ Տավուշի թիվ 37 տարածքային ընտրական հանձնաժողովի տեղակալ–ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոյեմբերյանի տարածքային ստորաբաժանման ղեկավար,
- Վահագն Ավետիկի Նիկողոսյան՝ Երևանի թիվ 1 տարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղար–ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի պետ:

Չնայած «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայողը կարող է կատարել ընտրական հանձնաժողովի անդամի աշխատանք, այդուհանդերձ, պաշտոնների նմանատիպ համատեղումները (պաշտոնների հաշվառմամբ) պարունակում են վարչական ռեսուրսի չարաշահման ռիսկեր՝ ինչպես այդ հանրային ծառայողների՝ իրենց գործատուների/վերադասների կողմից ազդեցության ենթակա լինելու, այնպես էլ իրենց ծառայության շրջանակում շահառու հանդիսացող քաղաքացիների վրա ազդեցություն գործելու հնարավորությունների առումով: Ավելին, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վրեժ Նոդարի Գալոյանի՝ Կոտայքի թիվ 28

տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոն զբաղեցնելը ուղղակիորեն հակասել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին[21]:

ՀՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդված ի համաձայն՝ տարածքային ընտրական հանձնաժողովի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ[22]: Երևանի թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Թամրազյանի անունը ս.թ. հունիսի 8-ի դրությամբ նշված է եղել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կայքում որպես ԲՀԿ քաղաքական խորհրդի անդամ[23], թեև առաքելության հետ զրույցում Թամրազյանը նշել է, որ հրաժարվել է ԲՀԿ անդամակցությունից դեռ 2017-2018 թվականին:

Արձանագրվել է մեկ դեպք, երբ տարածքային ընտրական հանձնաժողովի անդամը նախկինում դրսևորել է անօրինական վարքագիծ, թեև դրան համապատասխան իրավական ընթացք չի տրվել, և շարունակում է զբաղեցնել տվյալ պաշտոնը: Մասնավորապես 2018 թ.-ի սեպտեմբերի 23-ին Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների ժամանակ թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Նորիկ Երանյանը թիվ 8/05 ընտրատեղամասում խոչընդոտել է լրագրողի աշխատանքը՝ հարվածելով «1in.am» լրատվական կայքի լրագրող Դիանա Դավթյանի ձեռքին[24]:

Դիտարկումները ցույց են տվել, որ տարածքային ընտրական հանձնաժողովների կին անդամները հիմնականում ակտիվորեն և անկաշկանդ ներգրավված են եղել որոշումների կայացման գործընթացներում:

Անկախության սկզբունքի պահպանում

«Ականատես»-ի դիտարկմամբ՝ բացահայտվել է տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեության սկզբունքների փաստացի աղճատում: Մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգիրքն ամրագրում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ[25], որոնցից

---

[21] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական վարչական պաշտոններից են Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնները: Իսկ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Միևնույն ժամանակ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում ընտրական հանձնաժողովի անդամի (բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի) կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանք կատարելու իրավունք է վերապահված միայն հանրային ծառայողներին: Արձանագրում ենք նաև, որ առկա է որոշակի հակասություն Ընտրական օրենսգրքի և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի միջև:

[22] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 39, մաս 5:

[23] http://bhk.am/hy/qaghaqakan-khorurd

[24]://www.youtube.com/watch?v=6MoPlrCO-bM&ab_channel=%D4%B1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, 3:12 րոպեից

[25] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 36:

յուրաքանչյուրն իր լիազորություններն իրականացնելիս պետք է լինի անկախ, իսկ նրանց գործունեությանը որևէ միջամտություն արգելվում է[26]: Միաժամանակ օրենսգիրքը սահմանում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից համակարգիչ մուտքագրելու պարտականություն, ինչը, սակայն, ըստ ԿԸՀ որոշման, իրականացվում է ԿԸՀ աշխատակազմի աշխատակիցների կողմից, որոնք ձևակերպված են որպես քաղաքացիական ծառայողներ, իսկ նրանց պաշտոնի անձնագրերում որպես աշխատավայր նշվում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի նստավայրը[27]: Ընտրական գործընթացի նման կազմակերպումն իրավաչափ չէ և ստեղծում է ռիսկեր տարածքային ընտրական հանձնաժողովի անկախության ապահովման և դրա գործառույթների իրականացման վրա հնարավոր ազդեցության առումով:

Առհասարակ պետք է արձանագրել, որ խնդրահարույց է տարածքային ընտրական հանձնաժողովների համար կատարվող հատկացումների նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով համայնքների խոշորացման հիմքով պայմանավորված ընտրությունների քանակի և այդպիսով՝ հանձնաժողովի ծանրաբեռնվածության նվազումը, դրանց մշտապես գործող կարգավիճակով պայմանավորված գրասենյակային և մարդկային ռեսուրսների ծախսերը, հանձնաժողովի անդամների համար որոշակի կայուն աշխատավարձի պահպանումը: Ընդ որում, հանձնաժողովի անդամների պրոֆեսիոնալիզմի և մասնագիտական աճի համար առանձնակի ջանքեր չեն գործադրվում և, թերևս, չեն էլ ակնկալվում՝ հաշվի առնելով հանձնաժողովների իրավասությունների ոչ շատ լայն շրջանակը և ԿԸՀ-ի կողմից ուղղակիորեն տրամադրվող մասնագիտական աջակցությունը:

Դիմում-բողոքների քննություն

Նախընտրական շրջանում դիտորդների կողմից ուսումնասիրվել է տարածքային ընտրական հանձնաժողովներ ներկայացված 3 գրավոր դիմում-բողոք: Բոլոր բողոքները վերաբերել են օրենքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառներին:

1. Առաջին դեպքում թիվ 13 հանձնաժողովը մերժել է «Արարատ» ջրօգտագործողների ընկերության (ՋՕԸ) ղեկավարի (2018 թ.-ի խորհրդարանական ընտրություններին՝ «Իմ քայլը» դաշինքի պատգամավորական թեկնածու) դիմումը՝ «Հայաստան» դաշինքի նախընտրական պաստառը ՋՕԸ վարչական գրասենյակի շինության պատից հեռացնելու վերաբերյալ: Մերժման հիմնավորում է հանդիսացել այն հանգամանքը, որ շենքում, որտեղ ՋՕԸ գրասենյակը գտնվում է վարձակալության հիմքով, «Հայաստան» դաշինքն ունի նախընտրական շտաբ, որի վրա, օրենքի համաձայն, կարող է տեղակայվել մինչև 6 քմ մակերեսով պաստառ:
2. Թիվ 27 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից բավարարվել է ՔՊԿ Կոտայքի մարզային կառույցի ղեկավարի բողոքը՝ հեռացնելու «Պատիվ ունեմ» դաշինքի՝ Քասախ համայնքում չսահմանված վայրում փակցված 5 քառակուսի մետրը գերազանցող

[26] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 73, մաս 2:
[27] ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 11.03.2017 թ. թիվ N 96-Ն որոշում, կետ 2:

քարոզչական պաստառը: Տարածքային ընտրական հանձնաժողովը նշված դաշինքին մեկ օր ժամանակ է տվել՝ խախտումը վերացնելու համար, ինչպես նաև դիմել է Քասախ համայնքի ղեկավարին՝ պաստառը անմիջապես հեռացնելու պահանջով: Թե՛ «Պատիվ ունեմ» դաշինքը, թե՛ համայնքի ղեկավարը անտեսել են հանձնաժողովի պահանջը, և պաստառը չի հեռացվել: Պետք է նշել, որ Քասախ համայնքի ղեկավար Արա Մկրտչյանի դուստրը՝ Աննա Մկրտչյանը, եղել է «Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակի 3-րդ համարի թեկնածուն[28]:

3. Թիվ 27 տարածքային ընտրական հանձնաժողովը բնակչի դիմումի հիման վրա որոշում է կայացրել հեռացնել Չարենցավան քաղաքում չսահմանված վայրերում փակցված ՔՊ կուսակցության թվով 8 պաստառները: Կուսակցությանը 1 օր ժամանակ է տրվել՝ վերացնելու խախտումները: Միևնույն ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը դիմել է Չարենցավան համայնքի ղեկավարին՝ անհապաղ վերացնելու օրենքի խախտմամբ փակցված պաստառները, որոնք, սակայն, չեն հեռացվել:

Դիտորդների կողմից արձանագրվել են նաև ընտրական գործընթացի տարբեր մասնակիցների կողմից տարածքային ընտրական հանձնաժողովներին ուղղված մի շարք բանավոր բողոքների դեպքեր: Դրանք հիմնականում առնչվել են քարոզչանյութերի տարածման կանոնների խախտման և վարչական ռեսուրսների չարաշահման դեպքերին:

Հիմք ընդունելով տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից գրավոր և բանավոր բողոքներին ի պատասխան նախաձեռնված գործողությունները՝ ընդհանուր առմամբ կարելի է դրական գնահատել ընտրությունների կազմակերպման ընթացքում տեղի ունեցած խախտումներին նրանց արձագանքը:

Հետընտրական շրջանում տարածքային ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումները մեծամասամբ վերաբերել են վերահաշվարկին (տե՛ս «Հետընտրական գործընթացներ» բաժինը):

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

Քվեարկության կազմակերպման նպատակով կազմավորվել է 2008 ընտրական տեղամաս: 2021 թ.-ի հունիսի 5-ին տեղի են ունեցել տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերը, որոնցից 42-ը դիտարկվել են «Ականատես»-ի դիտորդների կողմից:

Ինչպես տարածքային ընտրական հանձնաժողովների դեպքում, տեղամասային մակարդակում ևս դիտորդների և հանձնաժողովների համատեղ աշխատանքը գնահատվել է համագործակցային:

[28] Հարկ է նշել, որ համայնքապետ Արա Մկրտչյանը վերջին տարիներին աչքի է ընկել կոռուպցիոն բնույթի մի շարք աղմկահարույց պատմություններում՝ https://hetq.am/hy/article/110817:

Վերապատրաստման դասընթացներ

ԿԸՀ-ի և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (ԱՅ ԷՖ Ի ԷՍ) համատեղ ջանքերով 2021 թ.-ի հունիսի 6-18-ը տեղի են ունեցել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստման դասընթացներ: «Ականատես»-ը դիտարկել է 105 դասընթաց, որոնց մասնակցել է հանձնաժողովի 2,531 անդամ: Դասընթացների որակն ընդհանուր առմամբ դրական է գնահատվել դիտորդների կողմից: Այդուհանդերձ, հետագայում քվեարկության ընթացքում բացահայտված՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների կարողությունների և հմտությունների բացերը հիմք են տալիս ենթադրելու, որ հանձնաժողովների անդամներն ունեին լրացուցիչ վերապատրաստման կարիք:

Նախընտրական քարոզարշավ

2021 թ.-ի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական փուլը հիմնականում ընթացել է ընտրական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Այս ընտրությունը, սակայն, աչքի է ընկել ատելության խոսքի ծայրահեղ դրսևորումներով: Արձանագրվել են նաև մի շարք խնդիրներ և ռիսկային գործոններ՝ պայմանավորված ընտրական օրենսդրության բացերով:

Քարոզչության ժամանակահատված

Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը, ՀՀ ընտրական օրենսգրքի կարգավորումների համաձայն, սկսվել է 2021 թ.-ի հունիսի 7-ին և ավարտվել քվեարկության օրվանից մեկ օր առաջ՝ հունիսի 18-ին՝ ժամը 24:00-ին: Իրականում նախընտրական ակտիվ քարոզչության սկիզբ կարելի է համարել 2021 թ.-ի մարտի 18-ը, երբ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի կողմից հայտարարվեց 2021 թ.-ի հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին[29], և փաստացի սկսվեց ակտիվ քարոզարշավը:

Հատկապես ակտիվ քարոզչության փուլ են եղել 2021 թ.-ի ապրիլի վերջը և մայիսի սկիզբը, երբ ՀՀ վարչապետի հրաժարականից հետո ՀՀ Ազգային ժողովը չընտրեց ՀՀ նոր վարչապետ, իսկ մայիսի 10-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը ստորագրեց հրամանագիր 2021 թ.-ի հունիսի 20-ին արտահերթ ընտրություններ նշանակելու մասին[30]: Այս ժամանակահատվածում «Ականատես» առաքելությունն արձանագրել է տարբեր կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ինտենսիվ կերպով տարածվող պաստառներ, տեղադրվող վահանակներ, բացվող նախընտրական շտաբներ և կազմակերպվող հանրային միջոցառումներ (օրինակ՝ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հաճախակի այցելությունները մարզեր, մայիսի 9-ին «Հայաստան» դաշինքի հանրահավաքը Երևանի Ազատության հրապարակում):

[29] www.facebook.com/nikol.pashinyan/posts/2923103798009996
[30] www.president.am/hy/decrees/item/5249/

Որոշ քաղաքական ուժեր, հատկապես իշխող ՔՊԿ-ն, ըստ էության, օգտվել են այն հանգամանքից, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախատեսում է հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու սահմանված կանոններ[31] և վարչական ռեսուրսի օգտագործման սահմանափակումներ[32], սակայն որևէ կերպ չի սահմանափակում քարոզչության իրականացումը մինչև դրա պաշտոնական մեկնարկը:

Ընտրական շտաբներ

Ընդհանուր առմամբ դիտորդներն այցելել են թվով 380 ընտրական շտաբ Երևանում և մարզերում: Արձանագրվել է մի քանի դրվագ, երբ դիտորդներին հնարավորություն չեն տվել մուտք գործելու շտաբ, կամ չի տրամադրվել տեղեկություն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչության վերաբերյալ՝ տարբեր պատճառաբանություններով: Մասնավորապես արձանագրվել են հետևյալ իրավիճակները.

- Ճամբարակում գործող ԲՀԿ շտաբի աշխատողները թույլ չեն տվել դիտորդին մուտք գործել շտաբի տարածք:
- Կապանում «Հայաստան» դաշինքի և «Պատիվ ունեմ» դաշինքի շտաբներում դիտորդների նկատմամբ լարված վերաբերմունք է դրսևորվել, և հրաժարվել են պատասխանել հարցերին:
- Սպիտակում «Հայաստան» դաշինքի շտաբում մի քանի երիտասարդներ փորձել են փակել շտաբի մուտքը և թույլ չտալ դիտորդին մուտք գործել: Այնուհետև շտաբի ներկայացուցիչ Սամվել Խոյեցյանը (նախկինում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության Սպիտակի տարածքային բաժնի պետ) դիտորդի նկատմամբ ցուցաբերել է ագրեսիվ վարքագիծ:
- «Հայաստան» դաշինքի Երևանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող շտաբում սկզբում բարյացակամ են ընդունել, սակայն վերաբերմունքը կտրուկ փոխվել է, երբ տեղեկացել են, որ դիտորդ է: Լավագույն դեպքում հարցերին պատասխանել են, որ ժամանակ չունեն, և իրենց իրավունքն է հրաժարվել դիտորդի հետ շփումից: Վատագույն դեպքում դիտորդներին պիտակավորել են «սորոսական», «երկիր քանդողներ», «սաղ դուք եք անում» արտահայտություններով:

Թեև օրենքը չի երաշխավորում դիտորդների իրավունքը՝ մուտք գործելու ընտրական շտաբների տարածք կամ ստանալու տեղեկություններ (թերևս բացառությամբ պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների), այդուհանդերձ, դիտորդների նկատմամբ անբարյացակամ ու ագրեսիվ վերաբերմունքը չի կարող կասկած չհարուցել համապատասխան քաղաքական ուժերի կողմից ընտրապայքարում կիրառվող միջոցների հնարավոր անօրինականության և, ըստ այդմ, նրանց նկատմամբ հանրային վերահսկողության անցանկալի լինելու վերաբերյալ:

[31] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19:
[32] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, հոդված 23:

Քարոզչանյութեր

«Ականատես»-ի դիտորդներն արձանագրել են քարոզչանյութերի ակտիվ տարածում դեռևս նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածից առաջ: Տարբեր չափի վահանակներ փակցվել են մասնավորապես ՔՊԿ, «Հանրապետություն», «Լուսավոր Հայաստան», «Արդար Հայաստան», «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցությունների և «Հայաստան», «Շիրինյան-Բաբաջանյան» նախընտրական դաշինքների կողմից:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերացման են ենթակա ԿԸՀ կողմից նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով պաստառները, տպագիր և այլ նյութերը: Մինչև 5 քառակուսի մետր մակերեսով՝ նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված քարոզչանյութերը ենթակա են վերացման այն դեպքերում, եթե դրանց ծախսերը սահմանված կարգով չեն ներառվել համապատասխան կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամում: Ընտրական օրենսգրքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանվում են համայնքի ղեկավարի կողմից[33], սակայն դրանք հանելու համար ժամկետ սահմանված չէ:

ԿԸՀ-ն 2021 թ.-ի մայիսի 29-ի իր արտահերթ նիստին հիշեցրել է քաղաքական ուժերին, որ նախընտրական քարոզարշավի կանոնները գործելու են հունիսի 7-ից, և նախընտրական ու նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված 5 քառակուսի մետր մակերեսը գերազանցող վահանակները պետք է հանված լինեն նրանց կողմից հունիսի 6-ին՝ ինքնակամ: Հակառակ դեպքում հունիսի 7-ից բոլոր այն պաստառները, որոնք չեն լինի ԿԸՀ կողմից բաշխված ցանկերում, իրավասու մարմինների կողմից օպերատիվ կերպով ենթակա են լինելու հեռացման[34]:

2021 թ.-ի մայիսի 31-ի նիստում ԿԸՀ-ն նախընտրական քարոզչության հետ ասոցացվող է ճանաչել 5 քառակուսի մետր մակերեսը գերազանցող հետևյալ պաստառները՝

- Էդմոն Մարուքյանի լուսանկարով և «Լուսավոր Հայաստան կուսակցություն» գրառմամբ պաստառ,
- Նորայր Նորիկյանի լուսանկարով և «Արդար Հայաստան» գրառմամբ պաստառ,
- «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցության «Արարատի բարձրությունն է 5165 մետր» գրառմամբ պաստառ,
- Լևոն Շիրինյանի և Արման Բաբաջանյանի համատեղ լուսանկարով և «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» գրառմամբ պաստառ,
- «Տիգրան Արզաքանցյան բարեգործական հիմնադրամ. Ուժը՝ մարդն է» գրառմամբ կամ նշված գրառմամբ և Տիգրան Արզաքանցյանի լուսանկարով պաստառ,

[33] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 9:
[34] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 9:

- Ռոբերտ Քոչարյանի «Կյանք և Ազատություն» գրքի պատկերով և «Հայաստանը կառուցելիս» պաստառ:

ԿԸՀ-ն Տիգրան Արզաքանցյանի պաստառը ճանաչել է ասոցացվող Հայաստանի դեմոկրատական կուսակցության հետ[35], իսկ Ռոբերտ Քոչարյանի պաստառը՝ «Հայաստան» դաշինքի հետ[36]:

Ուշագրավ է, որ ԿԸՀ-ն չի դիտարկել համարյա նույնքան խնդրահարույց՝ «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանի պատկերով և «Ռուսաստանի հայերի միություն. 20 տարի Հայաստանի և Արցախի հետ», «Մեր միասնականությունն անվտանգության լավագույն երաշխիքն է» գրառումներով վահանակները: Թեև Ա. Աբրահամյանի անունն ընդգրկված չէ որևէ ցուցակում, սակայն նա անուղղակիորեն մասնակցել է «Ալյանս» կուսակցության քարոզարշավին, ինչի հավաստիացումն են նրա հրապարակային ելույթները[37], ինչպես նաև «Ալյանս» կուսակցության ֆեյսբուքյան էջի գրառումը, համաձայն որոնց՝ «...ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի թիմը, Մեր տունը Հայաստանն է կուսակցությունը, Ալյանս կուսակցությունը, ինչպես նաև մի շարք բացառապես բարի համբավ վայելող անհատներ արտահերթ ընտրություններին մասնակցելու են մեկ միասնական՝ Մեր տունը Հայաստանն է ցուցակով»[38]:

Պետք է նկատել, որ նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչելու վերաբերյալ ԿԸՀ 2021 թ.-ի մայիսի 31-ի որոշումները խնդրահարույց են եղել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից, քանի որ չեն բավարարել վարչական ակտին ներկայացվող պատճառաբանվածության և որոշակիության պահանջները: Այդ որոշումները պատշաճ չեն պարզաբանել կամ բացահայտել «քարոզչության հետ ասոցացվող» արտահայտության հասկացությունը, ինչպես նաև այն չափանիշները, որոնցով ղեկավարվել է ԿԸՀ-ն տվյալ նյութերը քարոզչության հետ ասոցացվող ճանաչելու համար իր ընկալումը ձևավորելիս:

Ռ. Քոչարյանը ԿԸՀ որոշումը բողոքարկել է ՀՀ վարչական դատարանում.հայցը բավարարվել է, տվյալ որոշումն անվավեր է ճանաչվել: Դատարանն արձանագրել է. «Ընտրական օրենսգրքում «քարոզչություն», «քարոզչական նյութ, պաստառ», «քարոզչության հետ ասոցացվող» հասկացությունների բովանդակությունների բացահայտված չլինելու և դրա արդյունքում՝ վիճարկվող որոշման իրավական հիմքերի բավարար չափով որոշակի և ճշգրիտ չլինելու պայմաններում, վիճարկվող որոշման պատճառաբանված չլինելու հանգամանքը ենթադրում է նաև իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքի խախտում»: Դատարանը մատնանշել է, որ «իրավական նորմի անորոշության և անհստակության պայմաններում իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքը իրավակիրառողին առաջադրում է անհատական իրավական ակտերի հիմնավորվածության ու

[35] https://res.elections.am/images/Decisions/21.107_A.pdf
[36] https://res.elections.am/images/Decisions/21.108_A.pdf
[37] https://www.aravot.am/2021/05/25/1193444/
[38] www.facebook.com/alliance.kusakcutyunn/photos/a.1439427173018263/2568798993414403/?type=3

պատճառաբանվածության ավելի խիստ պահանջ, իրավական նորմի անորոշության և անհստակության պայմաններում անհատական իրավական ակտը պատճառաբանելու՝ իրավակիրառ սուբյեկտի պարտականության շրջանակն ավելի լայն է, իսկ պատճառաբանվածության շեմն ավելի բարձր» և նկատել, որ ԿԸՀ վիճարկվող որոշմամբ «ապահովված չեն վիճարկվող որոշման հիմնավորվածության և պատճառաբանվածության որակները»: Ի վերջո դատարանը եզրահանգել է, որ առկա է ԿԸՀ վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու հիմք, և այլևս անհրաժեշտ չի համարել գնահատել խնդրո առարկա պաստառի՝ քարոզչության հետ ասոցացումը[39]:

Արձագանքելով ՀՀ վարչական դատարանի հիշյալ վճռին[40]՝ 2021 թ.-ի հունիսի 8-ին ԿԸՀ-ն նույն հարցի կապակցությամբ սեփական նախաձեռնությամբ դարձյալ հարուցել է վարույթ և ընդունել որոշում, այս անգամ՝ մանրամասն իրավական հիմնավորմամբ[41]: Ռ. Քոչարյանն այս որոշումը կրկին բողոքարկել է Վարչական դատարանում: Այս հայցը ևս բավարարվել է՝ նույն հարցի շուրջ կրկին անգամ միջամտող վարչական ակտ ընդունելու անթույլատրելիության պատճառաբանությամբ[42]:

Տ. Արզաքանցյանի դեպքում ՀՀ ԿԸՀ-ն հունիսի 10-ի թիվ Ա-133 որոշմամբ անվավեր է ճանաչել վերջինիս գրանցումը որպես Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակով պատգամավորի թեկնածու[43]: Տիգրան Արզաքանցյանը ԿԸՀ այս որոշումը բողոքարկել է Վարչական դատարանում, որը, սակայն, հունիսի 14-ին կայացած նիստում վճռել է մերժել Տ. Արզաքանցյանի բողոքն ընդդեմ ԿԸՀ-ի[44]: Չնայած Վարչական դատարանի վճռին՝ Տ. Արզաքանցյանը հայտարարել է, որ շարունակում է ակտիվորեն մասնակցել նախընտրական քարոզչությանը և աջակցել Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը[45]:

Ե՛վ Ռ. Քոչարյանի «Կյանք և ազատություն» գրքի, և՛ Տ.Արզաքանցյանի նկարով 5 քառակուսի մետրը գերազանցող նախընտրական քարոզչության հետ ասոցացվող պաստառները շարունակել են մնալ իրենց տեղերում՝ արտաքին գովազդային վահանակների վրա՝ Հայաստանի ողջ տարածքում, ինչը չէր կարող իր ազդեցությունը չթողնել ընտրական գործընթացների վրա:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր՝ կապված չսահմանված/արգելված վայրերում քարոզչական նյութերի տեղադրման հետ: Մասնավորապես պաստառները փակցված են եղել փողոցային սյուներին, կանգառներում (գովազդային ընկերությունների կողմից տնօրինվող վահանակներից դուրս), բազմաբնակարան շենքերին (ոչ միայն սեփականատիրոջ պատշգամբի և պատուհանների վրա), առևտրի կետերում, հանրային տրանսպորտի և տաքսիների վրա և այլն[46]: Նման խախտումներ են արձանագրվել

[39] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809960847
[40] https://medialab.am/161496/
[41] https://res.elections.am/images/Decisions/08.06.2021/21.128_A.pdf
[42] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809961266
[43] https://res.elections.am/images/Decisions/10.06.2021/21.133_A.pdf
[44] https://res.elections.am/images/Decisions/10.06.2021/21.133_A.pdf
[45] https://hetq.am/hy/article/132182
[46] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 2:

«Քաղաքացիական պայմանագիր», Հայաստանի դեմոկրատական, «Հանրապետություն», «Լուսավոր Հայաստան», «Բարգավաճ Հայաստան», «Միասնական հայրենիք», «Հայոց հայրենիք» կուսակցությունների, ինչպես նաև «Հայաստան», «Պատիվ ունեմ», «Ազատ Հայրենիք», «Բաբաջանյան-Շիրինյան» դաշինքների դեպքում: Առանձնահատուկ ուշադրություն է գրավել ՔՊԿ պաստառը «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի շենքի մուտքին[47], ինչպես նաև նույն կուսակցության կարգախոսի եռաչափ լուսային պրոյեկտումը ՀՀ կառավարության շենքին[48]:

ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ ներառեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ[49]: Անհրաժեշտ տվյալները բացակայել են «Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային-ժողովրդավարական բևեռ», Հայաստանի դեմոկրատական, «Բարգավաճ Հայաստան», «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական, «Ազգային օրակարգ», «Լուսավոր Հայաստան», «Հայ ազգային կոնգրես», «Հանրապետություն», «Մեր տունը Հայաստանն է», «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցությունների, «Հայաստան», «Ազատ հայրենիք» դաշինքների՝ դիտարկված մի շարք տպագիր քարոզչական նյութերում:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրման դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ[50]: Չնայած սրան՝ դիտարկվել են դեպքեր, երբ առանձին քաղաքական ուժերի պաստառներ ակնհայտորեն գերակշռել են առանձին փողոցներում/պողոտաներում, ինչը կարող է իրավաչափ հարց բարձրացնել քարոզչանյութերի տեղադրման հավասար պայմանների ապահովման վերաբերյալ:

Բացի քարոզչական նյութերի տարածման կանոնների խախտման դեպքերից՝ դիտորդներն արձանագրել են նաև քարոզչական տպագիր նյութերը պատռելու և վնասելու մի քանի տասնյակ դեպքեր («Քաղաքացիական պայմանագիր», «Լուսավոր Հայաստան», «Հայ ազգային կոնգրես», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն», Հայաստանի դեմոկրատական, «Ազգային-ժողովրդավարական բևեռ», «Ազատություն», Ազատական կուսակցություններ և «Հայաստան», «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների», «Պատիվ ունեմ» դաշինքներ): Նկատվել են նաև դեպքեր, երբ վնասվել են քարոզչության հետ ասոցացվող պաստառները (Ռոբերտ Քոչարյանի «Կյանք և Ազատություն» գրքի պատկերով և «Հայաստանը կառուցելիս», Ա. Աբրահամյանի պաստառները), ինչով նաև հավաստվում են դրանց առնչությունը ընտրապայքարին և ներգործման հավանականությունը քաղաքացիների վրա:

---

[47] https://drive.google.com/file/d/10gH4WNrrFLVONu6xH1dql_rtZA-2cbXw/view?usp=sharing
[48] https://drive.google.com/file/d/1EkNvVpUKQs1mepCVt7hyJlbCLIYwqw8K/view?usp=sharing, https://drive.google.com/file/d/180Zyta6BR3zQQyiEAYe4zlwNmdbMzKUH/view?usp=sharing
[49] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 10:
[50] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 5:

Միջոցառումներ

Նախընտրական միջոցառումների ընթացքում բազմիցս նկատվել է պաշտոնատար անձանց (այդ թվում՝ մարզպետեր, համայնքապետեր, փոխհամայնքապետեր և այլք), դպրոցների, մշակույթի կենտրոնների ներկայացուցիչների մասնակցություն՝ հիմնականում աշխատանքային ժամերին: Նման դեպքեր դիտարկվել են 39 միջոցառման ընթացքում, որոնցից 26-ի կազմակերպիչը եղել է ՔՊԿ-ն, 16-ինը՝ «Հայաստան» դաշինքը, և 2-ինը՝ «Պատիվ ունեմ» դաշինքը:

Ըստ դիտարկման՝ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական միջոցառումներն աչքի են ընկել ավելի քիչ ծրագրային քննարկումներով և ավելի ինտենսիվ անձնավորված քննադատությամբ, մեղադրանքներով, ինչպես նաև ատելության և բռնության խոսքով:

Վարչական ռեսուրս

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում դիտարկվել են վարչական ռեսուրսի չարաշահման, հավաքներին մասնակցելուն կամ մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու, վարչական լծակների միջոցով ընտրողի ազատ կամքի իրականացումը խոչընդոտելու բազմաթիվ դրսևորումներ՝ տարբեր քաղաքական ուժերի կողմից:

2021 թ.-ի մարտի 18-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 2021 թ.-ի հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին[51] հայտարարությունից ի վեր փաստացի մեկնարկել է վարչական ռեսուրսի օգտագործումը: ՀՀ վարչապետը սկսեց ինտենսիվ մարզային այցեր և հանդիպումներ տեղի բնակչության հետ այն դեպքում, երբ դրանից առաջ վերջին մարզային այցելությունը տեղի էր ունեցել 2020 թ.-ի դեկտեմբերի 21-ին[52]: Ըստ ՀՀ վարչապետի պաշտոնական կայքի՝ Ն.Փաշինյանը 2021 թ.-ի մարտի 20-ին այցելել է Արագածոտնի մարզ[53], մարտի 28-ին՝ Արմավիրի մարզ[54], ապրիլի 17-ին՝ Վայոց Ձորի մարզ[55], մայիսի 9-ին[56] և 27-ին[57]՝ Գեղարքունիքի մարզ: ՀՀ վարչապետի աշխատանքային այցերն ու հանդիպումները պարունակել են քարոզչության տարրեր:

Առանձնակի մտահոգության առարկա է ՀՀ վարչապետի քարոզարշավի ընթացքում ի լրումն օրենքով սահմանված անվտանգության ծառայության գործածված վարչական ռեսուրսը, ինչպես, օրինակ, ուղեկցող պաշտոնյաները, նրանց ծառայողական ավտոմեքենաները, ոստիկանական ուժերի անհամաչափ և անհարկի օգտագործումը և այլն: Թեև օրենքը չի

[51] www.facebook.com/nikol.pashinyan/posts/2923103798009996
[52] www.primeminister.am/hy/domestic-visits/item/2020/12/21/Nikol-Pashinyan-visit-to-Syunik-Marz/
[53] www.primeminister.am/hy/domestic-visits/item/2021/03/20/Nikol-Pashinyan-visit-to-Aragatsotn-marz/
[54] www.primeminister.am/hy/domestic-visits/item/2021/03/28/Nikol-Pashinyan-visit-Armavir-Marz/
[55] www.primeminister.am/hy/domestic-visits/item/2021/04/17/Nikol-Pashinyan-visited-Vayotz-Dzor/
[56] www.primeminister.am/hy/domestic-visits/item/2021/05/09/Nikol-Pashinyan-visit-to-Gegharkunik-Marz/
[57] www.primeminister.am/hy/domestic-visits/item/2021/05/27/Nikol-Pashinyan-visit-to-Gegharkunik-Marz/

կարգավորում նման իրավիճակները, այսպիսի պրակտիկան ակնհայտորեն անհավասար պայմաններ է ստեղծում մրցակից քաղաքական ուժերի համար:

Բացի վերոնշյալից՝ դիտարկվել են վարչական ռեսուրսի չարաշահման, հավաքներին մասնակցելուն կամ մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու, ընտրողի ազատ կամքի իրականացումը խոչընդոտելու բազմաթիվ դրսևորումներ տարբեր քաղաքական ուժերի կողմից: Այսպես.

- Մայիսի 29-ին ՔՊԿ համակիրների հետ Երևանի տարբեր վարչական շրջաններում ՀՀ վարչապետի պաշտոնակատարի հանդիպումների ժամանակ օգտագործվել են ՔՊԿ նախընտրական պաստառները[58], ինչը նաև լուսաբանվել է Հանրային հեռուստատեսության կողմից:
- Հունիսի սկզբին Գորիս խոշորացված համայնքի Քարահունջ բնակավայրի համայնքապատկան մշակույթի տան գույքը (աթոռներ, սեղան և այլն) Քարահունջ բնակավայրի վարչական ղեկավար Լուսինե Ավետյանի[59] կողմից տեղափոխվել է Քարահունջում բացված «Հայաստան» դաշինքի շտաբ: Ընդ որում, նույն շտաբի համակարգողը եղել է Լուսինե Ավետյանի որդին՝ Բորիս Ղազարյանը:
- Հունիսի 4-ին Նիկոլ Փաշինյանի՝ Արտաշատ կատարած այցի ընթացքում տեղի ունեցած հավաքին ներկա են եղել ՔՊԿ Արտաշատի գրասենյակի ղեկավար Կառլեն Մկրտչյանի ղեկավարած «Արտաշատ» ՋՕԸ-ի, ինչպես նաև մանկապարտեզների աշխատակիցները (վերջիններս նշել են, որ այցից կես ժամ առաջ են հրահանգ ստացել՝ մասնակցելու միջոցառմանը), դպրոցների տնօրենները և աշխատակիցները: Ըստ դիտորդների՝ նրանց հատուկ ներս էին մտցնում փակ դահլիճում տեղի ունեցող հանդիպմանը:
- Հունիսի 7-ին Աբովյան քաղաքի համայնքապետարանի կոմունալ վարչության աշխատակիցներին պարտադրել են մասնակցել համայնքապետարանի դիմացի այգում տեղի ունեցող ԲՀԿ քարոզչական միջոցառմանը:
- Նորատուսի և Կարմիրգյուղի դպրոցների ուսուցիչները մարզպետարանի կողմից ուղղորդվել են՝ մասնակցելու Գավառ քաղաքում ՔՊԿ-ի կազմակերպած հանրահավաքին:
- Հունիսի 7-ին Քաջարան քաղաքի համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը աշխատանքային ժամին զբաղվել է քարոզչությամբ՝ ելույթ ունենալով «Հայաստան» դաշինքի քարոզարշավի ընթացքում[60]:
- Հունիսի 7-ին Քաջարան քաղաքում տեղի ունեցած «Հայաստան» դաշինքի հանրահավաքին ստիպողաբար մասնակցել են մանկապարտեզի, արվեստի դպրոցի,

[58] https://bit.ly/3z11Pmb; https://bit.ly/3vOXroj; https://bit.ly/3g5kVyl; https://bit.ly/3piHaFO

[59] Հետագայում Լուսինե Ավետյանին մեղադրանք է առաջադրվել ընտրական այլ հանցանքների համար ևս, մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի (Ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելը) 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով, 149.1 հոդվածի (Նախընտրական քարոզչությանը մասնակցելուն հարկադրելը) 2-րդ մասի 2-րդ կետով, 154.2-րդ հոդվածի (Ընտրողներին կաշառք տալը, ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը) 2-րդ և 3-րդ մասերով, https://armeniasputnik.am/armenia/20210708/28220829/qarahunji-gyuxapetin-kalanavorelene.html:

[60] https://www.youtube.com/watch?v=n7jyBVV_VT8?t=85, 1:25 - 4:15 րոպեներ

համայնքապետարանի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցները:

- Հունիսի 7-ին Ագարակում և Մեղրիում «Հայաստան» դաշինքի քարոզչական միջոցառմանը պարտադրաբար մասնակցել են Մեղրի համայնքի մանկապարտեզի, «Արևիք» արվեստի դպրոցի, համայնքապետարանի աշխատակիցները:
- Գորիսի «Գուսան Աշոտ» մշակույթի կենտրոնի տնօրենը[61] նույն կենտրոնի գրադարանավարին և մյուս աշխատակիցներին հարկադրել է մասնակցել «Հայաստան» դաշինքի կողմից հունիսի 7-ին Գորիս համայնքում կազմակերպված նախընտրական քարոզչությանը, իսկ հունիսի 15-ին աշխատանքից ազատելու սպառնալիքով խոչընդոտել է գրադարանավարի մասնակցությունը ՔՊԿ հանրահավաքին:
- Հունիսի 8-ին Լոռու մարզի մարզպետի տեղակալ Գոռ Ասրյանը ՔՊԿ օգտին քարոզչություն կատարելու նպատակով աշխատանքային ժամին ծառայողական մեքենայով այցելել է Ստեփանավան խոշորացված համայնքի Կաթնաղբյուր և Ուրասար բնակավայրեր: Նա դպրոցի դահլիճում քարոզչական բնույթի հանդիպում է ունեցել ուսուցիչների և այլ բնակիչների հետ՝ այդ ժամին դեռևս դասերը չավարտած աշակերտներին դպրոցից դուրս հանելով: Մարզպետի տեղակալի՝ արձակուրդում գտնվելու մասին որևէ փաստ առկա չէ:
- Հունիսի 9-ին, Գորիս համայնքի փոխհամայնքապետ Իրինա Յոլյանի որոշմամբ, համայնքային բյուջեից 6,130,000 ՀՀ դրամ գումարի չափ դրամական օգնություն է տրամադրվել 115 բնակչի[62]: Շահառուների ցանկում, բացի Գորիսից, կան նաև Տեղ և Տաթև համայնքի բնակիչներ: Ուշագրավ է, որ, նախորդ եռամսյակների համեմատ, համայնքում դրամական օգնությունների ծավալը կտրուկ աճել է:
- Հունիսի 10-ին Սյունիքի մարզի Տեղ համայնքում «Պատիվ ունեմ» դաշինքի՝ աշխատանքային ժամին տեղի ունեցող նախընտրական միջոցառմանը ներկա են եղել համայնքապետարանի աշխատակիցներ:
- Հունիսի 11-ին Նիկոլ Փաշինյանի՝ Բերդ կատարած քարոզչական այցին մասնակցել է նաև ՀՀ բարձրագույն տեխնոլոգիաների նախարար Հայկ Չոբանյանը[63], որի՝ արձակուրդի մեջ գտնվելու վերաբերյալ որևէ փաստ առկա չէ:
- Հունիսի 11-ին «Տավուշ» ՁՕԸ-ն ընկերության հաշվին աշխատակիցների ավտոմեքենաների գազալիցքավորում է իրականացրել, որպեսզի վերջիններս ներկա լինեն Ն. Փաշինյանի քարոզչական հանդիպմանը: Աշխատակիցների առջև նաև պայման է դրվել, որ նրանք այդ մեքենաներով առնվազն 1 մարդու տեղափոխեն հանդիպման վայր:
- Հունիսի 12-ին Հայաստանի էլեկտրական ցանցերի (ՀԷՑ) «Դեբետ» մասնաճյուղի Ստեփանավանի տեղամասի տնօրենը պարտադրել է աշխատակիցներին մասնակցել «Հայաստան» դաշինքի հանրահավաքին, ինչպես նաև ձայներ հավաքել նույն դաշինքի օգտին: Ավելին, դաշինքին չքվեարկող աշխատակիցներին սպառնացել են ազատել աշխատանքից:

---

[61] Հետագայում նշված արարքի համար տնօրենը կալանավորվել է:
[62] http://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=3fb0d4f5-6781-497c-a025-9d5ecb972327http://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=7b72cd6f-f061-424d-8fb0-4f2d3cf76c46
[63] https://www.facebook.com/1378368079150250/videos/1993629677460427

- Հունիսի 12-ին ՀԷՑ-ի Տաշիրի տեղամասի տնօրենը նույնպես պարտադրել է աշխատակիցներին գնալ «Հայաստան» դաշինքի հավաքին և սպառնացել աշխատանքից ազատել այն աշխատակիցներին, որոնք կմասնակցեն ՔՊԿ հավաքին:
- Հունիսի 12-ին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Ստեփանավանի և Տաշիրի տարածքային տեղամասերի ղեկավարները ստիպել են իրենց աշխատակիցներին մասնակցել «Հայաստան» դաշինքի հանրահավաքին: Տաշիրի տեղամասի աշխատակիցներին նաև արգելվել է մասնակցել հունիսի 10-ին ՔՊԿ անցկացրած հանրահավաքներին:
- Հունիսի 12-ին Ալավերդի-Ախթալա ճանապարհահատվածը վերանորոգող «ԱԱԲ պրոյեկտ» ՍՊԸ-ի աշխատակիցներին աշխատանքի հեռացման սպառնալիքով ուղարկել են քաղաք Վանաձոր՝ «Հայաստան» դաշինքի նախընտրական հանդիպմանը մասնակցելու նպատակով:
- Արզնի համայնքի «Ալյոնուշկա» մանկապարտեզի տնօրենը պարտադրել է աշխատակիցներին մասնակցել հունիսի 13-ին Ն. Փաշինյանի՝ Արզնի կատարած այցին: Տնօրենը սպառնացել է աշխատանքից ազատել աշխատակիցներից մեկին, որը հեռավորության պատճառով չի կարողացել մասնակցել հավաքին:
- Հունիսի 14-ին Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալը, օգնականը և քաղաքային զբոսայգու տնօրենը աշխատանքային ժամին մասնակցել են ՔՊԿ քարոզարշավին և բաժանել քարոզչական բուկլետներ:
- Հունիսի 16-ին Լոռու մարզպետարանից էլեկտրոնային գրություն է ուղարկվել մարզի 20 դպրոցներին առ այն, որ մարզպետարանը կարող է փոխադրամիջոց տրամադրել, եթե դպրոցի կոլեկտիվները ցանկանան մասնակցել հունիսի 17-ին ՔՊԿ-ի՝ Երևանում կայանալիք հանրահավաքին: Նամակում հատուկ շեշտվել է՝ տարածել գրությունը կոլեկտիվների շրջանում:
- Հունիսի 17-ին «Հայաստան» դաշինքի՝ Մարտունի քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցած նախընտրական հանդիպմանը մասնակցել են Մարտունու գազաֆիկացման և գազամատակարարման միավորման, Մարտունու «Տրանսգազ»-ի, «Մարտունի» էլեկտրացանցի մեծ թվով աշխատակիցներ:
- Թումանյան-Ալավերդի-Ախթալա հատվածներում ճանապարհաշինական «ԱԱԲ պրոյեկտ» ՍՊԸ ընկերությունն իր աշխատակիցներին պարտադրել է մասնակցել հունիսի 18-ին «Հայաստան» դաշինքի՝ Երևան քաղաքում կայացած հանրահավաքին:
- Վանաձորի «Արփի» տաքսի ծառայության մեքենաների ապակիների վրա, ինչպես նաև մեքենաների սալոնում առկա են եղել ՔՊԿ քարոզչական պաստառներ: Որոշ վարորդներ նշել են, որ դա ծառայության ղեկավարի հրամանն է, որը կապ չունի իրենց քաղաքական դիրքորոշման հետ:

Վարչական ռեսուրսի չարաշահում են գնահատվել նաև հանրային կառույցների ֆեյսբուքյան պաշտոնական էջերում քարոզչական բնույթի հրապարակումները: Մասնավորապես.

- Արարատի մարզի Նորաշեն համայնքապետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել է Ն. Փաշինյանի մարզային այցելությունների գրաֆիկը[64]:

[64] https://www.facebook.com/100043947723847/posts/34923959988495

- Ի աջակցություն Ն. Փաշինյանի՝ գրառում է կատարվել Արմավիրի թիվ 2 մանկապարտեզի ֆեյսբուքյան պաշտոնական էջում, որը, սակայն, որոշ ժամանակ անց հեռացվել է:
- Ի աջակցություն Ն. Փաշինյանի՝ գրառում է կատարվել Վեդու բժշկական կենտրոնի ֆեյսբուքյան պաշտոնական էջում, որը ևս շուտով հեռացվել է:
- Սիսիանի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջը ակտիվորեն օգտագործվել է «Հայաստան» դաշինքի օգտին[65]:

Կաշառք և «բարեգործություն»

Նախընտրական ժամանակահատվածում դիտարկվել է բարեգործական գործունեության ակտիվացում, որն ակնհայտորեն միտված է եղել ներգործելու ընտրողների որոշման վրա:

«Ականատես»-ի կողմից արձանագրվել է ԱԺ արտահերթ ընտրություններին առնչվող բարեգործության կամ բարեգործության խոստման մի քանի դեպք, մասնավորապես.

- 2021 թ.-ի ապրիլի 12-ին հայտարարվել է, որ «Տիգրան Արզաքանցյան» բարեգործական հիմնադրամի ջանքերով Գավառում կգործարկվի կարի արտադրամաս, որի արդյունքում կստեղծվի 100-ից ավելի նոր աշխատատեղ համայնքի բնակիչների համար[66]:
- 2021 թ.-ի մայիսի 13-ին Ա. Աբրահամյանը հայտարարել է երիտասարդների համար եզակի հնարավորության մասին՝ ներկայացնելով “My Mentor” նախագիծը, որի շրջանակում պատրաստվում է աջակցել այն երիտասարդներին, որոնք ունեն սոցիալական բաղադրիչ ունեցող գաղափար/գաղափարներ՝ բիզնեսի, մշակույթի, կրթության կամ այլ ոլորտներում[67]:
- 2021 թ.-ի մայիսի 15-ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիա բնակավայրում տեղի է ունեցել «Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակի երկրորդ համար, «Վերածնվող Հայաստան» կուսակցության ղեկավար, Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի կողմից ֆինանսավորվող եկեղեցու հիմնարկեքի արարողությունը[68]:
- 2021 թ.-ի մայիսի 20-ին «Տիգրան Արզաքանցյան» բարեգործական հիմնադրամը Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Վերին Շորժա սահմանամերձ համայնքի սահմանապահներին տրամադրել է աջակցություն՝ վրաններ, քնապարկեր, անջրաթափանց վերարկուներ, ծածկոցներ, շշալցված խմելու ջուր և երկու գեներատոր[69]:
- 2021 թ.-ի մայիսի 21-ին տեղի է ունեցել «Իմ քայլը» հիմնադրամի կողմից վերանորոգված Գորիս քաղաքի թիվ 6 հիմնական դպրոցի մարզադահլիճի բացման արարողությունը, որին մասնակցել են «Իմ քայլը» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Աննա Հակոբյանը և խորհրդի անդամ Լենա Նազարյանը, Սյունիքի փոխմարզպետ Կարո

[65] https://www.facebook.com/Sisian.info/
[66] https://www.facebook.com/TigranArzakantsyanFoundation/posts/106073244933229
[67] https://www.facebook.com/ara.abramyan.official/photos/a.314270512267895/1413694798992122; https://www.mymentor.am/
[68] www.facebook.com/watch/?v=807556496542600, www.aravot.am/2021/05/15/1191328/;
[69] www.tigranarzakantsyan.foundation/hy/elementor-2956/

Ավանեսյանը[70], այն դեպքում, երբ տվյալ մարզադահլիճի բացումն արդեն իսկ տեղի էր ունեցել դեռևս ապրիլի 26-ին[71]:

- 2021 թ.-ի մայիսի 25-ին Ա. Աբրահամյանի կողմից սահմանային դիրքերի կահավորման, պաշտպանական այլ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ գերժամանակակից պարագաներ են նվիրաբերվել զորամասերին[72]:
- Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Պ. Դուրյան թաղամասի բազմաբնակարան շենքերի բնակարանների դռներին և վերելակներում ԲՀԿ-ն փակցրել է թռուցիկ-հրավերներ հետևյալ բովանդակությամբ. «Սիրելի ավանցիներ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Ավան վարչական շրջանի պատգամավորի թեկնածու Գագիկ Պետրոսյանը հունիսի 1-ին՝ ժամը 18:00-ից մինչև 20:00-ն, Ավանի Դուրյան թաղամասի 33 շենքին հարող խաղահրապարակում հրավիրում է բոլոր երեխաներին՝ անցկացնելու ուրախ և անմոռանալի ժամանց հեքիաթային հերոսների հետ: Սիրով սպասում ենք Ձեզ»:
- 2021 թ.-ի հունիսի 1-ին Լերմոնտովոյի դպրոցը Ռուսաստանի հայերի միության կողմից ստացել է համակարգիչներ, իսկ Ֆիոլետովոյի դպրոցը՝ մարզական գույք[73]:
- 2021 թ.-ի հունիսի 2-ին «Ռուսաստանի հայերի միություն»-ը կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանի անունից Խարբերդի մասնագիտացված մանկատանը նվիրաբերել է համակարգիչներ, լամպեր, կենցաղային և տնտեսական անհրաժեշտության իրեր[74]:
- 2021 թ.-ի հունիսի 2-ին «Որդուս» ՀԿ-ն Կարին Տոնոյանի մասնակցությամբ Սյունիքի սահմաններ է տարել զինվորների համար նախատեսված մի շարք պարագաներ, այդ թվում՝ զինվորական վրաններ, քնապարկեր, հագուստ, սնունդ և հիգիենայի միջոցներ[75]:
- 2021 թ.-ի հունիսի 6-ին «Տիգրան Արզաքանցյան» բարեգործական հիմնադրամի նախագահ Տ. Արզաքանցյանի և նրա տիկնոջ՝ Նատալյա Ռոտենբերգի ֆինանսավորմամբ Գավառում բացվել են մանկական զվարճանքի և ժամանցի կենտրոն, մանկական խաղահրապարակ[76]:
- ԲՀԿ Գավառի տարածքային գրասենյակի համակարգող և կուսակցության ընտրական ցուցակով պատգամավորի թեկնածու Արամայիս Ապրոյանը ընտրողներին սննդամթերքի տեսքով կաշառք է տվել իր կուսակցության օգտին կողմ քվեարկելու համար: Խոսքը 7,000 ՀՀ դրամ արժողությամբ սննդամթերքի փաթեթների մասին է[77]:
- Հայաստանի դեմոկրատական կուսակցության Արմավիրի շտաբում Տ. Արզաքանցյանին ուղղված դիմումով քաղաքացին ֆինանսական օգնության դիմաց խոստացել է ընտրել նշված կուսակցությանը:

---

70 https://mystep.foundation/hy/news/2853
71 https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/1380218082358706
72 https://www.facebook.com/ara.abramyan.official/posts/1422019471492988
73 https://www.facebook.com/ara.abramyan.official/posts/1426603111034624
74 https://www.facebook.com/ara.abramyan.official/posts/1428122054216063
75 www.facebook.com/permalink.php?story_fbid=210657454220373&id=100139621938824
76 https://fb.watch/5Z-NsD-d5a
77 www.azatutyun.am/a/31303910.html

Բացի վերոնշյալ ստուգված դեպքերից՝ տարբեր համայնքներ այցելությունների ընթացքում դիտորդներին բնակիչների կողմից ներկայացվել են կաշառքի, ընտրողի ազատ կամքի իրականացումը խոչընդոտելու դեպքեր, որոնք հնարավոր չի եղել լիարժեք կերպով ճշտել: Մասնավորապես.

- «Հայաստան» դաշինքի կողմից Սպիտակի ջրմուղում գրանցել են նոր աշխատողներ, և առանց որևէ աշխատանք կատարելու նրանց տվել են գումար: Բնակիչները նշել են նաև, որ Սպիտակի ջրմուղի տնօրենը «Հայաստան» դաշինքի աջակիցներից է:
- Սպիտակում «Հայաստան» դաշինքի շտաբի աշխատակիցները տնայցեր են կատարել և անձնագրային տվյալներ վերցրել գումարի դիմաց:
- Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ, նախկին պատգամավոր Արկադի Համբարձումյանին պատկանող Սպիտակի թռչնաֆաբրիկայի աշխատակիցներին պարտադրվել է ընտրել «Պատիվ ունեմ» դաշինքին, որի ընտրական ցուցակի թեկնածուների շարքում է նաև Ա. Համբարձումյանի որդին՝ Ստանիսլավ Համբարձումյանը:
- Ստեփանավանի բնակիչների հավաստմամբ՝ «Հայաստան» դաշինքը տուն է վարձակալել, որտեղից երկու օրը մեկ բեռնատարով ապրանքներ են բերվել և տեղափոխվել:
- Տավուշի մարզում «Պատիվ ունեմ» դաշինքը քաղաքացիներին առաջարկել է 100,000 ՀՀ դրամ՝ պայմանով, որ ընտրության համար 10 ձայն ապահովեն:

Ատելության խոսույթ

Նախընտրական քարոզարշավի ընթացքում ատելության բառապաշարը հասել է ծայրահեղ վտանգավոր ծավալների՝ ընդհուպ առաջացնելով մտահոգություն քաղաքացիական բախումների հնարավոր ռիսկերի վերաբերյալ: «Ականատես»-ի դիտորդների այցելած 150-ից ավելի համայնքների բնակիչների 60%-ն արձանագրել է, որ մրցակից կուսակցություններն իրենց քարոզչությունը տեղերում հիմնականում իրականացնում են թշնամանք և ատելություն տարածելու միջոցով:

Հարկ է նկատել, որ Հայաստանում ատելության մթնոլորտը սկսել է թեժանալ հիմնականում 2018 թ.-ի հեղափոխությունից հետո՝ ինչպես իշխանությունից զրկված քաղաքական ուժերի, այնպես էլ իշխանության ղեկը ստանձնած ներկայացուցիչների կողմից, սակայն այն հատկապես ահագնացել է 2020 թ.-ի Արցախյան պատերազմից հետո: Պետք է նկատել, որ ատելության խոսույթը հաճախ մեկտեղված է եղել սուտ լուրերով, ապատեղեկատվությամբ կամ չհիմնավորված քննադատությամբ՝ հիմնականում զգացմունքային ֆոնը սրելու և քաղաքացիների վրա ներգործելու, այս կամ այն քաղաքական ուժի նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորելու նպատակով:

Ընտրությունների նախաշեմին քաղաքական մրցակիցները, հատկապես ՔՊԿ կուսակցությունը և «Հայաստան» դաշինքը, օգտագործելով «նախկինների» և «ներկաների» հակամարտությունը, չեն խորշել անպատշաճ արտահայտություններ օգտագործելուց, խտրական, վիրավորական և

սպառնալից ենթատեքստով ելույթներ ունենալուց, ինչը թեժացրել է մթնոլորտը և խորացրել պառակտումը: Օգտագործվել են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «ոհմակի ատամները ջարդելու ենք»[78], «կտրորենք բոլորիդ, 500 դրամանոց քյաբաբ ուտողներ»[79], «եթե կարողանա բժշկից տեղեկանք ներկայացնել, որ հոգեկան առողջության հետ խնդիր չունի, կքննարկենք բանավեճի հարցը»[80] և այլն:

Նախընտրական քարոզչության առանձնահատուկ թեմա է դարձել տղամարդկությունը հիմնավորելու խնդիրը. «դուելի պատրաստ եմ, յուրաքանչյուր զենքի տեսակով, բայց չեմ կարծում տղամարդկությունից խոսացողը տղամարդկության հետ առնչություն ունի»[81] կամ «հեշտ է տղամարդլամիշ լինելը»[82]: Էապես շատացել է անքաղաքավարի, հայհոյախառն, արժանապատվությունը վիրավորող և նվաստացնող բառապաշարը («անհայրենիք», «ազգի դավաճան»[83], «ծաղրածու խեղկատակ»[84], «խելագար»[85], «ժեխապետ»[86], «թալանչի», «անբարոյական»[87], «ալկոհոլիկ»[88], «ջունգլիներից փախած վայրենի»[89], «կենդանիներ տեղափոխող վանդակից դուրս եկած բանդերլոգներ»[90] և այլն):

Ահագնացել են սպառնալիքները հատկապես ՔՊԿ, «Հայաստան» դաշինքի, «Պատիվ ունեմ» դաշինքի կողմից՝ փոխադարձ հաշվեհարդարի ակնկալիքով: Օգտագործվել են այնպիսի սպառնալիքներ, ինչպիսիք են՝ «վենդետա լինելու է»[91], «քաղաքացիական վրեժ, վենդետա ու կադրային ջարդ է լինելու»[92], «բոլոր քրեական թափթփուկները պառկելու են Ազարակի ասֆալտների վրա»[93], «էս չագուչը ժողովրդի ձեռով իջնելու ա ձեր դատարկ գլուխներին իրավունքի և դիկտատուրայի ձևով»[94], «փաստեր եմ հրապարակելու իր մասին, իր ընտանիքի մասին»[95], «թող մի փաստ ներկայացնի, չներկայացրեց՝ մորթելու եմ»[96], «ձեռքներիս պետք է դագանակ ունենանք, որ ով մուրճով գա, դագանակով գլխին տանք»[97]:

---

[78] https://www.youtube.com/watch?v=mzDmx0lXjBE&ab_channel=1inTV, 5:45 րոպեից
[79] https://www.youtube.com/watch?v=Jelif3X8fVs&ab_channel=%D4%BC%D5%88%D5%92%D5%90%D4%B5%D5%90%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81, 9:45-10:24 րոպեներ
[80] https://www.facebook.com/Robertkocharyan/videos/953028338878643
[81] https://www.facebook.com/watch/?v=2945881352407120
[82] https://www.youtube.com/watch?v=fGfFHxwBEIw&ab_channel=168.am, 1:11 րոպեից
[83] https://fb.watch/6baxw1qvmG
[84] https://fb.watch/6bc-xk_vcg/
[85] https://fb.watch/6bbWcP4Zbb
[86] https://www.facebook.com/pativunenk/posts/123338879922066
[87] https://www.youtube.com/watch?v=lXmknUoFONc?t=80, 1:20 րոպեից
[88] https://fb.watch/6bamC1nzdy, https://fb.watch/6barkJmsCw
[89] https://fb.watch/6bddAK3hIF
[90] https://fb.watch/6bcb5HgAX-
[91] https://www.youtube.com/watch?v=mOdQyFjQW_A
[92] https://www.youtube.com/watch?v=qPsTd2ouTBY
[93] https://civic.am/politics/8434--.html
[94] https://civic.am/politics/8465--.html
[95] https://hetq.am/hy/article/131897
[96] https://www.youtube.com/watch?v=lXmknUoFONc?t=80, 1:20 րոպեից
[97] https://medialab.am/163693/

Հանրահավաքների ժամանակ ՀՀ վարչապետի պաշտոնակատարի կողմից ցուցադրաբար օգտագործվել է նաև մուրճ, որը լարված մթնոլորտում բազմապատկել է ուժի գործադրման սպառնալիքի հետ ասոցացվող մտահոգությունները: Վերջինս հետագայում իբր «հավասարակշռվել» է «Հայաստան» դաշինքին տրվող մանգաղով, ինչը, սակայն, ատելության և սպառնալիքների ընդհանուր ֆոնին շատերի կողմից դիտվել է որպես սառը զենքի ցուցադրում:

«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության դիմումի համաձայն՝ թիվ ՎԴ/6861/05/21 գործով[98] ՀՀ վարչական դատարանն անդրադարձել է ՔՊԿ թեկնածու Ն.Փաշինյանի՝ իր ելույթի ընթացքում հնչեցրած հետևյալ արտահայտությունների գնահատմանը. «Դրանց սաղին բռնելու եմ շինեմ», «ճակատից շարեմ կասեք բռնություն ա», «հանկարծ չփորձեք թպրտալ», «կարճ ասած՝ էդ համայնքների ղեկավարները ռադ են լինելու, վենդետա է լինելու», «ընտրություններից հետո այ էս պողպատե մանդատով գալու ենք ձեր հետևից», «Ավշարի այս հրապարակում անձամբ ասֆալտին եմ պառկեցնելու», «կկոտրենք, կկտրենք Սյունիքը մնացած Հայաստանին հակադրելու փորձ անող ամեն մի ձեռք», «բոլորիդ լիազորում եմ տեղում պողպատե մանդատավորել ստահակներին»: Դատարանն արձանագրել է. «... ընտրություններին մասնակցող կուսակցության կամ թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ցանկացած կոնտեքստով, անձնավորված կամ անորոշ թվով անձանց ուղղված, որոշակի կամ անորոշ ձևակերպմամբ վերը շարադրված մտքերը պարունակող արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող են ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիք, հետևաբար սույն վարչական գործով հայցվորի փաստարկներն առ այն, որ երրորդ անձ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից վերը նշված տեսաձայնագրություններում հնչեցված արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող էին ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիքներ, հիմնավոր են...»:

Պետք է նկատել, որ ատելության մթնոլորտը լրացուցիչ սնուցվել է երրորդ՝ հաճախ անանուն անձանց կողմից իրականացվող հակաքարոզչությամբ:

Թշնամանքի և ատելության տարածման համատեքստում սովորականից ավելի հաճախակի են եղել մրցակիցների քարոզչանյութերի կամ գույքի դիտավորյալ վնասման դեպքերը: Այսպես, ՁԼՄ-ներով հրապարակվել է դրվագ, որում ներկայացված է, որ Նիկոլ Փաշինյանի աջակիցները Չարենցավանում հարձակվել են Ռոբերտ Քոչարյանի գլխավորած «Հայաստան» դաշինքի նախընտրական շտաբի վրա և ձվերով հարվածել շտաբի պատուհաններին[99]:

Ի լրումն քաղաքական մրցակիցների նկատմամբ սպառնալիքների՝ քաղաքական ուժերից մեկը («Հայաստան» դաշինք) բազմիցս ատելության քարոզ է իրականացրել քաղաքացիական հասարակության կառույցների նկատմամբ՝ պիտակավորելով «սորոսական»[100], և ուղղակիորեն սպառնացել է ընտրվելու պարագայում սահմանափակել ժողովրդավարական ու

[98] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative
[99] https://bit.ly/3xnlTgr
[100] https://fb.watch/6bbpZ8ASFs/

քաղաքացիական ազատությունները՝ արգելելով կամ սահմանափակելով միջազգային կառույցներից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների գործունեությունը[101]:

Դիտորդի իրավունքների խոչընդոտում

Դիտորդական առաքելության ընթացքում արձանագրվել է դիտորդների իրավունքների խոչընդոտման երկու դեպք՝ ՔՊԿ նախընտրական քարոզչական միջոցառումների ընթացքում՝ Արտաշատ և Աբովյան համայնքներում: Մասնավորապես.

- Հունիսի 4-ին դիտորդների մուտքն արգելվել է Արտաշատ քաղաքի թատրոնի շենք, որտեղ տեղի է ունեցել Ն. Փաշինյանի հանդիպումը քաղաքացիների հետ: Անվտանգության աշխատակիցները պատճառաբանել են, թե ներսում նեղ կուսակցական հավաք է, սակայն կան փաստեր, որ քաղաքացիների համար ելումուտը բաց է եղել, միջոցառմանը մասնակցել են նաև անչափահասներ[102]:
- Նմանօրինակ դեպք գրանցվել է նաև հունիսի 6-ին Աբովյան համայնքի երաժշտական դպրոցում՝ բնակիչների հետ ՔՊԿ ներկայացուցիչների հանդիպման ընթացքում[103]:

Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորում

Նախընտրական քարոզչության ֆինանսավորմանն առնչվող կարգավորումներն ու պրակտիկան պատշաճ չեն ապահովում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ֆինանսների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և արդարացի մրցապայքարը:

Նախկինում և ներկայում իշխանության ղեկին գտնվող մի շարք կուսակցությունների (կամ անհատ քաղաքական գործիչների) գույքի և եկամուտների ծավալը էապես գերազանցում է մյուսներին, ինչն ընտրապայքարում ստեղծում է անհավասար ելակետային պայմաններ: Այս իրավիճակում պետական և հանրային վերահսկողությունն առնվազն հարցականի տակ պետք է դնի նրանց կողմից ընտրապայքարում ներդրվող հսկայական ռեսուրսների ծագման աղբյուրներն ու օրինականությունը:

Ի լրումն որոշ քաղաքական ուժերի կողմից անհամեմատ մեծածավալ ռեսուրսների տիրապետման ու տնօրինման գործոնի՝ նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածից դուրս վարչական ռեսուրսի կիրառումը և երրորդ անձանց կողմից իրականացվող՝ սահմանափակումների ու հաշվետվողականության չենթարկվող քարոզչության հնարավորությունն առաջացնում են խնդիրներ, որոնք մասամբ ի չիք են դարձնում նախընտրական քարոզչության համար օրենքով սահմանված՝ հավասար մրցակցության ապահովման երաշխիքները: Եվ չնայած համամասնական ընտրակարգի պարագայում առավել մեծ կշիռ պետք է ձեռք բերեն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ծրագրերը

[101] https://iravaban.net/336129.html
[102] https://drive.google.com/drive/folders/1Ob0u7nL8YVwS4B8WAnRRWgBtGDBO2TM4?usp=sharing
[103] https://drive.google.com/drive/folders/14sWqgmpDrbmdgInNQbmp32Sp8KSyVfds?usp=sharing

և դրանց շուրջ քննարկումները, 2021 թ.-ի ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզարշավը շարունակել է դրսևորվել որպես քաղաքական ուժերի տնտեսական կարողությունների մրցավազք:

Կուսակցությունների հանրային ֆինանսավորում

Հանրային ֆինանսավորում ներկայում ունեն 5 կուսակցություններ, որոնք 2018-ի ԱԺ ընտրություններին ստացել են ընտրողների 3%-ից ավելի քվեն:

Պատկեր 2. Կուսակցությունների տարեկան հանրային ֆինանսավորում պետության կողմից (2020 թ.)



Կուսակցությունների գույքի և եկամուտների մասին հայտարարագրեր

2021 թ.-ի ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող 36 կուսակցություններից նորաստեղծ 10-ի վերջին տարվա գույքի և եկամուտների հայտարարագրերում նշվել են զրոյական տվյալներ, 12-ը որևէ մասնավոր նվիրատվություն չի գրանցել, իսկ 14-ը գանձել է անդամավճարներ և/կամ նվիրատվություններ ստացել մասնավոր աղբյուրներից:

Ստորև բերված պատկերը վեր է հանում Հայաստանում կուսակցությունների ռեսուրսների զգալի անհամաչափությունը. ֆինանսների առումով կտրուկ առավելություն ունի Հայաստանի հանրապետական կուսակցությունը, իսկ դրան մեծ տարբերությամբ հաջորդում են «Լուսավոր Հայաստան»-ը և «Քաղաքացիական պայմանագիր»-ը:

Պատկեր 3. Կուսակցությունների անդամավճարները/նվիրատվությունները (մասնավոր աղբյուրներից) 2020 թ.-ի մայիսի 1-ից 2021 թ.-ի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում



Վերը ներկայացված պատկերում տեսանելի չեն «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամավճարները/նվիրատվությունները, թեև այդ մասին տեղեկություն առկա է կուսակցության 2020 թ.-ի տարեկան հաշվետվությունում:

Առհասարակ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ներկայացվող հաշվետվությունների և հայտարարագրերի ժամկետների տարբերությունը դժվարացնում է ամբողջական պատկերի ընկալումը և վերլուծությունը: Վերջին տարեկան հաշվետվությունների ժամկետը ներառում է 2020 թ.-ի հունվար-դեկտեմբեր, իսկ ընտրական գործընթացում պահանջվող գույքի և եկամուտների հայտարարագրի վերջնաժամկետը՝ 2020 թ. մայիս - 2021 թ. ապրիլ ժամանակահատվածը:

Կուսակցությունների հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է մի քանի խնդիր: Մասնավորապես.

- «Հայրենիք» կուսակցությունը, ըստ հայտարարագրի, վարձակալում է գրասենյակ, սակայն միաժամանակ նշել է զրոյական եկամուտներ և դրամական միջոցներ[104]: Ընդ որում, 2012-ից սկսած՝ կուսակցության azdarar.am-ում հրապարակված տարեկան հաշվետվությունները զրոյական են: Սա կարող է նշանակել, որ կուսակցությունն աջակցություն է ստանում անհայտ աղբյուրներից:
- 2021 թ.-ի ապրիլին գրանցված «Վերելք» կուսակցությունը նշում է 15,000 դրամ դրամական միջոցի առկայություն, սակայն եկամուտները զրոյական են[105]: Հայտնի չէ այս գումարի աղբյուրը:
- «Հանրապետություն» կուսակցության հայտարարագրում անդամավճարների գումարը նշված է 1,000,000 ՀՀ դրամ, սակայն դրա կողքին տառերով նշված է «տաս մլն.»[106]: Անհասկանալի է, թե որն է իրական թիվը:

Խնդրահարույց են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ներկայացվող գույքի և եկամուտների հայտարարագրերում տվյալների լիարժեքությունն ու արժանահավատությունը: Այսպես, անշարժ գույքի սեփականություն է հայտարարագրել միայն 3 կուսակցություն՝ ՀՀԿ-ն (61 միավոր), ՀՅԴ-ն (71 միավոր) և ՀԱԿ-ը (1 միավոր): Մյուսներից միայն «Վերածնվող Հայաստան», «Հայրենիք», «Ազատական», Քրիստոնեա-ժողովրդավարական, «Հանրապետություն» և «Լուսավոր Հայաստան» կուսակցություններն են նշել վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով զբաղեցրած տարածքներ: Ակնհայտորեն գործունեություն ծավալող այնպիսի կուսակցություններ, ինչպիսիք են ՔՊԿ-ն, «Բարգավաճ Հայաստան»-ը, «Քաղաքացու որոշում»-ը կամ «Ազգային-ժողովրդավարական բևեռ»-ը, որևէ իրավունքով տիրապետվող անշարժ գույք չեն հայտարարագրել:

Նախընտրական հիմնադրամի ձևավորում

ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից Կենտրոնական բանկում բացված հատուկ հաշիվներում նախընտրական հիմնադրամների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակային հասանելի է միայն մասամբ, ինչը սահմանափակում է դրանց նկատմամբ հանրային վերահսկողության հնարավորությունը:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ նախընտրական հիմնադրամին մուծումներ կարող է կատարել կուսակցությունը՝ առավելագույնը 100,000,000 ՀՀ դրամ, ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածու՝ առավելագույնը 5,000,000 ՀՀ դրամ, և ՀՀ քաղաքացի հանդիսացող յուրաքանչյուր ֆիզիկական անձ՝ առավելագույնը 500,000 ՀՀ դրամ: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումից ի վեր՝ 3 աշխատանքային օրը մեկ, ՎՎԾ-ն Կենտրոնական բանկից ստանում է տվյալներ դրանցում

[104] https://res.elections.am/images/doc/PATIVUNEM_20_06_2021.rar
[105] https://res.elections.am/images/doc/VK_20_06_2021.pdf
[106] https://res.elections.am/images/doc/HK_20_06_2021.pdf

բացված նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի մասին. սրանք այնուհետ ամփոփվում են տեղեկանքում, որը հրապարակվում է ԿԸՀ կայքում[107]:

Հարկ է նկատել, որ սահմանված մեխանիզմը հնարավորություն չի տալիս վերահսկելու նախընտրական ֆինանսները մասնավորապես այն պատճառով, որ հրապարակվում են միայն մուծումների ժամանակագրությունը և մուծված գումարի չափը[108], մինչդեռ մուծումների աղբյուրները հրապարակային չեն և հասանելի չեն հանրության համար:

Այսպես, 2021 թ.-ի հունիսի 20-ի ԱԺ արտահերթ ընտրություններից հետո ՎՎԾ-ն հայտարարել է, որ եղել են արտոնված մուծումների առավելագույն չափի գերազանցումներ, որի պատճառով 3,193,600 ՀՀ դրամ փոխանցվել է պետական բյուջե[109], սակայն հանրության համար հասանելի չէ տեղեկությունը, թե որ կուսակցություններին են փոխանցվել այդ գումարները:

Նախընտրական մուծումների աղբյուրները հասանելի են ՎՎԾ-ին, սակայն նրա իրավասությունները սահմանափակ են, և այն չի ստուգում նախընտրական հիմնադրամ փոխանցվող գումարների ծագման աղբյուրների հավաստիությունը՝ համադրելով, օրինակ, մուծվող գումարները դրանք փոխանցող անձանց եկամուտների հետ:

Նախընտրական մուծումների աղբյուրները ԱԺ ընտրությունների ժամանակ հայտնի են դառնում նաև ԱԺ խմբակցությունների կողմից ՎՎԾ-ում նշանակված աուդիտորներին[110]: 2021 թ.-ի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին ՎՎԾ-ում աուդիտոր նշանակել են միայն «Իմ քայլը» և ԲՀԿ խմբակցությունները, իսկ «Լուսավոր Հայաստան»-ը չի օգտվել օրենքով սահմանված տվյալ իրավասությունից: Այնուամենայնիվ, կուսակցությունների նկատմամբ ցածր վստահության և հանրամատչելի տվյալների անհասանելի լինելու պարագայում ակնհայտորեն բավարար չի կարող համարվել այս կառույցների կողմից վերահսկողությունը, և անհրաժեշտ է հնարավորինս ապահովել բաց տեղեկատվություն:

Նախընտրական հիմնադրամից ծախսեր

Տարբեր քաղաքական ուժերի նախընտրական ծախսերի վերլուծությունը բացահայտում է դրանց միջև առկա հսկայական տարբերությունը, ինչը խաթարում է հավասար մրցակցությունը և ոմանց տալիս ակնհայտ առավելություն: Միաժամանակ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կատարած ծախսերի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար առկա են մի շարք խոչընդոտներ և բացեր:

Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ նախընտրական հիմնադրամի միջոցներից պարտադիր պետք է կատարվեն ՁԼՄ-ներով նախընտրական քարոզչություն իրականացնելու, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով

[107] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 26, մաս 7:
[108] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 28, մաս 2:
[109] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 92:
[110] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 29, մաս 3:

դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման և ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ տպագիր նյութերի) պատրաստման ծախսերը[111]: Դրանք չպետք է գերազանցեն օրենսգրքով սահմանված 500,000,000 դրամը:

Հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախընտրական ծախսերի թույլատրելի սահմանագծին (500,000,000 ՀՀ դրամ) առավել մոտեցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (476,985,880 ՀՀ դրամ), այնուհետ՝ «Հայաստան» (330,856,650 ՀՀ դրամ) և «Պատիվ ունեմ» դաշինքները (271,757,269 ՀՀ դրամ): Համադրելով ծախսերը և ընտրությունների արդյունքները՝ ակնհայտ է դառնում այս քաղաքական ուժերի առավելությունը ընտրություններին մասնակցող մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նկատմամբ:

Ստորև ներկայացված են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերն ու ելքերը:

Պատկեր 4. Կուսակցությունների/կուսակցությունների նախընտրական դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերն ու ելքերը



[111] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 27, մաս 1:



Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ եթե հայտարարագրման ենթակա ապրանքներն ու ծառայությունները մատուցվել կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում[112]: Հաշվի առնելով այն, որ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչությունը փաստացի սկսվել էր պաշտոնական մեկնարկի ամսաթվից՝ հունիսի 7-ից մոտ 2.5 ամիս առաջ, ենթադրվում է, որ կատարված ծախսերը առնվազն համարժեք դրամական միջոցների կամ եկամուտների տեսանկյունից պետք է լիարժեքորեն արտացոլվեին հայտարարագրերում: Միաժամանակ պետք է արձանագրել, որ քարոզչանյութերին առնչվող որոշ կարգավորումներ և գործընթացներ խոչընդոտում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կատարած ծախսերի նկատմամբ հանրային վերահսկողությունը: Այսպես, մի շարք դեպքերում վահանակների և պաստառների վրա պատվիրատուի, տպաքանակի և տպագրող ընկերության վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը անհնարին է դարձնում ընտրարշավի մասնակից քաղաքական ուժերի կողմից հայտարարագրված տեղեկատվության իսկությունը ճշգրտելու գործընթացի իրականացումը:

Բարդ է վերահսկողությունը 5 քառակուսի մետրից պակաս մակերես ունեցող պաստառների տարածման նկատմամբ: Թեև սահմանվում է ոչ խտրական և ոչ կողմնակալ բաշխման սկզբունքը, կանոնակարգումների բացակայությունը անհնարին է դարձնում վերահսկողությունը ինչպես տվյալ պահանջի կատարման, այնպես էլ կատարված ծախսերի նկատմամբ, քանի որ, օրինակ, հնարավոր է՝ տնօրինող ընկերությունը վահանակները տրամադրի իր նախընտրած թեկնածուին՝ մերժելով կամ ավելի բարձր գին կամ ավելի անհարմար տեղադիրք առաջարկելով

[112] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 27, մաս 2:

մյուսներին, ինչպես նաև մտնի գործարքի մեջ թեկնածուների հետ՝ սխալ ներկայացնելով իրական քանակը և ծախսերը:

5 քառակուսի մետրից ավել և պակաս մակերես ունեցող վահանակների խնդրով «Ականատես»-ը հարցումներ է արել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (միջպետական, հանրապետական և միջհամայնքային նշանակության ճանապարհներին տեղադրված վահանակների հարցով), թվով 24 քաղաքային համայնքների ղեկավարներին (ներհամայնքային ճանապարհներին տեղադրված վահանակների հարցով) և գովազդային ընկերություններին (վահանակների քանակի, մակերեսի, հասցեների, գների վերաբերյալ): Նշված նախարարությունից պատասխան չի ստացվել, 24 համայնքային իշխանություններից հարցումներին պատասխանել է միայն 16-ը: Գովազդային ընկերությունների մի մասը հղում է կատարել ԿԸՀ կայքում հրապարակված 5 քառակուսի մետր մակերեսը գերազանցող պաստառներ տնօրինող ընկերությունների և պաստառների հասցեների ցանկին[113], մյուս մասը հրաժարվել է տրամադրել տեղեկատվություն[114]: Այսինքն՝ հնարավոր չի եղել, նույնիսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, տեղեկատվություն տնօրինողներից ստանալ պատասխան՝ ընտրապայքարի հավասարության վերաբերյալ համապատասխան վերլուծություն իրականացնելու նպատակով:

Չհայտարարագրվող ծախսեր

Նախընտրական հիմնադրամից ֆինանսավորման հաշվետվողականության նախատեսված շրջանակը ԱԺ արտահերթ ընտրություններին բավականին սահմանափակ էր[115] և չի արտացոլել մի շարք կարևոր և խոշոր ծախսեր, ինչպես ընտրական շտաբների գրասենյակային ծախսերը, քարոզարշավում տարբեր գործառույթներով ներգրավված անձանց վարձատրությունը, տրանսպորտային, միջոցառումների կազմակերպման և մի շարք այլ ծախսեր: Հնարավոր է նաև, որ որոշ ծախսեր ներառվեն կուսակցությունների տարեկան հաշվետվություններում, սակայն դրանք փաստորեն հանրության համար հասանելի կդառնան միայն 2022 թ.-ի մարտի 25-ի վերջնաժամկետից հետո:

Բացի դրանից՝ կարգավորված չեն, հետևաբար մրցապայքարի հավասարության վերաբերյալ դատողություններ անելիս անտեսվում են քաղաքական ուժերի հետ փոխկապակցված կամ դրանց աջակից երրորդ անձանց կողմից կատարվող ծախսերը: Այս բացը թույլ է տալիս, որ բազմաթիվ խոշոր ծախսեր պարզապես քողարկվեն, կոծկվեն՝ աղավաղելով քարոզարշավի ֆինանսավորման իրական պատկերն ու մրցակիցների համար ստեղծված պայմանները:

---

[113] https://res.elections.am/images/doc/vahanak20.06.21.xlsx

[114] Հատկանշական է, որ մասնավոր ընկերությունների դեպքում կիրառելի չէ «Տեղեկատվության ազատության մասին»
ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, այն է՝ պահանջվող տեղեկության տրամադրումը 5-օրյա ժամկետում:

[115] Նախընտրական քարոզարշավի ծախսերի շրջանակն ընդլայնվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թ.-ի մայիսի 7-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններով և լրացումների մասին օրենքով, որի առնչվող հոդվածները ուժի մեջ կմտնեն 2022 թվականի հունվարի 1-ից՝ հայտարարագրման շրջանակում ներառելով շտաբները, վստահված անձանց՝ 10,000 ՀՀ դրամ շեմը գերազանցող փոխհատուցման ծախսերը, որոշ տրանսպորտային միջոցների վարձակալությունը և միջոցառումների կազմակերպումը:

«Ականատես» առաքելությունը հարցում է ուղարկել ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին՝ խնդրելով տրամադրել հայտարարագրումից դուրս մնացող մի շարք տեղեկություններ, ներառյալ շտաբների քանակի, օգտագործման հիմքերի (օրինակ՝ կուսակցության սեփականություն, վարձակալություն, անհատույց օգտագործում), հասցեների, ինչպես նաև աշխատողների և կամավորների քանակի ու վերջիններիս փոխհատուցման գումարների մասին: 25 գրանցված կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից) պատասխանել է ընդամենը 1-ը (Հայաստանի Եվրոպական կուսակցություն): Այսինքն՝ այս ծախսերը ոչ միայն դուրս են մնում հայտարարագրումից, այլև դրանց վերաբերյալ տեղեկություն առնվազն պետական ֆինանսավորում ունեցող կուսակցություններից հնարավոր չի եղել ստանալ նույնիսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների հիմքով:

«Ականատես»-ի դիտորդները փորձել են որոշ տեղեկություններ հավաքել հենց շտաբների ներկայացուցիչներից՝ այցելելով թվով 380 ընտրական շտաբ Երևանում և բոլոր մարզերում, որոնցից 28%-ը՝ «Հայաստան» դաշինքի, 20%-ը՝ ՔՊԿ, 15%-ը՝ ԲՀԿ, 8%-ը՝ «Պատիվ ունեմ» դաշինքի, 4%-ը՝ ԼՀԿ և 25%-ը՝ մնացած քաղաքական ուժերի:

Ըստ ձեռք բերված տվյալների՝ շտաբների մոտ 56%-ն օգտագործվել է վարձակալական հիմունքներով, մոտ 22%-ը եղել են կուսակցության համակիրի կամ անդամի կողմից անվճար հիմունքներով տրամադրված տարածքներ/գրասենյակներ, 4%-ը՝ կուսակցության սեփականություն: Դիտորդների մոտավոր գնահատմամբ՝ այցելած շտաբների վարձակալության գումարային ծախսերը կազմել են առնվազն 28,000,000 ՀՀ դրամ, ինչը փաստորեն դուրս է մնացել հայտարարագրումից օրենսդրության մեջ առկա բացի հետևանքով[116]:

Շտաբների ներկայացուցիչներից ստացված տվյալներով՝ քարոզարշավում ընդհանուր ներգրավվել են ավելի քան 600 աշխատող և 5,600-ից ավելի կամավոր, որոնց համար կատարված ծախսերը կազմել են մոտավորապես 304,000,000 ՀՀ դրամ: Սույն հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով.

- շտաբի աշխատողների դեպքում ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված 2020 թ.-ի միջին ամսական անվանական աշխատավարձի ⅔-ը Հայաստանում, որը կազմում է 189,716 ՀՀ դրամ[117] (նախընտրական հիմնադրամի բացումից սկսած՝ 20 օրվա համար 600 աշխատողի վարձատրությունը ~75,900,000 ՀՀ դրամ).
- շտաբի կամավորների դեպքում՝ սիմվոլիկ վարձատրություն ՀՀ նվազագույն աշխատավարձի կեսի չափով՝ 34,000 ՀՀ դրամ[118] (5,600 կամավորի համար՝ ~ 190,400,000 ՀՀ դրամ):

[116] Շտաբների վարձակալության արժեքների հաշվարկման նպատակով նախընտրական շտաբներ այցելությունների ընթացքում դիտորդները գնահատել են շտաբի մոտավոր մակերեսը, վիճակը, կահավորումը՝ իրենց համայնքում նմանատիպ տարածքների շուկայական միջին արժեքների համեմատ:
[117] https://armstat.am/am/?nid=12&id=08001
[118] «ՀՀ նվազագույն աշխատավարձի մասին» օրենք, հոդված 1:

Անշուշտ, հաշվարկված թիվն ամբողջական չէ, և հնարավոր է՝ տարբերվի իրական ծախսերից, սակայն ակնհայտ է, որ հսկայական ֆինանսական միջոցներ են ծախսվում մարդկային ռեսուրսներ ներգրավելու վրա, որոնք փաստացի դուրս են մնում հայտարարագրերից, ինչպես նաև համապատասխան հարկումից:

Քարոզարշավի չհայտարարագրվող ծախսերի տեսանկյունից ոչ պակաս կարևոր է երրորդ անձանց (օրինակ՝ «Ռուսաստանի հայերի միություն», կուսակցություններին կից կամ առանձին գործիչների կողմից տնօրինվող կամ ֆինանսավորվող ՁԼՄ-ներ) կողմից ֆինանսավորման խնդիրը, ինչը բավականին ցայտուն է նկատվել ԱԺ արտահերթ ընտրությունների համատեքստում: Այս ցանկում են Ռ. Քոչարյանի «Կյանք և ազատություն» գրքի պատկերով[119] և «Տիգրան Արզաքանցյան» բարեգործական հիմնադրամի և նրա պատկերով (անկախ նրանից, որ Տ.Արզաքանցյանի գրանցումը ճանաչվել է անվավեր)՝ քարոզչությանն ասոցացվող պաստառները (հիմնականում 18 քառակուսի մետր մակերեսով) ավելի քան 200 պաստառ Երևանում և մարզերում: Հիմք ընդունելով նման մակերեսով վահանակի շուկայական արժեքը (առնվազն 100,000 ՀՀ դրամ)[120]՝ ստացվում է, որ առնվազն 20,000,000 ՀՀ դրամի քարոզչության նպատակներով կատարված ծախս դուրս է մնացել հաշվետվողականությունից՝ նաև արհեստականորեն նվազեցնելով համապատասխան քաղաքական ուժերի հայտարարագրած ծախսերը: Նույնը վերաբերում է Արա Աբրահամյանի պատկերով՝ Ռուսաստանի հայերի միության պաստառին, որը փաստորեն սատարել է «Ալյանս» կուսակցությանը:

Թեև գործնականում անհնար է կարգավորել և սահմանափակել Հայաստանից դուրս գտնվող իրավաբանական անձանց՝ քարոզարշավին ներգրավումը, Հայաստանում գործող երրորդ անձանց համար սահմանափակումները խիստ անհրաժեշտ են և հրատապ: Այս համատեքստում առանձնապես կարևորվում է նաև հայաստանյան ՁԼՄ-ների իրական շահառուների հրապարակայնացման պահանջի շուտափույթ իրականացումը[121]:

Պետական վերահսկողություն

ՎՎԾ վերահսկողության գործիքակազմը և պրակտիկան բավարար չեն՝ ապահովելու պատշաճ պետական վերահսկողություն նախընտրական քարոզարշավի, ինչպես նաև կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ:

2021 թ.-ի հունիսի 20-ի ԱԺ արտահերթ ընտրություններին բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ ՎՎԾ եզրակացության համաձայն՝ «հայտարարագրերում

[119] Այս պնդումն արվում է անկախ նրանից, որ համապատասխան որոշումն անվավեր էր ճանաչվել պատճառաբանված չլինելու հիմքով:
[120] Որպես 18 քառակուսի մետր մակերեսով պաստառի միջին շուկայական արժեք՝ հաշվարկվել է 140,040 դրամը՝ հիմք ընդունելով «ԷԳԱ» ՍՊԸ-ի կողմից ԿԸՀ ներկայացված պաստառների ցանկն ու արժեքները: Տվյալ ընկերությունը ներկայացրել է 120 վահանակի առաջարկ Երևանում և մարզերում:
[121] Նախատեսված է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում 2019-2021 թթ. կատարված փոփոխություններով, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154021:

խախտումներ չեն հայտնաբերվել, և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին»[122]:

Բնականաբար, եզրակացությունը ընդգրկում է միայն օրենքով սահմանված և հայտարարագրման համար պարտադիր համարվող ծախսերը, սակայն չի ներառում ընտրությունների ընթացքում կատարված բոլոր ծախսերը: Բացի դրանից՝ այն կենտրոնանում է հայտարարագրված ծախսերի փաստաթղթային հիմնավորումների վրա՝ կրելով ավելի շատ ֆինանսական աուդիտի/ստուգման բնույթ: Ինչպես նշվել է վերևում, ՎՎԾ-ն նաև չի ստուգում նախընտրական հիմնադրամ փոխանցվող գումարների ծագման աղբյուրների հավաստիությունը և չի համադրում մուծվող գումարները դրանք փոխանցողների եկամուտների հետ:

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հայտարարագրման մասով բացահայտված խնդիրները կարելի է բաժանել երկու մասի:

1. Տեխնիկական և ձևաչափի խնդիրներ. հայտարարագրերը լրացվել և ներկայացվել են թղթային ձևով, սկանավորվել և տեղադրվել են ՎՎԾ էջում pdf ձևաչափով: Այսինքն՝ սույն տվյալները հասանելի չեն *բաց տվյալների* ձևաչափով, ինչը դժվարացնում է դրանց մշակումը և վերլուծությունը: Ավելին, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներ մուծումների և օգտագործման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվում են թղթային տարբերակով, ինչն ավելի է բարդացնում հանրային վերահսկողությունը:

2. Բովանդակային. ընտրությունների ընթացքում նախընտրական հիմնադրամների՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ներկայացված հայտարարագրերը հիմնականում լրացված են եղել՝ ըստ սահմանված կարգի, սակայն հստակ չէ ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դասակարգումը: Օրինակ՝ կուսակցություններից շատերն ունեն «գովազդային ծառայության» կամ «տպագրական ծառայության» համար կատարված վճարումներ, և դժվար է հստակ պարզել, թե Ընտրական օրենսգրքով սահմանված համապատասխան ծառայություններից հատկապես որ մեկին է վերաբերում այն:

Քվեարկության օր

«Ականատես»-ի դիտարկման համաձայն՝ քվեարկության օրն ընդհանուր առմամբ անցել է քաղաքացիների շահագրգիռ և ակտիվ մասնակցության պայմաններում: Գործընթացները հիմնականում իրականացվել են կազմակերպված, սահուն, առանց կոպիտ խախտումների: Միաժամանակ նկատվել է որոշակի լարվածություն զգալի թվով տեղամասերում՝ հիմնականում կողմնակի անձանց ներկայության, ուղղորդման դեպքերի, տեղամասերում առանձին կուսակցությունների վստահված անձանց թույլատրելի քանակի գերազանցման և քվեի

[122] https://res.elections.am/images/audit/conclussion20.06.21m2.pdf

վերահսկողության փորձերի հետ կապված: Թեև նկատվել է, որ ընտրախախտումներ կատարելուն մասնակցել են տարբեր կուսակցությունների և դաշինքների («Պատիվ ունեմ», «Բարգավաճ Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր», «Զարթոնք», «Հայ ազգային կոնգրես», «Ծիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք») ներկայացուցիչներ, դեպքերի ճնշող մեծամասնության ակտիվ պատասխանատուն եղել են «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչները:

Նախապատրաստում

Քվեարկության նախապատրաստման և տեղամասերի բացման գործընթացը հիմնականում կազմակերպվել է սահմանված ընթացակարգերին համապատասխան, առանց լուրջ խախտումների:

Ժամը 7:00-ին «Ականատես»-ը դիտորդներից զեկույցներ է ստացել դիտարկված տեղամասերի 96,3%-ից: Ընտրական տեղամասեր «Ականատես»-ի դիտորդների մուտք գործելու հետ կապված գրանցվել է ժամանակավոր խոչընդոտման 1 դեպք: Կողմնակի անձանց ներկայություն է դիտարկվել տեղամասերի 2%-ում:

Դիտարկված ընտրատեղամասերի 99.6%-ի կահավորումն ապահովել է քվեարկության գաղտնիությունը: Թվով 4 տեղամասում եղել են կահավորման հետ կապված խնդիրներ, որոնք մեծամասամբ կարգավորվել են: Դիտարկված տեղամասերի 27.5%-ն է եղել դժվարամատչելի սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների համար:

Տեղամասերի 99%-ում տվյալները պատշաճ ներմուծվել են, և տպվել է գրանցված ընտրողների թիվը հավաստող տեղեկանքը: Ընտրատեղամասերի մեծ մասը բացվել է ժամանակին. 8%-ը բացվել է մինչև ժամը 8:00-ն, 9-%-ը՝ 8:01-8:10-ը ժամանակահատվածում, իսկ 1%-ը՝ 8:11-ից հետո:

Քվեարկություն

Քվեարկությունն ընդհանուր առմամբ անցել է խաղաղ, ընտրող քաղաքացիների լայն ու շահագրգիռ ներգրավման պայմաններում: Գործընթացները հիմնականում եղել են կազմակերպված և օրենքին համահունչ: Այդուհանդերձ, որոշ տեղամասերում նկատվել է լարվածություն՝ հիմնականում կողմնակի անձանց ներկայության, տեղամասերում առանձին կուսակցությունների վստահված անձանց թույլատրելի քանակի գերազանցման, ուղղորդումների և քվեարկության վերահսկողության դեպքերի հետ կապված[123]:

[123] Ռուսաստանյան «Գոլոս» հասարակական կազմակերպության կողմից իրականացված ինքնաշխատ առցանց դիտարկման համաձայն՝ առավոտյան ժամը 8-ի դրությամբ 88 տեսախցիկ չի աշխատել, ինչի մասին «Ականատես»-ի կողմից ահազանգ է ներկայացվել ԿԸՀ-ին: Տեսախցիկների մի մասը վերականգնվել է, սակայն օրվա վերջում արձանագրվել է 68 տեսախցիկի աշխատանքի խափանում: Տեսախցիկների մոտ մեկ երրորդը (480p vs. 1080p) վատ որակով է նկարահանել:

Տեղամասերում ընտրողների գրանցման սարքավորումներին առնչվող լուրջ խնդիրներ չեն արձանագրվել: Տեղամասերի 25%-ում արձանագրվել է 1-3 դեպք, երբ ընտրողների անունները գրանցված չեն եղել սարքավորումներում, տեղամասերի 1.33%-ում արձանագրվել է նմանատիպ 4-10 դեպք և 0.33%-ում՝ 11-ից ավել դեպք: Տեղամասերի 15.6%-ում եղել է 1-3 դեպք, երբ ընտրողների անվան դիմաց առկա է եղել այլ անձի ստորագրություն: Տեղամասերի 0.67%-ում եղել է 1-3 դեպք, երբ ստորագրություն լինելու պատճառով ընտրողին չի թույլատրվել քվեարկել: Արձանագրվել է այլ անձի փոխարեն կամ բազմակի քվեարկության փորձի 2 դեպք:

Եղել են զգալի քանակով դեպքեր, երբ քվեարկության գաղտնիությունը խախտվել է, ընդ որում՝ տեղամասերի 3.33%-ում եղել է միտումնավոր խախտում: Տեղամասերի 15%-ում նկատվել է բաց քվեարկության 1-3 դեպք, 3.67%-ում՝ 4-10 դեպք և 0.67%-ում՝ 11-ից ավել դեպք: Տեղամասերի 23.67%-ում դիտվել է 1-3, 7.33%-ում՝ 4-10, և 2.67%-ում՝ 11 կամ ավել ընտանիքով քվեարկության դեպք:

Քվեարկության գործընթացում տեղամասերի 1.33%-ում նկատվել են ընտրական տեղամասերի ներսում գտնվելու իրավունք ունեցող անձանց իրավունքի խոչընդոտման դեպքեր: Ուղղորդված քվեարկություն դիտարկվել է տեղամասերի 8%-ում: 4.67%-ում նկատվել է ընտրողների կազմակերպված տեղափոխում ընտրատեղամաս: Ընտրողին օգնություն ցուցաբերելու ընթացակարգի 1-ից ավել խախտումներ արձանագրվել են տեղամասերի 4.67%-ում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները հիմնականում գրանցել են դիտորդների նկատած խախտումները տեղամասային գրանցամատյաններում, սակայն տեղամասերի 6.66%-ում մեկ կամ ավելի դեպքեր չեն գրանցվել: Տեղամասերի 2.67%-ը փակվել է ժամանակից շուտ, 94%-ը փակվել է ժամանակին, իսկ 3.33%-ը՝ 20:01-20:10-ին:

Արդյունքների ամփոփում

Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքն ընդհանուր առմամբ համապատասխանել է օրենքով սահմանված գործընթացներին. միայն տեղամասերի 1.69%-ում են եղել ամփոփման ընթացակարգի խախտումներ, իսկ հաշվարկի գործընթացի խախտումներ գրանցվել են տեղամասերի 2.03%-ում:

Տեղամասերի 1.01%-ում հաշվարկի ընթացքում ներկա են եղել կողմնակի անձինք: Մի շարք տեղամասեր հոսանքազրկվել են, սակայն, ըստ դիտորդների, դա չի խոչընդոտել արդյունքների ամփոփման և հաշվարկի սահմանված գործընթացը: Ընտրատեղամասերի 93.92%-ում

արդյունքների ամփոփման փուլի մասնակիցներին տրամադրվել է արձանագրության քաղվածքը:

Ընտրական փաստաթղթերի ու պարագաների պարկի ընդունում, քվեարկության արդյունքների ամփոփում

Տարածքային ընտրական հանձնաժողովներում էական խնդիրներ չեն արձանագրվել, և հետընտրական գործընթացների կազմակերպումն ընդհանուր առմամբ դրական է գնահատվել դիտորդների կողմից:

Դիտորդների աշխատանքի խոչընդոտման, բռնության, ճնշման կամ սպառնալիքի դեպքեր հիմնականում չեն արձանագրվել: Միակ բացառությունը եղել է թիվ 20 տարածքային ընտրական հանձնաժողովում, որտեղ փորձել են խոչընդոտել դիտորդի մուտքը հանձնաժողով՝ ասելով, որ ներկա գտնվելու իրավունք չկա: Տվյալ խնդիրն ի վերջո կարգավորվել է իրավաբանի միջնորդությամբ:

Ընտրատեղամասերից ընտրական փաստաթղթերի ու պարագաների պարկերի՝ տարածքային ընտրական հանձնաժողովներ հանձման գործընթացը հիմնականում եղել է սահուն, սակայն մի քանի հանձնաժողովներում արձանագրվել են խնդիրներ: Մասնավորապես.

- թվով 7 տարածքային ընտրական հանձնաժողովների (1, 4, 9, 11 ,18, 24, 35) սպասարկման տարածքում որոշ տեղամասերի ընտրական պարկը ներկայացվել է բաց վիճակում.
- թվով 9 տարածքային ընտրական հանձնաժողովների (9, 10, 14, 16, 17, 24, 27, 33, 35) սպասարկման տարածքում ընտրական պարկը ստորագրված չի եղել թվով 42 տեղամասային հանձնաժողովների նախագահների կողմից, թեև բոլոր դեպքերում խնդիրը տեղում շտկվել է:

Դիտարկված բոլոր տարածքային ընտրական հանձնաժողովներում ստուգվել են տեղամասերից ստացված քվեարկության արդյունքների արձանագրությունների վավերականությունն ու թվաբանական սխալները: Դրանցում ելակետային տվյալների փոփոխություններ չեն կատարվել:

Տեղամասերից ստացված տվյալների հիման վրա քվեարկության արդյունքների աղյուսակավորման գործընթացը պատշաճ կերպով իրականացվել է դիտարկված հանձնաժողովների մեծամասնությունում: Քվեարկության արդյունքների արձանագրության տվյալների մուտքագրման համակարգչային ծրագրի խափանման դեպքեր արձանագրվել են թվով 7 տարածքային ընտրական հանձնաժողովներում (2, 10,11, 21, 22, 23, 27): Տեխնիկական խնդիրը մեծամասամբ կապված է եղել լրացուցիչ ցուցակների տվյալների ներմուծման հետ:

Թվով 7 տարածքային ընտրական հանձնաժողովներում (2, 4, 8, 9, 10, 21, 35) խախտվել է քվեարկության արդյունքների աղյուսակավորման՝ օրենքով սահմանված 3-ժամյա պարբերականությունը՝ հիմնականում պայմանավորված ընտրական փաստաթղթերի ու

պարագաների ընդունման աշխատատար գործընթացով: Թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի պարագայում աղյուսակավորում կատարվել է ընդամենը 1 անգամ՝ գործընթացի վերջում:

Թիվ 9 և 24 տարածքային ընտրական հանձնաժողովներում քվեարկության արդյունքների աղյուսակավորումը չի վավերացվել տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով կամ հանձնաժողովի կնիքով:

Արձանագրված հիմնական խնդիրները ներկայացված են ստորև:

Պատկեր 5. Տարածքային ընտրական հանձնաժողովներում արձանագրված խախտումները



Ընտրողների կողմից ստորագրված ցուցակների սկանավորում

Քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների սկանավորման գործընթացի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Քվեարկության հաջորդ օրը՝ հունիսի 21-ին՝ ժամը 12:00-ից սկսած՝ դիտարկված տարածքային ընտրական հանձնաժողովներում սկսվել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակների սկանավորման գործընթացը: Տարածքի հոսանքազրկման հետևանքով միայն թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովում գործընթացը տեղափոխվել է հաջորդ օր: Ընտրական օրենսդրության համաձայն՝ հունիսի 22-ին ԿԸՀ համացանցային կայքում հրապարակվել են ընտրությունների քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները:

Արդյունքների կանխատեսումը և մասնակցության ցուցանիշներն ըստ ՁՁՀ-ի

Ձայների զուգահեռ հաշվարկի համաձայն՝ դիտորդներից ստացած տվյալները հիմնականում հաստատում են ԿԸՀ-ի կողմից հրապարակված արդյունքները և այդպիսով՝ նաև դրանց արժանահավատությունը:

ՁՁՀ տվյալներով՝ ընտրողների մասնակցությունը քվեարկությանը 49.3% է՝ +/-0.9% սխալի սահմանով (պաշտոնական տվյալներով՝ 49.5%): Անվավեր ճանաչված քվեաթերթիկները 0.38% են՝ +/-0.05% սխալի սահմանով (պաշտոնական տվյալներով՝ 0.36%):

Ստորև ներկայացված են ՁՁՀ հաշվարկները ԱԺ արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքների) համար՝ 95% վստահության միջակայքով:

Պատկեր 6. Ձայների զուգահեռ հաշվարկի տվյալները

Կուսակցության անվանում	**Քվեների տոկոս**	**Սխալի մեծություն**	**Միջակայք**	**Պաշտոնական տվյալներ**
«Արդար Հայաստան» կուսակցություն	0.33%	0.08%	0.3%-0.4%	0.31%
«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	1.49%	0.15%	1.3%-1.6%	1.54%
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	54.04%	1.87%	52.2%-55.9%	53.95%
«Ճարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	0.33%	0.05%	0.3%-0.4%	0.36%
«Ազատություն» կուսակցություն	0.13%	0.02%	0.1%-0.2%	0.14%
«Պատիվ ունեմ» դաշինք	5.34%	0.66%	4.7%-6%	5.22%
«Միասնական Հայրենիք» կուսակցություն	0.06%	0%	0%-0.1%	0.08%
Համահայկական ազգային պետականություն կուսակցություն	0.07%	0%	0.1%-0.1%	0.06%
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	1.14%	0.13%	1%-1.3%	1.22%

«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	1.04%	0.16%	0.9%-1.2%	0.95%
«Հանրապետություն» կուսակցություն	3.00%	0.31%	2.7%-3.3%	3.04%
«Հայոց Հայրենիք» կուսակցություն	1.04%	0.11%	0.9%-1.1%	1.03%
«Ազատ Հայրենիք» դաշինք	0.32%	0.05%	0.3%-0.4%	0.32%
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	3.89%	0.58%	3.3%-4.5%	3.95%
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	0.36%	0.05%	0.3%-0.4%	0.39%
«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	1.25%	0.12%	1.1%-1.4%	1.22%
«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	0.33%	0.05%	0.3%-0.4%	0.30%
«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք»	1.39%	0.12%	1.3%-1.5%	1.50%
«Ազգային օրակարգ» կուսակցություն	0.07%	0%	0%-0.1%	0.06%
«Վերելք» կուսակցություն	0.11%	0%	0.1%-0.1%	0.10%
«Ազատական» կուսակցություն	1.20%	0.15%	1%-1.3%	1.17%
Հայաստանի Եվրոպական կուսակցություն	0.22%	0%	0.2%-0.3%	0.19%
«Հայաստան» դաշինք	21.10%	1.29%	19.8%-22.4%	21.11%
«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակց.	1.41%	0.14%	1.3%-1.5%	1.49%
«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	0.32%	0.05%	0.3%-0.4%	0.31%

Հետընտրական գործընթացներ

Վերահաշվարկ

ԿԸՀ-ն քվեարկության արդյունքների վերահաշվարկ իրականացնելու դիմում է ստացել 27 տեղամասերի համար և ընթացք է տվել բոլորին: Բացի դրանից՝ տարածքային ընտրական հանձնաժողովները որոշել են վերահաշվարկ իրականացնել մի շարք տեղամասերում՝ սեփական նախաձեռնությամբ: Ի վերջո վերահաշվարկվել են ընդհանուր թվով 83 տեղամասերի քվեարկության արդյունքները: Արդյունքում թվով 33 տեղամասերում թեկնածուներին տրված *կողմ* ձայների որևէ փոփոխություն, իսկ 17-ում ընդհանրապես որևէ տվյալի փոփոխություն չի արձանագրվել[124]:

Վերահաշվարկի անցկացման ընթացակարգերի խախտումներ դիտարկված տարածքային ընտրական հանձնաժողովներում (9, 23, 25, 34, 35) չեն արձանագրվել:

Բողոքարկում

«Ականատես»-ի կողմից հետընտրական ժամանակահատվածում ներկայացվել է.

- 20 դիմում թվով 20 տարածքային ընտրական հանձնաժողովներ՝ ընդհանուր 56 ընտրախախտումների վերաբերյալ.
- 5 բողոք ԿԸՀ՝ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների վերաբերյալ, և առանձին մեկ դիմում՝ տեղամասային հանձնաժողովների անդամների՝ ընթացակարգերից անտեղյակությամբ պայմանավորված խախտումների վերաբերյալ.
- 1 հայցադիմում ՀՀ վարչական դատարան՝ դիտորդի գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում չարձանագրելու հիմքով հանձնաժողովի քարտուղարին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով.
- 1 դիմում ՀՀ գլխավոր դատախազություն թվով 21 միջադեպերի մասին, որոնք պարունակել են ենթադրյալ հանցագործության հատկանիշներ և վերաբերել են ուղղորդումներին/վերահսկվող քվեարկությանը, քվեարկության գաղտնիության խախտումներին, դիտորդների իրավունքների խախտումներին:

Հիմնական ընտրախախտումների նկարագրությունը ներկայացված է Հավելվածում:

Դիտորդական կազմակերպություններն ինչպես տարածքային ընտրական հանձնաժողովների, այնպես էլ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հերթական անգամ չեն ճանաչվել որպես դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, և ներկայացված առանձին խախտումների առնչությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել: Ավելին, ԿԸՀ-ն չի քննել «Ականատես»-ի ներկայացրած թվով 5 դիմում-բողոքները մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը՝ դրանք քննելով ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո, այն է՝ 2021 թ.-ի հուլիսի

[124] ԿԸՀ-ն ամփոփել է վերահաշվարկի արդյունքները, https://www.elections.am/News/Item/595:

26-ին, թեև նշված դիմումները էլեկտրոնային եղանակով ԿԸՀ են ներկայացվել հունիսի 25-ին և պետք է քննվեին մինչ ընտրությունների արդյունքների ամփոփումը (մանրամասները տե՛ս «Ընտրական հանձնաժողովների աշխատանքը» բաժնում):

ՀՀ գլխավոր դատախազությանը ներկայացված հաղորդման մեջ նշված 21 դեպքերից՝ քվեարկության օրը թիվ 4/46, 6/46 (2 դեպք), 9/37, 10/37 և 10/44 տեղամասերում արձանագրված ուղղորդման/վերահսկվող քվեարկության դեպքերի, ինչպես նաև նախընտրական քարոզչության շրջանակում Ն.Փաշինյանի՝ Արտաշատ քաղաք կատարած այցի ժամանակ վարչական ռեսուրսի կիրառմամբ անձանց նախընտրական հավաքին մասնակցելուն պարտադրելու դեպքի առթիվ Ոստիկանությունը կայացրել է որոշումներ քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Նշված որոշումները «Ականատես»-ի կողմից բողոքարկվել են Դատախազություն: Վերջինս մերժել է բոլոր բողոքները՝ բացառությամբ 9/37 տեղամասի դեպքի. սրան առնչվող Դատախազության որոշումը դեռ չի ստացվել: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները (բացի թիվ 4/46 տեղամասից) բողոքարկվել են ընդհանուր իրավասության դատարաններ (թվով 5 բողոք):

Ներկայացված բողոքների քննությունը դեռևս ընթացքի մեջ է: Դատախազություն ներկայացված հաղորդման մեջ նշված մյուս դեպքերի վերաբերյալ կայացված որոշումների մասին «Ականատես»-ը չի ծանուցվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ[125]

Ընտրական գործընթացների բարելավման, դրանցում ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման, արդյունքների նկատմամբ հանրային վստահության բարձրացման և արդարության հաստատման նպատակով անհրաժեշտ է վերանայել ՀՀ ընտրական օրենսդրությունը, ինչպես նաև ընտրությունների կազմակերպման և անցկացման պրակտիկան ու մոտեցումները՝ կատարելով հետևյալ փոփոխությունները:

Ընտրական հանձնաժողովներ

Տարածքային հանձնաժողովներ

1. Վերանայել տարածքային հանձնաժողովների ձևավորման կարգը՝ հաշվի առնելով համայնքների խոշորացման հիմքով պայմանավորված ընտրությունների քանակի և այդպիսով հանձնաժողովի ծանրաբեռնվածության նվազումը, մշտապես գործող կարգավիճակով պայմանավորված գրասենյակային և մարդկային ռեսուրսների

[125] Սույն զեկույցում բերված առաջարկությունները չեն ներառում 2021 թվականի մայիսի 7-ին ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները:

ծախսերի նպատակահարմարությունը, հանրային ծառայության ղեկավար պաշտոնների հետ համատեղությամբ պայմանավորված հնարավոր շահերի բախման ռիսկերը, արհեստավարժության և այլ գործոններ՝ նպատակ ունենալով նպաստելու հանձնաժողովների առավել որակյալ, անկողմնակալ և պատասխանատու գործունեությանը, հանրային վստահության բարձրացմանը, ինչպես նաև ծախսերի արդյունավետությանը:

2. Տարածքային ընտրական հանձնաժողովներում աշխատող օպերատորներին ներառել տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատակազմում կամ այլ կերպ երաշխավորել այս հանձնաժողովների անկախ գործունեությունը:
3. Կատարելագործել տարածքային ընտրական հանձնաժողովների տեխնիկական և այլ գույքային պայմանները՝ երաշխավորելու դրանց արդյունավետ աշխատանքը:
4. Ինչպես ԿԸՀ-ին, այնպես էլ տարածքային ընտրական հանձնաժողովներին վերապահել քարոզարշավի նկատմամբ առավել նախաձեռնողական հիմունքներով վերահսկողություն իրականացնելու գործիքակազմ (օրինակ՝ հանձնաժողովների կողմից ԶԼՄ-ներով նյութերի մշտադիտարկում, համայնքներում քարոզչական նյութերի տարածման կանոնների հսկում՝ պարբերական այցելությունների իրականացման միջոցով և այլն) ընտրախախտումների կանխարգելման և վերացման հարցում:

Տեղամասային հանձնաժողովներ

5. Վերանայել տեղամասային հանձնաժողովների ձևավորումը՝ փոքրացնելով կուսակցական սկզբունքով և մեծացնելով տարածքային հանձնաժողովի կողմից նշանակումների համամասնությունը՝ ստեղծելու երաշխիքներ հանձնաժողովների անդամների առավել որակյալ, անկողմնակալ և պատասխանատու աշխատանքի համար, կատարելագործելով հավաքագրման, ընտրության և վերապատրաստման գործընթացները և մեթոդաբանությունը՝ բանիմաց և արհեստավարժ կադրերի ներգրավման նպատակով:
6. Սահմանափակել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակվելու հնարավորությունը ավագանու անդամների, ինչպես նաև այն անձանց համար, որոնց աշխատանքի վայրը գտնվում է տվյալ տեղամասային կենտրոնում:

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցում

7. ԿԸՀ-ում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցման պահանջների ցանկում ներառել դրանց նախընտրական ծրագրերի ներկայացումը, կուսակցությունների վերջին երեք տարվա ֆինանսական հաշվետվությունները, կուսակցությունների հայտարարագրերը և թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերը, ինչպես նաև պահանջ, որ դրանք ընտրությունների օրվան նախորդող 12 ամիս ժամանակահատվածում (բացառությամբ նորաստեղծ կուսակցությունների) ունենան որոշակի շեմից ոչ պակաս շրջանառություն (օրինակ՝ 1,800,000 ՀՀ դրամ՝ հաշվարկված ամսական 500 ՀՀ դրամ յուրաքանչյուր (նվազագույնը 300) անդամից):

8. Կուսակցությունների անցողիկ շեմն իջեցնել առավելագույնը 2-3 %-ի (համապատասխանաբար իջեցնել պետական ֆինանսավորման համար նախատեսված շեմը)՝ նվազեցնելու ընտրողների ձայների փոշիացման հետ կապված ռիսկերը, ապահովելու խորհրդարանի առավել ներկայացուցչականությունը և խթանելու բազմակարծությունը:

Ընտրողների ցուցակներ

9. Վերջնականապես ճշգրտել ու հստակեցնել ընտրողների հասցեները՝ այդ թվում տարանջատելով նույն հասցեում հաշվառված մեկից ավելի տնային տնտեսությունները:
10. Ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումները միավորել ընդհանուր առցանց համակարգում՝ անվտանգության լրացուցիչ միջոցների կիրառմամբ՝ ապահովելով ընտրողների տվյալների ինքնաշխատ սկզբունքով համադրումը և բազմակի քվեարկության բացառումը ոչ միայն մեկ, այլև բոլոր տեղամասերում:

Դիտորդների և ՁԼՄ-ների հավատարմագրում

11. ԿԸՀ լիազորությունների շրջանակում նախատեսել հավատարմագրման համար դիմող կազմակերպությունների փաստացի գործունեությունը ուսումնասիրելու գործիքակազմ: Խոսքը մասնավորապես վերաբերում է կայքէջերին, սոցիալական ցանցերի էջերին, հրապարակային գործունեությանը: Նշվածից բացի՝ անհրաժեշտության դեպքում կարելի է ուղարկել պաշտոնական հարցումներ՝ բացահայտելու ընտրություններին մասնակցող որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի աջակցելու հանգամանքը:
12. Կազմակերպությունների հավատարմագրումը մերժելու հիմքերի ցանկում ներառել կազմակերպության կողմից տվյալ ընտրություններին մասնակցող որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի աջակցելու հանգամանքը:
13. Դիտորդ կամ ՁԼՄ ներկայացուցիչ կարգավիճակով հանդես գալը սահմանափակել դատավորների, դատախազների, քննչական մարմիններում ծառայողների, Ոստիկանությունում, Ազգային անվտանգության ծառայությունում, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, Քրեակատարողական ծառայությունում, Պրոբացիայի ծառայությունում, Փրկարար ծառայությունում ծառայողների, զինծառայողների, ընտրություններին մասնակցող թեկնածուների, ընտրական հանձնաժողովների անդամների համար:
14. Նախատեսել մեխանիզմներ՝ հավատարմագրումից հետո վերանայելու և ուժը կորցրած ճանաչելու քարոզչությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հավատարմագրումը և դրանց դիտորդների վկայականները:
15. Հստակեցնել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների կողմից դիտորդական առաքելություն իրականացնելու հայտ ներկայացնելու դեպքում (հրավերի բացակայության պարագայում) այն ԿԸՀ-ի կողմից քննարկելու և որոշում կայացնելու ընթացակարգն ու հիմքերը:
16. Ընդլայնել դիտորդական կազմակերպությունների շրջանակը՝ ներառելու իրավապաշտպան, ժողովրդավարության հարցերով զբաղվող հիմնադրամներին:

Նախընտրական քարոզարշավ

17. Սահմանել «նախընտրական քարոզարշավ» եզրույթը, որը կներառի կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), դրանց ցուցակներում ներգրավված առանձին թեկնածուների և նրանց գիտությամբ այլ անձանց ու կազմակերպությունների կողմից հօգուտ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների իրականացվող միջոցառումների ողջ համալիրը, այդ թվում՝ քարոզչության նախապատրաստման ու սպասարկման համար ծավալվող աշխատանքը (օրինակ՝ շտաբների գործունեությունը, նյութերի մշակումը, հետազոտությունները և այլն):
18. Վերանայել քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար հատկացվող վայրերի շրջանակը՝ բացառելով սահմանափակ տեսանելիությամբ/հասանելիությամբ վայրերում (օրինակ՝ շենքերի շքամուտքեր, վերելակներ) դրանք փակցնելու հնարավորությունը և ավելացնելով տարածումը առավել հանրամատչելի այլ վայրերում (օրինակ՝ տեղամասային կենտրոններ, լրացուցիչ առանձնացված տեղեր հանրային տարածքներում, թերևս 500 ընտրողին մեկ տեղ/վահանակ հաշվարկով):
19. Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների և դրանց անդամների) կամ դրանց թեկնածուների կողմից ընտրությունների նշանակման օրվանից մինչև նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկն օգտագործվող արտաքին գովազդային վահանակների ծախսերը ներառել նախընտրական հիմնադրամում:
20. ԿԸՀ-ի կողմից 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով արտաքին գովազդային վահանակների բաշխման ընթացակարգը տարածել 1-5 քառակուսի մետր մակերեսով պաստառների/վահանակների վրա՝ բաշխումը կազմակերպելով էլեկտրոնային ինքնաշխատ եղանակով. սա կապահովի համաչափ բաշխում և հնարավորինս կբացառի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի գովազդային վահանակների կուտակումը առանձին փողոցներում, թաղամասերում կամ այլ վայրերում:
21. Պատասխանատվություն սահմանել Ընտրական օրենսգրքի դրույթների խախտմամբ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար, ինչպես նաև նախատեսել օրենքի պահանջների խախտմամբ փակցված և նախընտրական քարոզարշավի ավարտից հետո մնացած պաստառների/վահանակների, տպագիր և այլ նյութերի հանման սեղմ ժամկետներ և արդյունավետ ընթացակարգեր:

Վարչական ռեսուրս

22. Արգելել համատիրությունների ղեկավարների կողմից քարոզչության իրականացումը աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս:
23. Սահմանել պաշտոնատար անձանց կողմից նախընտրական քարոզչությունը պաշտոնական գործուղումների հետ համատեղելու, ինչպես նաև գործուղման ավարտից հետո տվյալ մարզի կամ համայնքի տարածքում քարոզչություն անելու հստակ արգելք:
24. Սահմանել պետական կամ համայնքային բյուջեներով սոցիալական ապահովության նոր՝ նախապես չպլանավորած միջոցների, այդ թվում՝ պետական կենսաթոշակների, նպաստների, դրամական օգնությունների նախատեսման կամ դրանց չափի ավելացման

արգելք՝ առնվազն ԱԺ ընտրություններ նշանակելու մասին որոշումն ընդունելու պահից սկսած՝ բացառությամբ չնախատեսված և հրատապ լուծում պահանջող միջոցառումների:

25. Հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերում ներառել վարչական ռեսուրսի և դրա չարաշահման ռիսկերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված նյութեր/բաղադրիչ:

Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորում

26. Վերանայել կուսակցությունների հաշվետվողականության պարբերականությունը և ձևաչափը՝ նախատեսելով եռամսյա հաշվետվողականություն՝ ապահովելու կուսակցությունների ֆինանսական միջոցների մասին ամբողջական տեղեկատվության թափանցիկությունը ընտրությունների՝ տարվա ցանկացած ժամանակահատվածում անցկացման դեպքում:
27. Սահմանել պահանջ՝ նախընտրական քարոզարշավի նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված բոլոր ծախսերը (ներառյալ աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց վարձատրության, կամավորական աշխատանքների փոխհատուցման, տրանսպորտային ծախսեր և կոմունալ վճարումներ նախընտրական հիմնադրամների միջոցների հաշվին կատարելու և դրանք կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հաշվետվություններում արտացոլելու մասին՝ ամրագրելով նախընտրական հիմնադրամից կատարվող բոլոր ծախսերի առավելագույն սահմանաչափ:
28. Հիմնադրամների հայտարարագրերի ծախսերում հստակեցնել ծառայությունների և ապրանքների տարանջատման/դասակարգման պահանջը:

Երրորդ անձանց ներգրավման կարգավորում

29. Սահմանել «նախընտրական քարոզարշավում ներգրավվող երրորդ անձինք» եզրույթը՝ ներառելով այն կազմակերպություններին (հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ և այլն), որոնց անվանումները ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են կուսակցությունների անվանման հետ, կամ որոնց ղեկավար կազմի անդամները ամբողջությամբ կամ մասամբ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների անդամներն են, նաև այն իրավաբանական անձանց, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց գործունեության ընթացքում իրականացնում են նախընտրական քարոզչություն՝ նախընտրական քարոզարշավի համար սահմանված ժամանակահատվածում, ինչպես նաև սահմանափակել (օրինակ՝ առավելագույնը մինչև 2,000,000 ՀՀ դրամ) ու հաշվետու դարձնել (օրինակ՝ ամրագրելով 500,000 ՀՀ դրամից ավել գումարի ծախսը հայտարարագրելու պահանջ) նրանց կողմից իրականացվող ծախսերը և աղբյուրները:
30. Սահմանել նախընտրական քարոզարշավում ներգրավվելու նպատակով օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից, օտարերկրյա իրավաբանական կամ ֆիզիական անձանցից նվիրատվություններ ստանալու կամ

ստացված նվիրատվությունները նախընտրական քարոզչության նպատակով օգտագործելու արգելք նաև երրորդ անձանց համար:

Վերահսկիչ-վերստուգիչ գործառույթ

31. Վերահսկիչ-վերստուգիչ գործառույթ իրականացնող կառույցի իրավասությունների շրջանակն ընդլայնել՝ ամրագրելով հիմնադրամների մուտքերի աղբյուրների հավաստիության ստուգման, փաստացի կատարված ծախսերի, անհատույց ձեռք բերված ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու արդյունավետ գործիքակազմ, այդ թվում՝ տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից (ներառյալ բանկերից, ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող կազմակերպություններից) պահանջելու և ստանալու թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների՝ իրենց նախընտրական հիմնադրամներ կատարած մուծումների (այդ թվում՝ անհատույց ձեռք բերված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների մասին) և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, որոնց շարքում կարող են լինել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, այլ եղանակներով, օրինակ՝ շրջայցերի, մշտադիտարկումների, ստուգումների իրականացման միջոցով կուսակցությունների և թեկնածուների կողմից փաստացի կատարված ծախսերի, անհատույց ձեռք բերված ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների ստացում:
32. Սահմանել հստակ պահանջներ վերահսկիչ-վերստուգիչ գործառույթ իրականացնող կառույցի կողմից հրապարակվող՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների մասին եզրակացության բովանդակության համար՝ ներառելով ստուգման մեթոդաբանությունը, ստուգման շրջանակներում ձեռնարկված կոնկրետ միջոցները, փաստացի կատարված ծախսերը բացահայտելուն ուղղված գործողությունները, ըստ կուսակցությունների բացահայտված խնդիրները, դրանց վերլուծությունը և օրենսդրական առաջարկություններ՝ ըստ անհրաժեշտության:

Քվեարկություն

33. Ձեռնարկել գործուն քայլեր՝ երաշխավորելու բոլոր տեղամասերի մատչելիությունը տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար:
34. Վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքները սահմանափակող կարգավորումները, ներառյալ թվաքանակի սահմանափակմանն առնչվող խտրական դրույթները, ինչպես նաև լրատվական գործունեության իրականացման մեկ տարվա պահանջը:
35. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման դեպքերում գրանցամատյանում գնահատական արձանագրելու պահանջ ներկայացնելու իրավունք վերապահել նաև

ԶԼՄ ներկայացուցիչներին, իսկ հանձնաժողովի գրանցամատյանում գնահատական արձանագրելու հնարավորությունը նախատեսել նաև տարածքային ընտրական հանձնաժողովներում:

Քվեարկության արդյունքների ամփոփում

36. Ընտրությունների արդյունքների ամփոփման, ինչպես նաև բողոքարկման գործընթացներում նախատեսել մեխանիզմ՝ ըստ անհրաժեշտության իրավապահ մարմիններից ստանալու ընտրական տեղամասերում քվեարկության նախապատրաստման, քվեարկության կարգի և քվեարկության արդյունքների ամփոփման հետ կապված խախտումների վերաբերյալ քրեական վարույթների նյութերից անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և/կամ անհրաժեշտ տեղեկությունները:
37. ԿԸՀ-ի՝ քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացում նախատեսել մեխանիզմ՝ իրավապահ մարմիններից ստանալու նախընտրական քարոզարշավի և դրա ֆինանսավորման հետ կապված խախտումների վերաբերյալ քրեական վարույթների նյութերից անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և/կամ անհրաժեշտ տեղեկությունները:

Բողոքարկում

38. Ինչպես ԿԸՀ-ի, այնպես էլ տարածքային ընտրական հանձնաժողովների համար օրենքով ամրագրել առցանց՝ էլեկտրոնային ստորագրությամբ դիմում-բողոքներ ընդունելու հնարավորությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով):
39. Օրենքով ճանաչել դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների և ընտրական գործընթացներում օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ վարույթներով:
40. Դիտորդների, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և քաղաքացիների համար սահմանել համապատասխան տեղամասերում քվեարկության արդյունքները վիճարկելու իրավունք:
41. Վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին և ընթացակարգին վերաբերող իրավակարգավորումները և ապահովել ԿԸՀ-ի կողմից տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը:
42. Վերացնել ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների համար պետական տուրքի վճարման պահանջը ընտրական բոլոր գործընթացներին առնչվող հայցերով:

Ընտրական գործընթացների թափանցիկություն

43. Առավել թափանցիկ դարձնել տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը՝ ԿԸՀ կայքի համապատասխան բաժնում նախապես տեղադրելով դրանց նիստերի ժամանակացույցը և օրակարգը, իսկ նիստերից հետո՝ արձանագրությունները, տեսաձայնագրությունները և որոշումները՝ ԿԸՀ նիստերի համար ստեղծված ձևաչափի նմանությամբ:
44. ԿԸՀ կայքում պարտադիր դարձնել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերի տեղադրումը՝ դրանց ցուցակների և ֆինանսական հաշվետվությունների/հայտարարագրերի հետ մեկտեղ:[126]
45. ԿԸՀ կայքում *բաց տվյալների* ձևաչափով հրապարակումը տարածել առավել լայն շրջանակով տեղեկույթի վրա, ներառյալ ժամանակացույց, ընտրողների թիվ, մասնակցություն քվեարկությանը, արդյունքներ՝ ըստ մարզերի, ֆինանսական հայտարարագրեր և այլն:
46. Քվեարկության գործընթացը տեսանկարահանող սարքերը փոխարինել տեսաձայնագրող սարքերով և ապահովել հեռարձակվող տեսանյութերի հետադարձման ռեժիմը և ներբեռնման հնարավորությունը:

Իրավապահ մարմիններ

47. Սահմանել պահանջ առ այն, որ իրավապահ մարմինները հնարավորինս սեղմ ժամկետներում պարզեն ընտրական հանցագործությունների կատարման փաստը, ծավալները, ինչպես նաև ամրագրել Դատախազության պարտականությունը՝ անհրաժեշտության դեպքում ընտրական խախտումների քննության համար իրավասու մարմիններին (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովներ և դատարաններ) փոխանցելու ընտրական հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթների շրջանակներում ձեռք բերված նյութերից անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և/կամ անհրաժեշտ տեղեկությունները:

[126] Դեռևս ուժի մեջ չմտած փոփոխություններով սահմանվել է ծրագրերի հրապարակման հայեցողական հնարավորություն:

ՀԱՎԵԼՎԱԾ. Քվեարկության օրը արձանագրված էական խախտումների նկարագրությունը

1. Թիվ 2/42 տեղամասում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության դիտորդը ահազանգել է, որ ընտրատեղամասում գտնվող «Հայաստան» դաշինքի վստահված անձը իրեն է փոխանցել հեռախոսը, որով նույն դաշինքի մեկ այլ վստահված անձ, որն առավոտյան գտնվել է ընտրատեղամասում, պահանջել է հայտնել դիտորդի հեռախոսահամարը: Դիտորդը հրաժարվել է կատարել վերջինիս պահանջը:

2. Թիվ 2/15 տեղամասում ժամը 19:35-ից 19:40-ն ընկած ժամանակահատվածում, երբ քվեարկության սենյակում գտնվել են ընտրողներ, դիտորդներ, վստահված անձինք, տեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող այլ անձինք, «Հայաստան» դաշինքի վստահված անձը մատներով բացահայտ ցույց է տվել «24», ինչը արձանագրվել է նաև տեղամասում գտնվող տեսախցիկով: Նշված միջադեպը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: «Հայաստան» դաշինքի վստահված անձը ընդունել է, որ ինքը կատարել է նշված արարքը. նկարագրված դեպքի վերաբերյալ կազմվել է արձանագրություն:

3. Թիվ 2/15 ընտրատեղամասում ողջ քվեարկության ընթացքում որոշ ընտրողներ քվեախցիկից դուրս գալուց հետո «Պատիվ ունեմ» դաշինքի վստահված անձանց բացահայտ հայտնել են, որ քվեարկել են նրանց ասած ձևով: Մեկ այլ դեպքում ընտրողը մինչ քվեախցիկ մտնելը «Պատիվ ունեմ» դաշինքի վստահված անձանց բացահայտ ցուցադրել է քվեաթերթիկը: Քվեարկության գաղտնիության միտումնավոր խախտման նշված փաստի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

4. Թիվ 2/49 տեղամասում քվեարկության փուլում՝ ցերեկը, դիտորդն արձանագրել է կողմնակի անձի ներկայություն ընտրատեղամասում: Մասնավորապես «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք»-ի ընտրական ցուցակի թեկնածու Գևորգ Պատվականի Ենգիբարյանը այցելել է ընտրատեղամաս՝ ոչ քվեարկությանը մասնակցելու նպատակով: Նա հարցրել է դիտորդին՝ արդյոք վերջինս ՔՊԿ-ից է: Լսելով բացասական պատասխան՝ առաջացել է և գտել ՔՊԿ վստահված անձին, հարցրել ընտրատեղամասում իրավիճակի մասին: Դիտորդը զգուշացրել է, որ չի կարելի գտնվել տեղամասում, թեկնածուն պատասխանել է, որ միայն հինգ րոպեով թույլատրվում է: Այնուհետև դիտորդը թեկնածուին և հանձնաժողովի նախագահին է ցույց տվել օրենքը: Միջադեպը գրանցվել է գրանցամատյանում, և թեկնածուն դուրս է եկել ընտրատեղամասից:

5. Թիվ 4/39 տեղամասում «Հայաստան» դաշինքի վստահված անձինք, առանց տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցվելու, անընդմեջ ելումուտ են անում քվեարկության սենյակ, դրսում խոսում ընտրողների հետ մինչ նրանց քվեարկելը՝ այդպիսով ենթադրաբար ուղղորդելով նրանց:

6. Թիվ 4/46 տեղամասում ժամը 11:00-11:30-ն ընկած ժամանակահատվածում «Պատիվ ունեմ» դաշինքի վստահված անձը հակաքարոզչություն է իրականացրել այլ կուսակցությունների և

դաշինքների դեմ: Նույն անձը մոտեցել է հերթի մեջ կանգնած անձանց և, անուններով դիմելով 4-5 հոգու, ասել է, որ քվեարկեն 6-րդ համարի օգտին, իսկ 3-րդ համարի քվեաթերթիկը կարող են պատռել և/կամ իրենց հետ չտանել քվեախցիկ: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին՝ վստահված անձին նախազգուշացնելու հարցով, վերջինս մի քանի անգամ նախազգուշացրել է: Զգուշացումներից հետո վստահված անձը դադարեցրել է նման վարքագիծը: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում: Նույն տեղամասում ժամը 15:30-16:00-ն ընկած ժամանակահատվածում կես ժամ միաժամանակ ներկա են եղել «Պատիվ ունեմ» դաշինքի թվով 3 վստահված անձինք: Նրանց տվյալները արձանագրվել են գրանցամատյանում:

7. Թիվ 6/13 տեղամասում, ինչպես նաև տեսամասային կենտրոնից դուրս ժամը 10:00-ի դրությամբ նկատվել են կուտակումներ: Միաժամանակ «Պատիվ ունեմ» դաշինքի թվով 3 վստահված անձինք զրուցել են ընտրողների հետ մուտքին հարող տարածքում, ինչի վերաբերյալ դիտորդը տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին, կազմվել է համապատասխան արձանագրություն, վստահված անձանցից մեկը դուրս է հրավիրվել ընտրատեղամասից: Ժամանակ առ ժամանակ, ըստ հերթափոխի, նշված դաշինքի վստահված անձինք փոխարինել են միմյանց տեղամասային կենտրոնում և կենտրոնից դուրս: Վերջիններիս՝ ընտրատեղամասից դուրս գալը և ներս մտնելը չեն արձանագրվել հանձնաժողովի գրանցամատյանում: Արձանագրվել են նաև առանց ակնհայտ անհրաժեշտության քվեախցիկում ընտրողին օգնելու դեպքեր. մասնավորապես ընտրողը հայտարարել է, որ ունի օգնության կարիք, սակայն, ըստ դիտորդի, օգնության օբյեկտիվ անհրաժեշտություն չի եղել, միաժամանակ որևէ կերպ այդ անհրաժեշտությունը չի հիմնավորվել նաև ընտրողի կողմից: Բացի նշվածից՝ արձանագրվել է «Պատիվ ունեմ» դաշինքի թեկնածուի կարճատև ներկայություն քվեարկության սենյակում (չի արձանագրվել՝ թեկնածուն իր կամքո՞վ է հեռացել, թե՞ նախագահն է հորդորել): Այնուհետև թեկնածուն կրկին վերադարձել է ընտրատեղամաս՝ քվեարկելու համար, սակայն, անձնագիրը մոռացած լինելով մեքենայի մեջ, վստահված անձանցից մեկին խնդրել է բերել այն մեքենայից: Գտնվելով ընտրատեղամասում՝ թե՛ այդ ընթացքում, թե՛ քվեարկությունից հետո թեկնածուն վիճաբանել է հանձնաժողովի նախագահի հետ, որից հետո վերջինս դիմել է ոստիկաններին, որպեսզի թեկնածուին ուղեկցեն դուրս: Ըստ դիտորդի՝ հանձնաժողովի նախագահի՝ տարածքը լքելու հորդորից հետո՝ հինգ-տասը րոպեի ընթացքում, թեկնածուն լքել է տեղամասը: Միջադեպի արձանագրություն չի կազմվել, սակայն առկա է տեսանյութ: Այնուհետև թեկնածուն շարունակել է որոշակի ժամանակ գտնվել տեղամասային կենտրոնին հարող տարածքում: Ժամը 14:43-ի սահմաններում «Պատիվ ունեմ» դաշինքի երկու վստահված անձ հեռացվել է տեղամասային կենտրոնից հանձնաժողովի որոշմամբ՝ հանձնաժողովի բնականոն աշխատանքները խոչընդոտելու, քվեարկության բնականոն ընթացքը խաթարելու պատճառաբանությամբ:

8. Թիվ 6/46 ընտրատեղամասում թվով 3-4 անձ, մասնակցելով քվեարկությանը, չեն հեռացել տեղամասի հարակից տարածքից, մասնավորապես գտնվել են տեղամասային կենտրոնի հարակից տարածքում՝ դարպասներից ներս (տեղամասը գտնվել է մանկապարտեզում), և զրուցել ընտրության եկող այլ քաղաքացիների հետ ու վերջիններիս ասել. «գիտես՝ ինչ ես անելու», «գնանք, մեքենայի մեջ խոսենք», «գնանք շտաբ, խոսենք» և այլն: Այդ անձինք սկսել են կրել «Հայաստան» և «Պատիվ ունեմ» դաշինքների վստահված անձանց վկայականներ:

Դիտորդը այդ մասին տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին. վերջինս քայլեր է ձեռնարկել տվյալ անձանց ընտրատեղամասի հարակից տարածքից հեռացնելու համար՝ այդ թվում ներգրավելով ոստիկանության աշխատակիցներին: Դրանից հետո նշված անձինք հեռացել են տարածքից, այնուհետև որոշ ժամանակ անց նորից վերադարձել: Դիտորդի՝ խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Նշված դաշինքների այլ վստահված անձինք նույնպես քվեարկության օրը պարբերաբար զրուցել են ընտրության եկած տարբեր քաղաքացիների (յուրաքանչյուրը՝ մոտ 7 ընտրողի) հետ և հարցուփորձ անելու միջոցով տեղեկացել են՝ ում օգտին են վերջիններս քվեարկել: Դիտորդի զգուշացումից հետո հանձնաժողովի նախագահը զրուցել է նշված անձանց հետ, սակայն միջադեպը գրանցամատյանում անմիջապես չի գրանցվել, հանձնաժողովի նախագահը տեղեկացրել է, որ խախտման վերաբերյալ գրանցամատյանում գրառում կկատարվի արդյունքների ամփոփման արձանագրություն կազմելուց հետո, ինչն էլ տեղի է ունեցել: Վստահված անձինք իրենց արարքը բացատրել են այն հանգամանքով, որ ընտրողներն իրենց ծանոթներն են, բարեկամներն են, հարևաններն են: Հանձնաժողովի նախագահը զգուշացրել է վստահված անձանց դադարեցնել նման վարքագիծը: Զգուշացումից հետո վստահված անձինք շարունակել են հարցուփորձ անել ընտրողներին, սակայն ոչ նախկին ինտենսիվությամբ:

9. Թիվ 7/14 տեղամասում «Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածուն մեկ ժամից ավել գտնվել է տեղամասային կենտրոնում, ցուցումներ տվել հանձնաժողովի անդամներին, ընտրողներին, ինչպես նաև տեղամասում ներկա գտնվող այլ անձանց: Դիտորդը տվյալ դեպքի փաստով դիմել է հանձնաժողովի նախագահին և նրան առաջարկել ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը: Հանձնաժողովի նախագահը դիմել է թեկնածուին և պահանջել, որ վերջինս լքի տեղամասը: Թեկնածուն ասել է՝ փաստաթուղթ ցույց տվեք, որ թեկնածուն տեղամասում գտնվելու իրավունք չունի, նախագահը հանձնարարել է քարտուղարին զանգել և ճշտել՝ արդյոք թեկնածուն տեղամասում գտնվելու իրավունք ունի, թե ոչ: Քարտուղարի ճշտումից հետո նախագահը կրկին դիմել է թեկնածուին և հայտնել, որ թեկնածուն ընտրատեղամասում գտնվելու իրավունք չունի: Հանձնաժողովի նախագահի՝ տեղամասը լքելու հորդորը ներկայացնելուց 15 րոպե անց թեկնածուն լքել է տեղամասը:

10. Թիվ 7/8 տեղամասում ԲՀԿ վստահված անձը հանձնաժողովի անդամներին հավասար իրականացրել է կազմակերպչական աշխատանքներ: Դիտորդի հարցին, թե ինչու է այդպես ակտիվ ներգրավված հանձնաժողովի անդամի աշխատանքներում, ԲՀԿ վստահված անձը պատասխանել է, որ հանձնաժողովի նախագահի լավ ծանոթն է և այդ պատճառով օգնում է նրան: Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը տեղեկացվել են խախտման մասին, և նրանց առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը: Դիտորդի դիտարկումից որոշակի ժամանակ անց վստահված անձը հեռացել է տեղամասից, սակայն տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը և նախագահը հրաժարվել են արձանագրել խախտումը գրանցամատյանում: Հանձնաժողովի քարտուղարը (ՔՊԿ) մասնավորեցրեց, որ հանձնաժողովի նախագահի (ԲՀԿ) հետ երեկոյան կորոշեն՝ կարիք

կա՞ գրանցելու խախտման մասին դիտորդի գնահատականը, թե ոչ՝ գրանցելու անհրաժեշտությունն առկախելով միմյանց միջև հետագա փոխզիջումներից:

11. Թիվ 7/1 ընտրատեղամասում ընտրողներից մեկը քվեախցիկում նկարահանել է իր քվեարկության ընթացքը: Դրա մասին տեղեկացվել է հանձնաժողովի նախագահը, միջադեպը գրանցվել է գրանցամատյանում, դեպքի մասին տեղեկացվել է ոստիկանության աշխատակիցը:

12. Թիվ 8/47 տեղամասում դպրոցի պահակը ներկա է գտնվել տեղամասային կենտրոնում և քվեարկության սենյակում: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, որի կապակցությամբ հանձնաժողովի նախագահը պարզաբանել է՝ դպրոցի պահակը հետևում է, որ կողմնակի անձինք մուտք չգործեն տարածք: Արդյունքում մինչ ժամը 08:25 դպրոցի պահակը գտնվել է քվեարկության սենյակում և որոշ ժամանակ անց է միայն լքել նշված վայրը: Դիտորդը հանձնաժողովի նախագահին ներկայացրել է պահանջ՝ խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, սակայն այն մերժվել է նախագահի կողմից: Դիտորդի գնահատմամբ՝ հանձնաժողովի նախագահը տեղյակ չի եղել դպրոցի պահակի՝ կողմնակի անձ հանդիսանալու մասին, ուստի, դա խախտում չհամարելով, չի գրանցել դիտորդի գնահատականը գրանցամատյանում:

13. Թիվ 8/41 տեղամասում տեղամասի բացման փուլում քվեաթերթիկների մի մասը գտնվել է չհրկիզվող պահարանից դուրս: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, որի կապակցությամբ հանձնաժողովի նախագահը պարզաբանել է, որ չհրկիզվող պահարանում տեղ չի եղել, և այդ պատճառով քվեաթերթիկների որոշ մասը պահարանի կողքի սեղանին է տեղադրվել:

14. Թիվ 8/14 տեղամասում դիտորդը քվեաթերթիկների վրա նշաններ է նկատել: Արդյունքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը առանձնացրել է տարբեր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների)՝ թիվ 24, 18, 12, 25, 7, 20, 2 համարների շուրջ 30-40 քվեաթերթիկ: Դիտորդի կողմից ներկայացվել է պահանջ՝ խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, սակայն պահանջը մերժվել է հանձնաժողովի նախագահի կողմից այն պատճառաբանությամբ, որ պետք է նշված հարցը համաձայնեցնի տարածքային ընտրական հանձնաժողովի հետ: Հարցը տարածքային ընտրական հանձնաժողովի հետ պարզաբանելուց հետո հանձնաժողովի նախագահը կրկին հրաժարվել է դեպքը գրանցել գրանցամատյանում այն հիմնավորմամբ, որ դեպքի մասին հայտնել է տարածքային ընտրական հանձնաժողովին, որն ասել է՝ տվյալ փաստը արձանագրելու անհրաժեշտություն չկա, քանի որ նշված քվեաթերթիկները առանձնացված են և չեն բաժանվում ընտրողներին: Քվեարկության ընթացքում դարձյալ եղել են նշումով քվեաթերթիկներ, որոնք կրկին առանձնացվել են և չեն բաժանվել ընտրողներին: Քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ նշումով քվեաթերթիկներ չեն արձանագրվել: Նույն տեղամասում ընտրողներն առանց ընտրողների ցուցակում ստորագրելու

քվեարկել են ու հեռացել տեղամասից: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները չեն նկատել այդ դեպքը. դիտորդը հանձնաժողովի նախագահին տեղեկացրել է խախտման մասին և նրան առաջարկել ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, ինչի կապակցությամբ նրան հավաստիացրել են, որ ընտրողներին հետագայում կհրավիրեն տեղամաս և կապահովեն ընտրողների ցուցակում վերջիններիս ստորագրությունը: Դիտորդը ներկայացրել է պահանջ՝ խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, սակայն պահանջը մերժվել է հանձնաժողովի նախագահի կողմից այն պատճառաբանությամբ, որ գրանցումը պետք է համաձայնեցնի տարածքային ընտրական հանձնաժողովի հետ:

15. Թիվ 8/7 ընտրատեղամասում թվով հինգ կողմնակի անձինք, որոնք ներկայացել են որպես «Հայաստան» դաշինքի անդամներ, քվեարկության ամբողջ օրվա ընթացքում, պարբերաբար գտնվել են տեղամասային կենտրոնին հարող տարածքում և քվեարկության սենյակում: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, որի արդյունքում նշված անձինք լքել են տեղամասային կենտրոնը, սակայն հետագայում կրկին վերադարձել (նշված խախտումը պարբերական բնույթ է ունեցել): Նշվածի վերաբերյալ գրանցամատյանում գրառում կատարելու մասին պահանջ է ներկայացվել, սակայն խախտումը գրանցվել է ոչ թե գրանցամատյանում, այլ առանձին թղթի վրա: Ըստ դիտորդի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն առանձին թղթի վրա գրանցելը պատճառաբանել է «ընտրատեղամասից» նման հրահանգ ստանալու հանգամանքով: Դիտորդը հավելել է նաև, որ այլ անձանց գնահատականներ նույնպես արձանագրվել են նշված թղթում. նկարահանելիս այն եղել է գրանցամատյանին կից դրված:

16. Թիվ 9/24 տեղամասում ժամը 6:45 րոպեին չհրկիզվող պահարանը բաց է եղել: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, սակայն պարզաբանել է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները շուտ են ժամանել տեղամաս, և այդ պատճառով պահարանը շուտ է բացվել: Հանձնաժողովի նախագահը դիտորդի նկատած խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը արձանագրել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

17. Թիվ 9/44 տեղամասում «Հայ ազգային կոնգրես» կուսակցության վստահված անձը նստած է եղել քվեախցիկի կողքին այնպիսի դիրքով, որի պատճառով մասամբ խախտվում էր ընտրողների քվեարկության գաղտնիությունը, առնվազն կար այդպիսի վտանգ, և նստած դիրքը (նստած էր քվեախցիկի կողքին այնպես, որ դրա հետնամասը երևում էր) կարող էր կաշկանդել տվյալ քվեախցիկում քվեարկող ընտրողներին: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ: Վերջինս պահանջել է, որ վստահված անձը տեղափոխվի, սակայն նա հրաժարվել է կատարել նախագահի պահանջը: Նույն պահանջը ներկայացվել է նաև ոստիկանության ծառայողների կողմից, սակայն կրկին վստահված անձը մերժել է տեղափոխման պահանջը՝ հայտարարելով, որ իրավունք ունի դիտարկելու քվեարկության սենյակը: Որոշ ժամանակ անց վստահված անձը տեղափոխվել է: Խախտման մասին գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:

18. Թիվ 9/58 տեղամասում ժամը 13:00-ի սահմաններում ընտրատեղամաս է ժամանել «Հայաստան» դաշինքի վստահված անձը, որը կանգնած է եղել քվեախցիկին շատ մոտ և կարող էր տեսնել ընտրողի գործողությունները քվեախցիկում: Դիտորդի նկատողությունից հետո վերջինիս հեռացրել են քվեախցիկի մոտից:

19. Թիվ 9/37 տեղամասում «Հայաստան» դաշինքի վստահված անձը տարօրինակ վարքագիծ է դրսևորել, փորձել է ուղղորդել ընտրողներին, կանգնել է քվեախցիկի կողքին և փորձել վերահսկել ընտրողների քվեարկությունը, նույնիսկ հուշել է: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ: Հանձնաժողովի նախագահը նկատողություն է արել վստահված անձին և դիտորդին հայտնել, որ միջադեպը կրկնվելու դեպքում վստահված անձը կհեռացվի քվեարկության սենյակից: Այնուամենայնիվ, վստահված անձի ոչ իրավաչափ վարքագիծը շարունակվել է, որից հետո հանձնաժողովի նախագահը փորձել է նախաձեռնել գրավոր նախազգուշացման գործընթաց, որին համաձայն են եղել միայն քարտուղարն ու նախագահը. որոշումը չի ընդունվել: Խախտումը գրանցվել է տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

20. Թիվ 9/44 տեղամասում վստահված անձանցից մեկը նկատել է, որ մի քանի դեպքում տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների վրա անհատական կնիքներ չեն դրվել: Վստահված անձը պահանջել է, որ խախտումը գրանցվի գրանցամատյանում, սակայն հանձնաժողովի նախագահը վրդովվել է, սպառնալիքներ հնչեցրել վստահված անձի նկատմամբ:

21. Թիվ 9/24 տեղամասում ժամը 21:14-ին ձայների հաշվարկը դեռևս սկսված չի եղել: Դիտորդի կարծիքով՝ դա կապված է եղել հանձնաժողովի նախագահի և անդամների՝ քվեարկության արդյունքների ամփոփման կարգից անտեղյակության հետ:

22. Թիվ 9/11 տեղամասի շենքը եղել է երկհարկանի, և դրա երկրորդ հարկում գտնվել է մեկ այլ ընտրատեղամաս՝ 9/12-ը: 9/11 ընտրատեղամասում եղել են «Հայաստան» դաշինքի 2 վստահված անձինք: Նույն դաշինքի և՛ մեկ վստահված անձ պարբերաբար այցելել է նշված ընտրատեղամաս՝ իջնելով 2-րդ հարկից: Դիտորդը հանձնաժողովի նախագահից պահանջել է ապահովել վստահված անձանց սահմանված քանակը՝ առավելագույնը 2 հոգի: Դիտորդի նկատառումներից հետո հանձնաժողովի նախագահը ընտրատեղամասից հեռացրել է «Հայաստան» դաշինքի 3-րդ վստահված անձին: Խախտումը դիտորդի պահանջով գրանցվել է գրանցամատյանում: Դիտորդը նաև նկատում է, որ նշված դաշինքի վստահված անձինք մտերիմ են քվեատուփին հետևող հանձնաժողովի անդամի հետ, մասնավորապես նստած են վերջինիս կողքին և անընդհատ զրուցում են:

23. Թիվ 10/24 տեղամասում գտնվող վստահված անձը, որը, ըստ այլ անձանցից ստացված տեղեկությունների, «Հայաստան» դաշինքի վստահված անձ է (վկայականից դիտորդը չի կարողացել պարզել անձի ինքնությունը), պարբերաբար ընտրողներին ուղեկցել է քվեախցիկի մոտ և պատռել չօգտագործված քվեաթերթիկները: Բացի դրանից՝ դիտորդը նկատել է, որ նույն

վստահված անձը քվեաթերթիկները վերցնում է հանձնաժողովի անդամի ձեռքից և տալիս ընտրողներին: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ: Նա վստահված անձին նկատողություն է արել, ինչից հետո խախտումը չի շարունակվել: Խախտումը արձանագրվել է գրանցամատյանում, առկա է տեսանյութ:

24. Թիվ 10/24 տեղամասում «Հայաստան» դաշինքի վստահված անձն անձամբ է բաժանել քվեաթերթիկները ընտրողներին, զրուցել վերջինների հետ, նույնիսկ ուղեկցել դեպի քվեախցիկի հատված: Այս ուղղորդման մասին դիտորդը տեղյակ է պահել հանձնաժողովի նախագահին, կատարվել է համապատասխան գրառում, դիտողություն: Ըստ հանձնաժողովի նախագահի՝ վստահված անձը կպչում է ծրարներին, իբր միամտաբար եղունգը քսվում է ծրարին, գույն է տալիս: Վստահված անձը, ի պատասխան հանձնաժողովի նախագահի դիտարկման, ասել է. «Ինչի չի՞ կարելի կպնել»: Այնուհետև վստահված անձը կանգնել է քիչ հեռու, սակայն հանձնաժողովի՝ քվեաթերթիկ տվող անդամը ցուցադրաբար տվել է «24» համարի քվեաթերթիկը և ծրարը ընտրողներին, այնպես, որ դա տեսանելի լինի վստահված անձին:

25. Թիվ 10/37 տեղամասում գտնվող «Հայաստան» դաշինքի վստահված անձը պարբերաբար՝ ժամը մոտ 10:00-11:30-ն ընկած ժամանակահատվածում, կանգնել է քվեախցիկի մոտ և ժեստերով ուղղորդել ընտրողներին, ինչպես նաև փորձել թաքուն նայել քվեախցիկի մեջ և տեսնել՝ ում են ընտրում քվեարկողները: Վստահված անձը քվեախցիկների մոտից հեռացել է կեսօրից հետո՝ իր կամքով: Միջադեպերի վերաբերյալ գրանցամատյանում գրառում կատարելու պահանջ չի ներկայացվել: Ընտրատեղամասում առկա են տեսախցիկներ:

26. Թիվ 10/44 տեղամասում ընտրողներից մի քանիսը (բացահայտվել է 3 դեպք) փորձ են կատարել բարձրաձայն հրապարակայնացնելու իրենց կատարած ընտրությունը, որը կանխվել է տեղամասային հանձնաժողովի նախագահի կողմից: Նշված դեպքերից առաջինի դեպքում ընտրողը միտումնավոր պատռել է մնացած բոլոր քվեաթերթիկները և բացահայտ հայտարարել, թե ում է ընտրել՝ տալով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անվանումը, երկրորդ դեպքում ընտրողը դուրս է եկել քվեատուփի մոտից և փորձել է քվեարկել բացահայտ, իսկ երրորդ դեպքում, երբ մայրը օգնում էր որդուն, վերջինս բարձրաձայն նշել է քվեարկության արդյունքը՝ տալով թիվ 6 համարի՝ «Պատիվ ունեմ» դաշինքի անվանումը: Նշված միջադեպերի վերաբերյալ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառում կատարելու պահանջ չի ներկայացվել, քանի որ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից կանխվել են վերը նշված երեք դեպքերն էլ, սակայն կազմվել է միջադեպի արձանագրություն դիտորդի կողմից:

27. Թիվ 10/04 տեղամասում ժամը 07:45-ի սահմաններում հանձնաժողովի անդամներն արձանագրել են, որ «Հայաստան» դաշինքի «24» համարի քվեաթերթիկներից թվով 64 քվեաթերթիկի վրա առկա են եղել ավելորդ նշագրումներ: Հանձնաժողովի արձանագրությամբ դրանք մինչև քվեարկության սկիզբը ճանաչվել են անվավեր: Վերոնշյալ խախտումը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

28. Թիվ 10/17 տեղամասում ժամը 19:20-ի սահմաններում 15 րոպե և ավել ժամանակ քվեարկության սենյակում է գտնվել «Զարթոնք» կուսակցության պատգամավորի թեկնածու Սեդրակ Սարգսյանը՝ պնդելով, որ ներկայիս գործող օրենսդրությամբ՝ թեկնածուները իրավունք ունեն գտնվելու քվեարկության սենյակում: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, որի արդյունքում երկար բանավեճից հետո թեկնածուն լքել է տեղամասը: Դիտորդի գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովում:

29. Թիվ 10/51 տեղամասում զինծառայողների քվեարկության ընթացքում հրամանատարները գտնվել են քվեարկության սենյակում այնքան ժամանակ, մինչև բոլոր զինծառայողները քվեարկել են: Քվեարկության ընթացքում հրամանատարը ցուցադրել է դատարկ ծրար՝ պարզաբանելով քվեարկության կարգը: Հանձնաժողովի նախագահը որևէ կերպ չի միջամտել, իսկ դիտորդի նկատած վերոնշյալ խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

30. Թիվ 11/34 տեղամասում դիտորդը ժամը 09:30-ից ընդհուպ մինչև 10:30-ը դիտարկել է պարբերաբար ուղղորդման դեպքեր «Հայաստան» դաշինքի վստահված անձի կողմից: «Հայաստան» դաշինքի նշյալ վստահված անձը նաև գյուղապետի տեղակալ է. քվեարկելու եկած իր համագյուղացիներին ընտրատեղամասի մուտքի մոտից ուղղորդել է դեպի ընտրատեղամաս և հրահանգներ տվել տեղամասում կատարվելիք գործողությունների կապակցությամբ: Դիտորդի (ըստ նրա՝ նաև այլ անձանց) մոտ հստակ ընկալում է ձևավորվել, որ նշված վստահված անձը գտնվում էր տեղամասում, որպեսզի իրագործի համագյուղացիների քվեարկության մասին իր և նրանց միջև նախապես ձեռք բերված համաձայնությունը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն անհրաժեշտ գործողություններ չեն ձեռնարկվել: Վստահված անձը նախազգուշացվել է հանձնաժողովի նախագահի կողմից, ավելին, դիտորդի կողմից ներկայացվել է պահանջ՝ խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, պահանջը նախ մերժվել է, ապա բավարարվել, ու գրառումը կատարվել է:

31. Թիվ 11/27 տեղամասում ժամը 20:00-ին՝ ընտրության քվեարկության ավարտից հետո, դիտորդը ցանկացել է լուսանկարել գրանցամատյանը, սակայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները թույլ չեն տվել այն պատճառաբանությամբ, որ չի թույլատրվում այն լուսանկարել քվեարկության ավարտից հետո, հանձնաժողովի նախագահը այդ պահին այլ գործով է զբաղված եղել և տեղյակ չի եղել այս միջադեպից, հետագայում դիտորդները գրանցամատյանը լուսանկարահանելու պահանջ չեն ներկայացրել: Նշված միջադեպի վերաբերյալ դիտորդը կազմել է միջադեպի արձանագրություն:

32. Թիվ 14/33 տեղամասում չհրկիզվող պահարանի անմիջապես կողքին դրված են եղել երեք տուփեր, որոնց մեջ եղել են քվեաթերթիկներ: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ,

այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն անհրաժեշտ գործողություններ չեն ձեռնարկվել: Հանձնաժողովի նախագահի կողմից նշվել է, որ քվեաթերթիկները շատ են և չեն տեղավորվում չիրկիզվող պահարանի մեջ: Ներկայացվել է պահանջ՝ խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ: Հանձնաժողովի նախագահը իր պատրաստակամությունն է հայտնել՝ գրանցելու դիտորդի գնահատականը, սակայն նկատի ունենալով, որ դիտորդը հետագայում չի պնդել խախտման գնահատականը գրանցելու պահանջը, դիտարկումը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից:

33. Թիվ 14/40 տեղամասում «Հայաստան» դաշինքի անունից հանդես են եկել երեք վստահված անձինք, որոնք, ըստ դիտորդի, միաժամանակ ընտրատեղամասում են գտնվել 5-10 րոպե: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը: Հանձնաժողովի նախագահը համաձայնել է վիճակը շտկել:

34. Թիվ 18/17 տեղամասում ԲՀԿ-ից և «Հայաստան» դաշինքից ներկա է գտնվել 3-4-ական վստահված անձ: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին, որ թույլ տա նկարել վստահված անձանց գրանցումների էջը, սակայն նա թույլ չի տվել: Տվյալ խախտումը գրանցամատյանում արձանագրելու դիտորդի պահանջը մերժվել է հանձնաժողովի նախագահի կողմից:

35. Թիվ 19/17 տեղամասում ժամը 13:10-ի սահմաններում դիտորդը նկատել է, որ հանձնաժողովի անդամը մոտ 200-ից ավել կտրոնների վրա չի դրել իր անհատական կնիքը: Դիտորդն այս մասին զգուշացրել է հանձնաժողովի նախագահին, որպեսզի կատարվի համապատասխան գրառում գրանցամատյանում: Արդյունքում գրառումը կատարվել է:

36. Թիվ 19/10 տեղամասում ժամը 15:55-ի սահմաններում «Պատիվ ունեմ» դաշինքի վստահված անձը օգնել է դասավորել քվեաթերթիկները: Հանձնաժողովի նախագահը զգուշացվել է այդ մասին, ինչից հետո խախտումը վերացվել է:

37. Թիվ 19/17 տեղամասում դրոշմանիշների հերթական հարյուրյակի հաշվարկի ժամանակ ժամը մոտ 15:30-ի սահմաններում Yerevan.Today լրատվականի օպերատորը կոպտորեն քաշել է դիտորդի թևից՝ ասելով, որ խանգարում է իր նկարահանմանը: Լրացվել է միջադեպի ձևաթուղթ: Բացի դրանից՝ տեղամասում մշտապես ներկա են եղել «Հայաստան» դաշինքի 2-ից ավելի վստահված անձինք, որոնց ամեն անգամ դուրս են հանել զգուշացումներից հետո:

38. Թիվ 20/57 տեղամասում «Պատիվ ունեմ» դաշինքի վստահված անձ, միաժամանակ Շատջրեք համայնքի ղեկավար Զոյա Գևորգյանի մոտ առկա են եղել ցուցակներ՝ անձանց տվյալներով. նա պարբերաբար նշումներ է արել (անուն-ազգանուններ), ապա զանգեր կատարել: Նկատվել է համագործակցություն «Հայաստան» դաշինքի վստահված անձի հետ: Զ. Գևորգյանը ընթացիկ զանգեր է կատարել նաև հանձնաժողովի անդամներից մեկին, ապա երկուսով հանդիպել են տեղամասային կենտրոնի երկրորդ հարկում և զրուցել: Դիտորդը մոտեցել է

վստահված անձին, հարց ուղղել այն մասին, թե ինչ անվանացանկ է գրառում և ճանաչու՞մ է արդյոք այդ անձանց: Վստահված անձ Զ.Գևորգյանն ի պատասխան նշել է. «Բա իմ բնակիչներն են, չիմանա՞մ՝ ով է եկել, նշումներ եմ անում իմ համար»: Դիտորդն այս մասին տեղյակ է պահել հանձնաժողովի նախագահին՝ նշելով, որ, ըստ իրեն, տեղի է ունենում վերահսկվող քվեարկություն: Գրանցամատյանում կատարվել է համապատասխան գրառում:

39. Թիվ 20/50 տեղամասում, ժամը 08:00-ից սկսած, մոտ 700-800-ից ավել զինծառայողներ են քվեարկել ընտրատեղամասում, որոնց մի մասը՝ քվեարկության գաղտնիության խախտմամբ: Մասնավորապես սկզբում 2 զինծառայող քվեախցիկին մոտենալու ճանապարհին ծրարի մեջ են տեղադրել թիվ «24» քվեաթերթիկը և մոտեցել քվեատուփին, հետագայում երեք զինծառայող նույն կերպ բացահայտ տեղադրել են թիվ «3» քվեաթերթիկը: Միջադեպերի կապակցությամբ դիտորդը հրավիրել է տեղամասային հանձնաժողովի նախագահի ուշադրությունը, և վերջինս խոտանել է զինծառայողների քվեաթերթիկները: Այնուհետև զինծառայողներից մի քանիսը հայտարարել են, որ իրենց ցանկությամբ չեն եկել քվեարկելու և որևէ մեկի օգտին չեն քվեարկել և քվեատուփի մեջ գցել են դատարկ ծրարը: Հանձնաժողովի նախագահը այդ դեպքերում դրոշմանիշ է փակցրել դատարկ ծրարի վրա և իր ձեռքով գցել քվեատուփի մեջ, ինչը տեսագրվել է դիտորդի կողմից: Այս ամբողջ ժամանակահատվածում զինծառայողների հրամանատարը գտնվել է ընտրատեղամասում՝ դռան մոտ: Դիտորդը նաև տեղեկացրել է, որ զինվորներից մեկը մատով ցույց է տվել, թե ում պետք է քվեարկի մյուս զինվորը: Դիտորդները նաև հավելել են, որ ամփոփման նիստի ժամանակ քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում արձանագրվել է երեք դեպք, երբ թիվ 3 քվեաթերթիկը վնասված է եղել (պատռված):

40. Թիվ 24/57 տեղամասի շրջակայքում նկատվել է կասկածելի ավտոմեքենա (սպիտակ NISSAN TEANA 92AA007), որը տեղափոխել է անձանց: Դիտորդի արձանագրած պահին մեքենան վերադարձել է՝ բերելով տարեց կնոջ, իջեցրել մեքենայից և հիշեցրել «24» համարի օգտին քվեարկելու մասին՝ ասելով՝ 24, չմոռանա՛ս: Դիտորդը լուսանկարել է ավտոմեքենան: Ընդ որում՝ կասկածելի մեքենայի կողքին եղել է նաև ոստիկանության մեքենա:

41. Թիվ 26/32 տեղամասում նկատվել է կողմնակի անձ, որ չի ունեցել տեղամասում գտնվելու իրավունքը հավաստող վկայական: Վերջինիս դիտորդը նկատել է դեռևս առավոտյան ժամը 07:00-ից՝ տեղամասային կենտրոնի շրջակայքում: Հանձնաժողովի նախագահը պատճառաբանել է, որ կողմնակի անձը վստահված անձ է, ուղղակի չի կրում վկայական: Դիտորդի դիտարկման արդյունքներով՝ վերջինս հեռացվել է քվեարկության սենյակից: Քիչ անց կողմնակի անձին դիտորդը նկատել է տեղամասային կենտրոնի մուտքի մոտ (այստեղ գտնվել է մոտ 1 ժամ 40 րոպե), ինչի մասին հայտնել է հանձնաժողովի նախագահին. արդյունքում վերջինս կրկին հեռացվել է: Միջադեպի վերաբերյալ գրառում է կատարվել գրանցամատյանում, դեպքը լուսանկարվել է, առկա են նաև կողմնակի անձի լուսանկարը և միջադեպի արձանագրությունը: Ժամը 11:30-ի սահմաններում կողմնակի անձը վերադարձել է ԲՀԿ վստահված անձի կարգավիճակը հավաստող վկայականով:

42. Թիվ 26/32 տեղամասում Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավար Արտյոմ Հայրապետյանը քվեարկության փուլում ժամանակ առ ժամանակ ելումուտ է արել

ընտրատեղամաս, զրուցել հանձնաժողովի տարբեր անդամների, այդ թվում՝ նախագահի հետ, այնուհետ մոտեցել է դիտորդին և հորդորել հարցերին թեթև նայել և խնդիրներ չստեղծել, միաժամանակ հարցրել վերջինիս բնակության հասցեն: Դիտորդը պահանջել է հանձնաժողովի նախագահից վերացնել խախտումը և ապահովել իր դիտարկման վերաբերյալ գրառումը գրանցամատյանում, որը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ քարտուղարը տեղում չէ, և գրառումը կարվի ավելի ուշ: Դիտարկումը գրանցամատյանում գրառվել է, առկա է լուսանկար. ինչ վերաբերում է խախտման վերացմանը, ապա, դիտորդի կարծիքով, նախագահը զգուշացրել է համայնքի ղեկավարին, ինչն էլ հիմք է հանդիսացել, որ նա լքի տեղամասը: Դիտորդը տեսանկարահանել է միջադեպը, կազմել միջադեպի արձանագրություն: Ժամը 16:20-ի սահմաններում համայնքի ղեկավարը ներկայացել է որպես ՔՊԿ վստահված անձ՝ համապատասխան վկայականով:

43. Թիվ 29/8 տեղամասում նկատվել է, որ ԲՀԿ վստահված անձը պարբերաբար շշուկով խոսում է ընտրողների հետ մինչև վերջիններիս քվեարկությունը: Այս մասի դիտորդը կատարել է համապատասխան գրառում հանձնաժողովի գրանցամատյանում, ինչն ակնհայտորեն դուր չի եկել հանձնաժողովի նախագահ Աշոտ Վիրաբյանին: Դիտորդի կատարած դիտարկմանը համաձայն է եղել նաև ՔՊԿ վստահված անձ Էմմա Աղաջանյանը: Միջադեպից հետո ԲՀԿ վստահված անձը լքել է տեղամասը՝ հերթափոխի պատճառաբանությամբ:

44. Թիվ 30/33 տեղամասում ժամը 14:00-15:00-ի շրջանում «Պատիվ ունեմ» դաշինքի վստահված անձը ենթադրաբար ուղղորդել է մեկ ընտրողի՝ վերջինիս հետ ընտրատեղամասից դուրս ունենալով խոսակցություն, ուղեկցելով նրան մինչև տեղամասի մուտքը, այնուհետև տեղամասի մուտքի դռան վրա փակցրած ցուցակի վրա մատնանշելով համապատասխան կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը): Վստահված անձը նաև չի կրել վկայական, ինչի վերաբերյալ հանձնաժողովի նախագահը վերջինիս նախազգուշացրել է. սրա հետևանքով վերջինս սկսել է կրել վկայականը: Դիտորդը տեսանկարահանել է նկարագրված դեպքը:

45. Թիվ 34/4 տեղամասում «Իրավական մշակույթի զարգացման ինստիտուտ» կազմակերպության դիտորդ Արթուր Համբարձումյանը քվեարկության սենյակում գտնվող իրեն ծանոթ անձանց ուղղորդել է քվեարկել «Հայաստան» դաշինքի օգտին: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ դիտորդի հեռացում: Վերջինս հայտնել է, որ խախտումը կրկնվելու դեպքում դիտորդին կհեռացնի տեղամասից: Խախտման վերաբերյալ գնահատականը արձանագրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

46. Թիվ 35/2 տեղամասում ժամը 06:57-ի դրությամբ չհրկիզվող պահարանը բաց է եղել: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, սակայն հայտնել է, որ խախտում առկա չէ: Ավելին, հանձնաժողովի նախագահը մերժել է դիտորդի՝ իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցելու պահանջը:

47. Թիվ 35/55 տեղամասում քվեարկության սենյակում շուրջ հինգ րոպե գտնվել են «Քաղաքացիական պամանագիր» կուսակցության երեք վստահված անձինք: Դիտորդի պնդմամբ՝ նշված անձանց միաժամանակյա ներկայությունը միտումնավոր չի եղել: Դիտորդի՝ հանձնաժողովի նախագահին վերոնշյալ խախտման մասին տեղեկացնելուց հետո խնդիրն անմիջապես լուծվել է, և վստահված անձանցից մեկը լքել է տեղամասային կենտրոնը: Միաժամանակ դիտորդն արձանագրել է, որ քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող երկու անձ (տարբեր կուսակցությունների վստահված անձինք) չեն կրել վկայականը օրենքով սահմանված կարգով: Խախտման մասին տեղեկացվել է հանձնաժողովի նախագահը, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, որոնց արդյունքում խախտումը վերացվել է:

48. Թիվ 36/48 տեղամասում արձանագրվել են ընտրողների ուղղորդման դեպքեր «Հայաստան» դաշինքի վստահված անձանց կողմից, որոնք, ընտրողների հետ զրուցելով, նրանց ուղեկցել են մինչև քվեախցիկ, հարցրել՝ արդյոք ճիշտ են քվեարկել, թե ոչ: Նման խախտումները շարունակական բնույթ են ունեցել: Բացի դրանից՝ տեղամասում գտնվող վստահված անձանց թիվը գերազանցել է օրենքով սահմանված առավելագույն թվաքանակը, վերջիններս պարբերաբար ելումուտ են անում տեղամասում՝ առանց յուրաքանչյուր անգամ մուտքի և ելքի ժամերը գրանցելու: Տեղամասային հանձնաժողովի նախագահը որևէ գործուն քայլ չի ձեռնարկում խախտումները կանխելու ուղղությամբ: Նույն տեղամասում հանձնաժողովի անդամն արգելել է լուսանկարել գրանցամատյանի՝ հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վերաբերյալ վիճակահանության արդյունքների էջը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը: Հետագայում նախագահը թույլատրել է լուսանկարել գրանցամատյանի համապատասխան էջը: Ներկայացվել է պահանջ խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, գրառումը կատարվել է: Այս տեղամասում դիտորդը նաև անուղղակի ճնշման է ենթարկվել հանձնաժողովի անդամի կողմից: Մասնավորապես տվյալ հանձնաժողովի անդամը (կին) մեկ այլ անձի հետ խոսակցության ժամանակ լսելի ձայնով ասել է, որ դիտորդին պետք է գտնել Վայքում: Միջադեպը գրանցամատյանում գրանցելու պահանջ չի ներկայացվել, քանի որ դիտորդը նպատակահարմար չի գտել կրկին դիմել հանձնաժողովի նախագահին՝ իրավիճակը չսրելու համար: Արդեն քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ նույն հանձնաժողովի անդամը վիրավորել է դիտորդին:

49. Թիվ 38/47 տեղամասում ժամը 11:45-ի շրջանում դիտորդը արձանագրել է, որ տեղամասում շուրջ 10 րոպե միաժամանակ գտնվել են «Հայաստան» դաշինքի 3 վստահված անձինք: Դիտորդը նախագահին առաջարկել է վերացնել խախտումը, սակայն վերջինս ցուցաբերել է անգործություն: Որոշ ժամանակ անց երկու վստահված անձինք հեռացել են՝ նշելով, որ վերադառնալու են: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին խախտման վերաբերյալ իր գնահատականը գրանցամատյանում գրանցելու համար, սակայն վերջինս մերժել է նրա պահանջը՝ նշելով, որ չնչին միջադեպ է: Ամփոփման նիստի ընթացքում տեխնիկական սարքը սպասարկող մասնագետը շարունակել է մնալ քվեարկության սենյակում: Հանձնաժողովի

նախագահը տեղեկացվել է խախտման մասին, և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն անհրաժեշտ գործողություններ չեն ձեռնարկվել: Հանձնաժողովի նախագահը պնդել է, որ տվյալ անձը պետք է մնա քվեարկության սենյակում: Ներկայացվել է պահանջ՝ խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, սակայն այն մերժվել է հանձնաժողովի նախագահի կողմից՝ այդ պահին զբաղված լինելու պատճառաբանությամբ: Դիտորդը ընդգծել է, որ տեխնիկական սարքը սպասարկող նշված մասնագետը քվեարկության ընթացքում ուղղորդել է ընտրողներին՝ նշելով, որ ընտրեն թիվ «24» քվեաթերթիկը: Դիտորդի գնահատմամբ՝ երկու դեպքում էլ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից դիտորդի կարծիքը չգրանցելու դիտավորություն չի եղել: